Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

4358

83
2-44

02 NOV 2009
В. Е. БУДАГОВЪ
Шкафъ
Полка
Книга

ԶՈՒԼՀԱԿՆԵՐ

Ռ. ՀԱՈՒՊՏՄԱՆԻ (Թարգ. ռուս. Լ. ԳՈՒՐԵՎԻՉԻ)

Դրամա 40-ական թուականից.

Թարգ. տ. Ս. ԱՐՏԵՄԵԱՆ.

№ 16

Ս.-ՊԵՏԵՐԲՈՒՐԳ
«ՊՈՒՇԿԻՆԵԱՆ ՏՊԱՐԱՆ»
1905

28 JUN 2005

83
Z-44
սպ.

ԶՈՒԼՀԱԿՆԵՐ

Ռ. ՀԱՌԻՊՄՏԱՆԻ (Թարգ. Լ. Գուրեվիչի)

Դրամա 40-ական թռուցկանից.

Թարգ. տ. Ս. ԱՐՏԵՄԵԱՆ.

ՀԱՅԿ ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.Հ. Центральная Библиотека
7/XI 1922
имени Мясникяна
Ա. Մ. ԱՍԻՅԱՆԻ ԱՆՎԱՆ

Ս.-ՊԵՏԵՐԲՈՒՐԳ
«ՊՈՒՇԿԻՆԵԱՆ ՏՊԱՐԱՆ»
1905

11 06 2013

4358

Дозволено цензурою С.-Петербургъ 4 Мая 1905 г.

„Пушкинская Скоропечатня“ С.-Петербургъ, Лештуковъ 4.

ԱՌԱՋԻՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԵԱՆ ԱՆՁԻՆՔ.

Գործարանատէրերի խումբ.

Դրէյսիգեր, կտաւի գործարանատէր.
Պֆէյֆեր, էքսպեդիտոր.
Նէյման, գանձապահ (կասսիր). | Դրէյսիգերի մօտ.
Աշակերտ. |

Ջուլհակների խումբ.

Բեկկեր.
Ծեր Բաումերտ.
Ռէյման.
Հէյբեր.
Առաջին ջուլհակ.
Առաջին կին ջուլհակ.
Ծեր ջուլհակ.
Փոքրիկ տղայ.
Մի քանի այր և կին ջուլհակներ.

ԱՌԱՋԻՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ.

Ընդարձակ մոխրագոյն ծեփած սենեակ Դրէյսիդերի տանը, Պեսերսվալդայում։ Պատրաստի կտաւները յանձնելու տեղ. ծախ կողմը առանց վարագոյրի պատուհան, եւեւի կողմում ապակեայ դուռ, աջ կողմում նոյն տեսակ ապակեայ դուռ, որտեղից բոլոր ժամանակ ներս ու դուրս են անում այր և կին ջուլհակները և երեխաները։ Աջակողմեան պատի, ինչպէս և միւս պատերի, ամբողջ երկարութեամբ կըտաւ դարսելու համար դարակ է շինուած։ Այդ պատի առաջ դրուած են նըստարաններ, որոնց վերայ, եկող ջուլհակները, դարսում են իրանց բերած ապրանքը։

Ջուլհակները հերթով առաջ են գալիս, և ներկայացնում են իրանց ապրանքը զննել տալու համար։

Էքսպեդիտոր Պֆէյֆերը կանգնած է մէջ սեղանի եւեւը, որի վերայ ջուլհակները դարսում են իրանց բերած զննելիք ապրանքը։ Գործուածքները քննելու համար, նա ձեռքին բռնած ունի կարկին և խոշորացոյց։ Երբ նա վերջացնում է ապրանքը քննելը, ջուլհակը իւր գործուածքը դնում է կշեռքի վերայ, ուր դրասենեակի աշակերտը պտուգում է քաշը։ Կշեռքից վերցրած ապրանքը, նոյն աշակերտը, յետ է քաշում դէպի դարակը։ Էքսպեդիտոր Պֆէյֆերը ամէն անգամ բարձր ձայնով ասում է վճարելիք գինը կասսիր Նէյմանին, որը նստած է փոքր սեղանի մօտ։ Մայիսի վերջի տօթ օրերից մէկին, ժամը 12-ն է։ Ջուլհակների մեծամասնութիւնը յիշեցնում է լարուած ուշադրութեամբ իրենց մահուան դատավճիռը սպասող մեղադրեալներին, միևնոյն ժամանակ նրանց վերայ նկատւում է մի տեսակ ճնշուածութիւն, որը յատուկ է մուրացկանին, որը շարունակ ստորանալով ամենքի առաջ և զղջալով որ ինքը մարդկանց համար հազիւ տանելի է, սովորել է ըստ կարելւոյն նսեմանալ։

Ամենքի երեսը արտայայտում է անյոյս մաշող մտատանջութեան դրոշմը։ Տղամարդկանց մեծամասնութիւնը միմիանց նման են, կարճահասակ, դանաւ, նրանք յիշեցնում են ճնշուած ուսուցիչների, ներս ընկած կրծքով, հազացող և գունատ դէմքերով։ Դրանք ոստայնի դազգեահի իսկական զաւակներ են, որոնց ծնկները, շարունակ նստելուց, կորացել են։ Նրանց կանայքը առաջին հայեացքից այնքան էլ տիպիքական չեն։ Սրանք մաշուած, հալածուած ընկճուած էակներ են, մինչդեռ տղամարդիկը դեռ կրում են մի ինչ որ թշուառ արժանապատուութեան նմանութիւն։ Նրանք ցընցոտիների մէջ են, այն ինչ տղամարդկանց հագուստը խնամքով կարկատուած է։ Ջահել աղջիկներից ոմանք նոյն իսկ գրաւիչ են։ Նրանք աչքի են ընկնում մոմի պէս գունատ դէմքով, քնքոյշ կազմուածքով և խոշոր դուրս ցցուած մելամաղձոտ աչքերով։

Կասսիր Նէյման. (Փողերը համարելով) Մնում է տասն և վեց արծաթ ղրոշ և երկու պֆեննինգ։

Առաջին կին ջուլհակ. (Երեսուն տարեկան սաստիկ մաշուած կին. դողդոջուն ձեռքերով փողերը քաշելով) Մեծապէս շնորհակալ ենք։

Նէյման. (Տեսնելով որ կինը չի հեռանում) Ի՞նչ է չլինի թէ պակաս է էլի։

Առաջին կին ջուլհակ. (Ցուզուած ազերսական ձայնով) Գոնէ մի քանի պֆեննինգ կանխավճար տուէք, ճշմարիտ շատ հարկաւոր է.

Նէյման. Ինձ էլ մի քանի հարիւր տալեր է հարկաւոր! (վճարելով միևնոյն ժամանակ մի ուրիշ ջուլհակի, կարուկ) Կանխավճար կարող է տալ միմիայն տէրը, Դրէյսիդերը։

Առաջին կին ջուլհակ. Չէ՞ր կարելի, որ ես պ. Դրէյսիդերի հետ խօսէի.

Էքսպեդիտոր Պֆէյֆեր. (Նախկին ջուլհակ, ջուլհակների բնորոշ գծագրութիւնը սրա վերայ պարզ նկատւում է, թէպէտ դիրուկ է, լաւ հագնուած, երեսը մաքուր սափրած, շարունակ բանոթի է քաշում, կոպիտ բպտւում է) Ուրեմն պարոն Դրէյսիդերին էլ ուրիշ գործ չունի, բացի այդ տեսակ մանր բաներով զբաղուելուց։ Իսկ մենք ինչացու ենք այստեղ։ (կարկինով չափում է և խոշորացոյցով զննում) Ֆու, ինչ սաստիկ փչում է! (պարանոցը ծածկելով վզնոցով) Դուռը ծածկեցէք, երբ ներս էք մտնում։

Աշակերտը. (Բարձր, Պֆէյֆերին) Ասես, չասես, նրանց համար միևնոյն է!

Պֆէյֆեր. Դէհ, վերջացաւ! Դրէք կշեռքի վերայ! (ջուլհակը կտորը դնում է կշեռքի վերայ)։

Գոնէ մաքուր գործել կարողանայիք... դարձեալ հանգոյց (կշկռտ)..... քիչ էր մնում չնկատէի։

Լաւ ջուլհակը միթէ այսպէս բան կանի։

Բեկկեր. (Որը այդ միջոցին ներս էր մտել. երիտասարդ ջուլհակ արտասովոր ուժեղ կազմուածքով, ագատ, մինչև անգամ լկտի ձևերով։ Նրա երևալուց Պֆէյֆերը, Նէյմանը և Աշակերտը խորհրդաւոր հայեացք են ձգում միմիանց վերայ) Գրողը տանի ա՛յ, համա շոգ եմ ասում է՞! այստեղ ինքը շապիկ քրտինք կարելի է թափել։

Առաջին ջուլհակ. (Կամացուկ) Փոթորիկ չբարձրանա՛յ...

Ծերունի Բաումերտ. (Հրելով առաջ է գալիս աջակողմեան դռնից։ Դրան ետևում երևում է ուս-ուսի տուած սպասող ջուլհակների մի խումբ։ Ծերունին առաջ է անցնում և դնում է իւր կտորը Նստարանի վերայ Բեկկերի մօտ։ Նստում է, և սրբում քրտինքը) Օ՜հ, այստեղ վերջապէս կարելի է հանգըստանալ։

Բեկկեր. Հանգստանալը փողից էլ թանկ արժէ։

Ծերունի Բաումերտ. Քիչ փող ունենալ—այդ էլ վատ չէ։ Բարի աջողում Բեկկեր։

Բեկկեր. Բարի լոյս, Բաումերտ պապիկ, ով գիտէ էլի ինչքան ժամանակ պիտի սպասենք այստեղ։

Առաջին ջուլհակ. Ինչ կայ որ. ջուլհակը մի ժամ էլ կըսպասի, մի օր էլ կսպասի, հ՜ը մեծ բան է կարծես ջուլհակը։

Պֆէյֆեր. Է՜յ, դուք, կամաց, մարդ իր ասածն էլ չի լսում։

Բեկկեր. (Կամաց) Երևում է էլի ծախ կողքի վրայ է վերկացել։

Պֆէյֆեր. (Իրեն առաջին կանգնած ջուլհակին) Քանի անգամ ասել եմ ձեզ. մաքուր պէտք է գործել. այս զզուելի բան է։ Այս կտորում մատի հաստութեան կշկոռներ կան։ Ցարդ, կտորանք, և էլ ինչ աղբի մնացորդ ասէք, այստեղ կայ։

Ջուլհակ Բէյման. Որովհետև քթառիչքները նոր են (щипчики)։

Աշակերտ. (Քաշելով կտորը) Քաշն էլ պակաս է։

Պֆէյֆեր. Համա ջուլհակներ էք է՜. մանածն էլ ափսո՞ս է, որ մարդ սրանց տայ, Տէր Աստուած! Իսկ իմ ժամանակը ափսոս չէ՞ր, վարպետս ինձ ցծյց կտար, եթէ ես այսպէս բանէի. այն ժամանակ ջուլհակութիւնը ուրիշ բան էր։ Այն ժամանակ պահանջում էր որ ջուլհակը իսկապէս իրա գործը իմանայ։ Իսկ այժմ կարծես այդ հարկաւոր չէ։

Բէյմանին տասը արծաթ դրոշ!

Ջուլհակ Բէյման. Զէ՞ որ կտորին մի ֆունտ կորուսա է հաշուում։

Պֆէյֆեր. Դէ՜հ, էլ ժամանակ չկայ, վերջացաւ. ձերը ի՞նչ է։

Ջուլհակ Հէյրեր. (Ցանձնում է իւր գործուածքը, մինչդեռ Պֆէյֆերը հետազոտում է կտորը, նա մօտենում է վերջինին, և կիսաձայն բայց եռանդոտ) Ներեցէք խնդրեմ, պարոն Պֆէյֆեր, ես խոնարհաբար կխնդրեի ձեզ դուցէ դուք ցանկանաք այնքան բարի լինել, և կամենաք դէպի ինձ ողորմած լինել և նախկին վեր առած փողս այս անգամ չհաշուել։

Պֆէյֆեր. (Կարկինով չափելով և կտորը ձեռքին նայելով հեգնաբար) Ոնց չէ! քու հօրն ողորմի. չէ՞ որ աշխատած գնի կէսը առաջուց վերցրել էք արդէն.

Ջուլհակ Հէյրերտ. (Առաջուայ տօնով) Ես դեռ այս շաբաթ էի ցանկանում պարաքս վճարել, բայց անցեալ շաբաթ երկու օր կալուածատիրոջ մօտ եմ բանել։ Հիմայ էլ կինս է հիւանդ պարկած։

Պֆէյֆեր. (Գործուածքը դնելով կշեռքի վերայ) Դէհ. դէհ, սրան նայեցէք, տեսէք ինչ գործ է կատարած։ (գննելով մի նոր կտոր) Այս ծայրը ինչ է, մէկ տեղ նեղ է, միւս տեղ լայն։ Այստեղ թելանը (утокъ) անչափ ծգուած է, այնտեղ աւելորդ է թողած. մի դիւյիմում հազիւ եօթանասուն թել լինի. մնացածը ո՞ւր է. սա՞ է ձեր բարեխղճութիւնը։ Լաւ է, լաւ է, շատ լաւ է, ապրես!

Ջուլհակ Հէյրեր. (Կանգնած է ընկճուած և անօգնական, արտասուքները խեղդելով)։

Բեկկեր. (Կիսաձայն Բաումերտին) Սրանց որ մնայ, մանածն էլ կուզեն մեր փողով առնենք։

Առաջին կին ջուլհակ. (Թրը մի փոքր հեռանալով կասայից և նոյն տեղում ժամանակ առ ժամանակ շուրջն է նայում յառած աչքերով, կարծես օգնութիւն խնդրելով. յանկարծ սիրտ է առնում և նորից ալերսելով դառնում է կասիրին) Ինձ շատ է հարկաւոր... ես մինչև անգամ չգիտեմ... եթէ ինձ հիմայ էլ առաջուց փող չտաք... Օ, Տէր Աստուած։

Պֆէյֆեր. (Բղաւում է) Անվե՜րջ վրավրսոց։ (Humbe)

Գոնէ Աստծուն հանգիստ թողնէիք։ Ուրիշ ժամանակ Աստուած ձեր միտքը չի գալիս, աւելի լաւ կլինէր, որ ձեր ամուսնու համար խնամք տանէիք, որ ամբողջ օրերով գինետներում ընկած չլինէր։ Առաջուց մենք ոչ օրի չենք կարող փող տալ։ Մենք պարտաւոր ենք հաշիւ ներկայացնել, փողը մերը չէ, յետոյ մեզ վրայ կհաշուեն։ Ով աշխատասէր է, իր գործը լաւ հասկանում է և Աստծու երկիւղը միշտ սրտումն է կատարում իր գործը նա կարիք չի ունենում, առաջուց փող վերցնելու։ Դէհ, վերջացաւ, բաւական է!

Նէյման. Այստեղի ջուլհակը թէկուզ հէնց չորս անգամ աւելի ստանայ նա բոլորը խսկոյն կվատնի և դեռ պարտքեր էլ կանի։

Առաջ. կին ջուլհակ. (Բարձր, կարծես ընդհանուրի բարեխղճութեան դիմելով) Ես հօ բոլորովին ծոյլ չեմ, այլ ուղղակի աշխատելու անընդունակ եմ դարձել։ Ինձ հասանելիք վարձից առանց այն էլ արդէն երկու անգամ դուրս են եկել. իսկ մարդս, նա հաշուից դուրս է եկել... Նա ցիրտաու հովի մօտ էլ է գնացել բժշկուելու, բայց նա էլ չօգնեց նրան... ուժով ոչինչ չի կարելի անել։ Ճշմարիտ, մենք աշխատում ենք, որքան հնարաւորութիւն կայ։ Ես քանի շաբաթ է աչք չեմ խփել։ Ոսկորներս ցաւում են։ Եթէ գոնէ մի քիչ ոյժ առնեմ, գործը գալ ձեալ լաւ կերթայ։ Իսկ դուք դէպի ինձ ներողամիտ եղէք։ (Համոզիչ շողոքորթ խնդրանքով) Ես ձեզ շատ եմ խնդրում. թոյլ տուէք որ այս անգամ գոնէ մի քանի գրոշ տան ինձ։

Պֆէյֆեր. (Նրա վերայ ուշադրութիւն չդարձնելով) Ֆիդլերին տասն և մէկ արծաթ գրոշ.

Առաջ. կին ջուլհակ. Գոնէ մի քանի գրոշ հացի փող։ Գիւղացին էլ ապառիկ չէ տալիս։ Մին սիրու երեխաներ ունեմ...

Նէյման. (Կիսաձայն, կիսակատակ կիսալուրջ, դառնալով աշակերտին)

Մեր ջուլհակը տարուայ գլխին

Ունի նորից մի զաւակ
Ալէ, վալէ, ալէ, վալէ
Պուֆ, պուֆ, պուֆ, ունի սիրուն մի զաւակ։

Աշակերտ. (Նէյմանին նոյն կերպ պատասխանելով) Եւ այդ ստանի նուտը վեց շաբաթ կոյր է ապրում։ (վերջացնելով երգի եղանակը)

Տրա լա լա, տրա լա լա, բում բում բում։

Ջուլհակ Բէյման. (Զվերցնելով կասսիրի համարած փողերը) Մինչև այժմ մենք չէ՞ որ ամէն մի կտորի համար ստանում էինք տասներեք և կէս։

Պֆէյֆեր. (Գոչելով իւր տեղից) Եթէ այդ վարձատրութիւնը ձեզ չի բաւականացնում, Բէյման, դուք պէտք է միայն մի խօսք ասէք։ Ջուլհակներ շատ կան, նա մանաւանդ ձեզ նմանները։ Վարձը կատացուի լրիւ, եթէ քաշն էլ լրիւ կգայ։

Ջուլհակ Բէյման. Քաշը պակաս է, ի՞նչ է...

Պֆէյֆեր. Երբ որ դուք գործուածքը առանց արատի կբերէք, այն ժամանակ վարձից էլ ոչինչ չեն պակասեցնիլ։

Ջուլհակ Բէյման. Ի՞նչ արատների մասին էք խօսում։ Այդպիսի բան չկայ։

Պֆէյֆեր. (Զննելով) Ով լաւ է գործում, նա լաւ էլ ապրում է։

Ջուլհակ Հէյբեր. (Որը շարունակ կանգնած Պֆէյֆերի մօտ, օրպէսզի մէկ անգամ ևս բարեհաճ բոպէ որսայ։ Պֆէյֆերի խօսելուց նրա երեսի վերայ արտայայտուում է քծնող ժպիտ. այժմ նա մօտենում է Պֆէյֆերին և խօսում է առաջուայ եղանակով) Խոնարհաբար կխնդրէի ձեզնից, պարոն Պֆէյֆեր, եղէք այնքան ողորմած, համաձայնուեցէք այս անգամ իմ վճարից ոչինչ չհանել։ Կինս մեծ պատից սկսած անկողնում պարկած է. հիւանդութիւնը նրան բոլորովին կուչ է ածել։ Կած պատրաստող կանանց էլ պէտք է վճարել։ Եւ դրա համար...

Պֆէյֆեր. (Բռնութիւն քաշելով) Հէյբեր, միայն դուք չէք այստեղ. միւսներն էլ են սպասում։

Ջուլհակ Բէյման. Ինչ հէնք որ դուք տուել էք, այն եմ գցել մեքենայի վերայ այն էլ վերցրել ենք: Ձեզնից ինչ մանած որ ստացել եմ նոյնպիսին վերադարձնում եմ:

Պիէյֆեր. Եթէ մեր հէնքերը ձեզ դուր չեն գալիս, կարող էք չվերցնել: Շատ շատերը կան, որոնք իրանց ոտերին նեղութիւն կտան, և կվազեն այդպիսի աշխատանքի ետևից:

Նէյման. (Բէյմանին) Ի՞նչ է, փողը չէ՞ք կամենում վերցրնել:

Ջուլ. Բէյման. Ի՞նչ էք տալիս.—ինձ աւելի պիտի հասնի:

Նէյման. (Բէյմանի վերայ այլ ևս ուշադրութիւն չդարձնելով) Հէյբերին տասը արծաթ գրոշ, հինգը առաջուց վերցրած է, մնում է հինգը:

Ջուլ. Հէյբեր. (Մօտենալով նայում է փողերին, գլուխը շարժում է, կարծես իւր աչքերին չհաւատալով և հանդարտ հանգիստ փողերը քաշում է իրան) Օհ, Տէր Աստուած, Տէր Աստուած! (հառաչելով) ա՜յ թէ ինչ օրի հասանք...

Ծերունի Բաումերտ. (Դառնալով Հէյբերին) Հա, հա, հա, Ֆրանց, այստեղ շատ անգամ են մարդու հառաչել տալիս:

Ջուլհակ Հէյբեր. (Հաղիւ խօսելով) Ցաւը այդ է միայն, տանն էլ աղջիկս է պարկած, գոնէ նրա դեղի փողը դուրս գար.

Ծերունի Բաումերտ. Նրա ի՞նչն է ցաւում:

Ջուլ. Հէյբերտ. Բանը նրանումն է, որ նա մանկութիւնից հիւանդոտ է, հիշտ ասած չեմ իմանում... բայց քեզնից ինչ թագցնեմ. նա հէնց այդ հիւանդութիւնով է աշխարհ եկել և այդ կեղտոտ արիւնը այժմ դուրս է գցում:

Ծեր. Բաումերտ. Ամեն մէկի տանը մի այդպիսի բան կայ: Որտեղ աղքատութիւն կայ, այնտեղ և ցաւը ցաւի ետևից, ոչ դատաւոր կայ, և ոչ փրկութիւն:

Ջուլ. Հէյբեր. Այդ ի՞նչ է աղլուխումդ:

Ծերունի Բաումերտ. Տանը այլևս ուտելու բան չի մընացել, ես էլ ասացի որ փոքրիկ շնիկը մորթեն. բայց նրանից էլ խելքս բան չի կտրում, նա էլ երկար ժամանակ քաղ-

ցած էր: Այնպէս սիրուն գեղեցիկ շնիկ էր, ես ինքս չկարողացայ նրան մորթել. սիրտս չտուեց:

Պիէյֆեր. (Նայելով Բեկկերի բերած կտորը, գոռում է) Բեկկերին տասներեք և կէս արծաթ գրոշ:

Բեկկեր. Այս ի՞նչ է նշանա՛ում. դա ողորմութիւն է և ոչ թէ վարձ:

Պիէյֆեր. Ով հաշիւը վերջացրել է, նա թող դուրս գնայ, թէ չէ այստեղ շարժուելու տեղ չկայ:

Բեկկեր. (Շրջապատողներին. ձայնը չցածրացնելով) Սա ոչ այլ ինչ է, եթէ ոչ խղճալի ողորմութիւն: Առաւօտուանից մինչև գիշերուայ կէսը տանջուիր, ամբողջ տան և ուրթ օր դաղգեահի տակ կռացած և շոգից ու փոշուց թմրիր, և այդ բոլոր արիւն քրտնքի վարձը տասներեք և կէս արծաթ գրոշ է:

Պիէյֆեր. Ի՞նչ ես փնթփնթում:

Բեկկեր. Ցամենայն դէպս, դուք չէք իմ բերանս փակողը:

Պիէյֆեր. (Վեր թռչելով և գոռալով) Այդ մենք դեռ կտեսնենք: (մօտենում է ապակեայ դրանը և գոչում դէպի դրասենեակը) պ. Դրէյսիգեր, Պ. Դրէյսիգեր, բարի եղէք, եկէք այստեղ!

Դրէյսիգեր. (Մտնում է ջահել երես, քառասուն տարեկան մի մարդ. գէր, ծանր թնչացող, խիստ դէմքով) Ի՞նչ է պատահել այստեղ Պիէյֆեր.

Պիէյֆեր. (Զարացած) Այ, Բեկկերը ձայնը չի կտրում.

Դրէյսիգեր. (Բռնելով վսեմ դիրք գլուխը յետ է գցում և անընդհատ նայում է Բեկկերին, քթի ծակերը լայնացնելով) Հ՞ը, Բեկկեր... (Պիէյֆերին), սա նա՞ է... (ծառայողները գլխի շարժումով դրական պատասխան են տալիս):

Բեկկեր. (Ցանդուզն) Այո, այո պ. Դրէյսիգեր, (ցոյց տալով իր վրայ) սա, նա է, (ցոյց տալով Դրէյսիգերի վրայ) իսկ սա, սա է:

Դրէյսիգեր. (Զայրացած) Ի՞նչ է յանգնում այս մարդը:

Պիէյֆեր. Ոտը շատ է առաջ դրել, դեռ շատ երկար

պէտք է սառոյցի վրայ պարկի, որպէսզի խելքը գլուխը հաւաքուի։

Բեկկեր. (Կոպիտ) Այ դու Թշուառական, լեզուդ քեզ քաշիր! Երևի մայրդ փռնաւելի վերայ դնալով սատանայի հետ է խառնուել, որ քեզանից այդպէս սատանայ է դուրս եկել։

Դրէյսիդեր. (Կատաղաբար բառաչելով) Լռիր, իսկոյն լռիր թէ չէ... (դողալով բարկութիւնից երկու քայլ առաջ է գալիս)։

Բեկկեր. (Վճռողական կերպով) Ես խուլ չեմ որ գոռում ես. այնպէս էլ դեռ լաւ եմ լսում!

Դրէյսիդեր. (Իրեն գսպելով, հարցնում է լրջորէն և հանդարտ ձևանալով) Սա ի՞լ էր մասնակցում։

Պֆէյֆեր. Չէ, սա Բիլլաուի ջուլհակներից է. որտեղ մի անկարգութիւն լինի նրանք էլ միշտ այնտեղ են.

Դրէյսիդեր. (Դողալով) Ահա ձեզ ինչ եմ ասում։ Եթէ մէկ էլ պատահի, որ լուսամուտներիս տակով մի այդպիսի կիսահարբած դատարկապորների մի խումբ անցնի, երեկուայ նման, այն էլ այնպիսի զզուելի երգով...

Բեկկեր. Ձեր խօսքը «Արիւնալի դատաստան» երգի մասի՞ն է։

Դրէյսիդեր. Ինքներդ շատ լաւ գիտէք, ինչի մասին է խօսքս, և ուրեմն նորից կրկնում եմ, եթէ մէկ էլ լսեմ դրա նման մի բան, կրհրամայեմ ձեզնից մէկին բռնել անմիջապէս, և յանձնել դատախազին։ Հաւատացէք ինձ, ես կատակ չեմ անում։ Իսկ եթէ ես տեղեկանամ թէ ով է յօրինել այդ գարշելի երգը...

Բեկկեր. Դա հօ մի լաւ երգ է։

Դրէյսիդեր. Մի խօսք ևս, և ես իսկոյն կուղարկեմ ոստիկանութեան ետևից։ Երկար վիճաբանել չեմ սիրում. ձեզ նման լակոտներին ես շուտ խելքի կբերեմ։ Ես աւելի զօրեղներին եմ սանձահարել։

Բեկկեր. Դրան որ հաւատում եմ. իսկական գործարա-

նատերը մինչև մէկ աչք ճպելը հեշտութեամբ երկու երեք հարիւր ջուլհակի հախից կդայ, շուրջդ մի բուռնձռոտ ոսկոռ էլ չի թողնիլ... Չէ՞ որ կովի պէս չորս ստամոքս ունի, գայլի պէս էլ աստամներ։ Ի՞նչ խօսք, որ նրա համար դա ոչինչ բան է։

Դրէյսիդեր. (Ծառայողներին) Այս մարդուն մեզ մօտ էլ ոչ մի աշխատանք չտաք!

Բեկկեր. Ինձ համար բոլորովին միևնոյն է, դազգահի տակ քաղցած մեռնել թէ փողոցում, փոսերի մէջ։

Դրէյսիդեր. Դուրս, դուրս այս րոպէիս։

Բեկկեր. (Խիստ) Ամենից առաջ դեռ վարձս տուէք։

Դրէյսիդեր. Սրան ինչքան է հասնում Նէյման.

Նէյման. Տասներկու արծաթ դրոշ և հինգ պֆէնինգ։

Դրէյսիդեր. (Արագ վերցնում է կասսիրից փողերը և շրջրրտում սեղանի վերայ այնպէս, որ մի քանի դրամներ գլորվում են յատակի վերայ) Ահա, վերցրէք, և շուտ կորէք աչքիցս։

Բեկկեր. Ամենից առաջ ես իմ վարձս եմ ցանկանում ստանալ։

Դրէյսիդեր. Սա է նրա հասանելիքը, և եթէ նա իսկոյն չի հեռանալ... այժմ ճիշտ կէսօր է... ներկարարները ճաշում են...

Բեկկեր. Իմ վարձս իմ ձեռքս պիտի հասնի (ցոյց տալով աջ ձեռքի մատով ձախ ձեռքի ափը) Ահա իմ վարձիս տեղը։

Դրէյսիդեր. (Աշակերտին) Ցելդներ, հաւաքեցէք փողերը (աշակերտը կատարում է հրամանը և փողերը դնում է Բեկկերի ձեռքին)։

Բեկկեր. Պատիւը պէտք է պատուով փոխարինել (Առանց շտապելու փողերը դնում է իւր հին քսակի մէջ)։

Դրէյսիդեր. Դէ՞հ, շուտ (որովհետև դեռ Բեկկերը չի դուրս գալիս, անհամբեր) ի՞նչ է, ես պէտք է օգնե՞մ որ հեռանաք էստեղից... (Այդ ժամանակ ջուլհակների խիտ բազմութեան մէջ նկատուում է շարժումն. նոցանից մէկը խորը և ծանր հառաչ է արձակում։ Ինչ որ վայր ընկնելու ձայն է

լաւում. ընդհանուրի ուշադրութիւնը դառնում է դէպի այդ նոր դէպքը)։

Դրէյսիդեր. Այդտեղ ի՞նչ պատահեց։

Այր և կին ջուլհակների ձայներ. «Մէկը վէր ընկաւ», «ինչ որ մի տղայ»—«ընկնաւո՞ր է թէ ի՞նչ է»։

Դրէյսիդեր. Վա՛հ!... ինչպէս թէ... վայր ընկա՞ւ (մօտենալով)։

Ծերունի ջուլհակ. Ահա, պարկած է։ (կաղմտում է աղատ տարածութիւն։ Ցատակի վերայ, ինչպէս դիակ, պարկած է մի ութ տարեկան երեխայ)։

Դրէյսիդեր. Ո՞վ է ճանաչում սրան։

Ծերունի ջուլհակ. Նա մեր գիւղից չէ։

Ծերունի Բաումերտ. Սրա դէմքը Հենրիխի նման է. (ուշադրութեամբ նայելով) հէնց նա ինքն է, Հենրիխի որդին, Գուստաւիին է։

Դրէյսիդեր. Այդ մարդիկը ո՞րտեղ են ապրում.

Ծերունի Բաումերտ. Մեզ մօտ! Վերևում, Կաշբախում, պ. Դրէյսիդեր! Նա շրջիկ երաժիշտ է, իսկ ցերեկները բանում է դաղդեահի վերայ։ Նրանք ինքը երեխայ ունին և տասներորդն էլ սպասաւոր է։

Այր և կին ջուլհակների ձայներ. «Այո, նրանց բանը վատ է». «տունը աւլով սրբած», «ինքը երեխաների համար նրանց մայրը երկու շապիկ էլ չի ունենալ»։

Ծերունի Բաումերտ. (Ձեռք տալով երեխային) Դէհ, այ տղայ, ի՞նչ է պատահել, աչքերդ մէկ բաց արա!

Դրէյսիդեր. Շարժուեցէք, մէկ բարձրացնենք նրան։ Ի՞նչ անմտութիւն է այսպիսի թոյլ երեխային մի այդպիսի հեռու ճանապարհ վազեցնել։ Ջուր բերէք Պգէյֆեր!

Կին ջուլհակ. (Օգնելով երեխային բարձրացնելու) Դէհ, լաւ բաւական է, բալաս, չես մեռնիլ։

Դրէյսիդեր. Կոնեակ չտանք, Պգէյֆեր, աւելի լաւ է կոնեակ։

Բեկկեր. (Որի վրայ այլ ևս ուշադրութիւն չեն դարձնում, հետևում է այդ տեսարանին, դուռը բռնած աղաղակում է, բարձր, ծաղրաբար) Դրան խժռելու բան էլ տուէք, աւելի շուտով ուշքի կգայ։ (գնում է)։

Դրէյսիդեր. Ես այս լակոտի վերջը վատ եմ տեսնում. երեխայի կոնատակերից բռնեցէք, Նէյման, հանդարտ, հանդարտ. այդպէս, այդպէս... տանենք նրան իմ սենեակը։ Դէհ էլ ո՞ւր էք ուշացնում։

Նէյման. Նա ինչ որ խօսեց, պ. Դրէյսիդեր, նա շրթունքները շարժում է։

Դրէյսիդեր. Ի՞նչ ասացիր, դու, փոքրիկս։

Երեխան. (Հազիւ լսելի) Ուտել եմ... ու... դում։

Դրէյսիդեր. (Դունատուելով) Ոչինչ չի հասկացուում, ի՞նչ է ասում։

Կին ջուլհակ. Կարծեօք նա...

Դրէյսիդեր. Մենք կտեսնենք, միայն շուտ արէք խընդրում եմ. նա կարող է պարկել իմ բազմոցի վրայ։ Տեսնենք բժիշկը ի՞նչ կասի։ (Դրէյսիդերը կին ջուլհակը և Նէյմանը տանում են երեխային գրասենեակ. ջուլհակների մէջ իրարանցում է ընկնում. ինչպէս որ աշակերտների մէջ է պատահում, երբ ուսուցիչը դասատնից հեռանում է, սկսում են կամաց շշնջալ. ջուլհակները իրար են անցնում և մի քանի վայրկեանից խօսակցութիւնը դառնում է ընդհանուր և բարձրաձայն։

Ծերունի Բաումերտ. Իսկ ես դարձեալ կարծում եմ, որ Բեկկերը իրաւացի է։

Շատ այր և կին ջուլհակների ձայներ. «Ձէ՞ որ նա այդպէս ասաց». «Այստեղ զարմանալու չէ, որ քաղցածութիւնը, նրան կուչ է ածել». «իսկ ինչ կանենք ծմեռը, եթէ շարունակեն այսպէս մեր վարձը կտրել»։ «Եւ դետնախնձորի բերքն էլ այս տարի շատ վատ է». «մեզանում ոչ մի փոփոխութիւն չի լինիլ, մինչև տմենքս չսատկենք»։

Ծերունի Բաումերտ. Ամենից լաւը Նենտվինդ ջուլհակի նման խեղդուելն է, թոկը դցել վզին և կախուել դաղդեահից։ Մի քաշելու բռնոթի վերցրու, ես Նէյրոտումն էի, իմ փեսան

այնտեղի բռնութիւն գործարանումն է ծառայում, նա մի փոքրը ածեց իմ բռնութեանը։ Այդ ի՞նչ է կապոյիդ մէջ։

Ծերունի ջուլհակ. Ոչինչ, բրինձ է։ Ջաղացպանի սայլը Ուլբրիխից դալուց առաջինցս անցնում էր, մէկ պարկը պատռուեց, իսկ դա ինձ համար հէնց շատ յաջող դէպք էր, հասկանալի է էլի։

Ծերունի Բաումիերտ. Պետերսվալդայում 22 ջաղաց կայ, բայց մեզ երբէք ոչինչ բաժին չի հասնում։

Ծերունի ջուլհակ. Բայց և այնպէս, այդ մասին վրհատուելը պէտք չէ. Աստուած ողորմած է կհասնի։

(Դրէյսիգեր, Պֆէյֆեր և կասսիրը վերադառնում են)

Դրէյսիգեր. Առանձին ոչինչ չկայ, երեխան բոլորովին ուշքի եկաւ։ (Սենեակի մէջ մտնելիս. գրգռուած և թառանչ քաշելով) Բայց և այնպէս մեծ անխղճութիւն է, երեխան, ինչպէս ցոդուն, բեկուն է. ուղղակի անհասկանալի է, ինչպէս այդ մարդիկը... ժողովները, կարող են այդքան անմիտ լինել! բարձել են նրան երկու կառ գործուածք. իսկ ճանապարհը—1½ մղոնից աւելի է. մարդու հաւասարը չէ գալիս։

Ես պէտք է կարդաղրեմ, որ երեխաներից ամենևին ապրանք չնդունեն։ (Դարձեալ մի առ ժամանակ լաւ շրջում է) Ցամենայն դէպս, ես կցանկանայի, որ այլ ևս այդպիսի բան չը կրկնուէր։

Վերջ ի վերջոյ ո՞վ կլինի մ՛ղաւորը, ի՞հարկէ բացի մեզ, գործարանատէրերից, ուրիշ ոչ ոք! Միշտ ամէն բանում մեղաւորը մենք ենք դառնում։ Սրա նման յիմարը եթէ ձմեռը ձիւնի մէջ թաղուի ու սառչի, անպատճառ մի որևէ գրչակ այդտեղ կրգտնի, և երկու օր չանցած բոլոր լրագրներում մի ամբողջ տրագիկական պատմութիւն կկնարուի։ Հայրը, ծնողները որոնք այդպիսի երեխային ուղարկում են, երբէք մեղաւոր չեն դուրս գալիս. գործարանատէրն է ամէն բանում մեղաւորը. կուժն ու կուլան նրա գլխին է կոտրվում։ Միշտ նրանց կողմն են պահում. իսկ ամենի մեղքերը բարձում է գործարանատիրոջ վրայ, չէ՞ որ նա անսիրտ մարդ է, քար է,

վնասակար արարած է, որի ոտը ամեն մի լրագրական շուն կարող է կծել։ Նա ապրում է իւր զուարճութեան և շքեղութեան մէջ, իսկ խեղճ ջուլհակներին գրոշներ է վճարում. բայց թէ այդ մարդը նոյնպէս հոգսեր ու անքուն գիշերներ ունի, թէ նա իւր վերայ մեծ պատասխանատուութիւն է վերցնում, որի մասին բանւորը երազել անգամ չի կարող, թէ երբեմն նրա գլուխը պատռում է զանազան գումարելուց, բաժանելուց ու բազմապատկելուց և անվերջ հաշիւներից, թէ նա հազար մի բան ունի մտածելու, կշռադատելու և մահու ու կեանքի կռիւ է մղելու մրցելու համար, թէ ոչ մի օր չի անցնում նրա համար առանց յուզմունքի, վնասների, դրա մասին ի հարկէ լռում են... Իսկ թէ ինչ պատասխանատուութիւն կայ գործարանատիրոջ վերայ, որքան մարդ է ծծում նրան և ապրում նրանով... Չէ, չէ եթէ դուք գոնէ մի անգամ իմ կաշուիս մէջ մտնէք, միւս անգամ կարծում եմ որ էլ չցանկանաք (մի փոքր կենդրոնանալուց յետոյ). իսկ ինչպէս էր իրան պահում այստեղ այդ յանդուգն, լպիրշ Բեկկերը։ Այժմ կերթայ և ամբողջ աշխարհում կը տարածի, որ ես ով գիտէ ինչպէս անխիղճ եմ, որ ես իբր թէ ամէն մի ոչինչ բանի համար քէֆիս ուզածի պէս դուրս եմ շպրտում փողոց ջուլհակներին։ Բայց մի՞թէ այդ ճշմարիտ է—ես այդքան անխիղճ եմ։

Շատ ձայներ. Էհ, ի՞նչ էք հրամայում, պարոն Դրէյսիգեր,

Դրէյսիգեր. Ինձ էլ այդպէս է թւում։ Իսկ այստեղ այդ անտաշը թափառում է, և երգում մեր գործարանատէրերիս մասին իր անզգամ երգերը. դեռ քաղցածութեան մասին են խօսում, այն ինչ ամբողջ շրջան օրի կուլ տալու փող միշտ գտնում են։ Ապա մի տեսէք թէ ինչ գրութեան մէջ են գրտնում կտաւ գործողները։ Նրանք իրաւունք ունին խօսել կարիքի մասին։ Իսկ ձեր գրութիւնը այնքան լաւ է, որ փառք պէտք է տաք Աստծուն։ Թող ինձ ասեն իմ հին աշխատասէր և արի ջուլհակներս գրպդ է արդեօք իւր

Հ.Ս.Խ.Հ. ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.С.Р. Государственная Библиотека
7/XI 1922
ԱՄԵՆԱ, Имени Н. Ս. ՍԱՐԻՅԱՆԻ ԱՆՎԱՆ
1008/5089

գործը ճանաչող բանուորը ինձ մօտ այնքան փող վաստակել, որ առանց պակասութեան ապրի։

Շատ ձայներ. Այո, պարոն Դրէյսիդեր։

Դրէյսիդեր. Դէհ, տեսնում էք, այնպիսի մի արարած, ինչպէս որ Բեկկերն է, իհարկէ ոչ! Բայց իմ խորհուրդս է ձեզ, այդպիսի տղաներին շատ էլ երես չտալ։ Վերջապէս եթէ ես բոլորովին կորցնեմ համբերութիւնս, ուղղակի կթողնեմ այս գործը։ Կվերջացնեմ ձեռնարկութիւնս, այն ժամանակ դուք կտեսնէք թէ ինչ կլինի ձեր վիճակը։ Այն ժամանակ որտեղ կգտնէք գործ։ Ցամենայն դէպս ոչ պարոն Բեկկերի մօտ!

Առաջին կին ջուլհակ. (Մօտենալով Դրէյսիդերին, բարկաբար թափ է տալիս նորա սիրտուկից փոշին) ձեր շորը մի փոքր կեղտոտուել է, ողորմած պարոն։

Դրէյսիդեր. Գործերը շատ վատ են, այդ ինքներդ լաւ գիտէք։ Ես՝ փոխանակ աշխատելու, զրպանիցս եմ վրան դնում։ Եթէ և չնայելով դրան աշխատում եմ որ իմ ջուլհակները մշտապէս գործ ունենան, այս ենթադրում էի, որ կրհասկանաք, կգնահատէք։ Ապրանքը ինձ մօտ թափուած է, արդէն հազարաւոր հակերով, և դեռ յայտնի էլ չէ թէ երբ և իցէ կրծախուի թէ ոչ։ Ես լսել եմ, որ շրջակայքում շատ ջուլհակներ մնացել են բոլորովին առանց գործի... Սակայն մնացեալը ձեզ թող բացատրի Պֆէյֆերը... Ահա թէ բանը ինչումն է, որպէս զի դուք հասկանաք իմ բարի ցանկութիւնները... Ես, ի հարկէ, չեմ կարող ողորմութիւն բաժանել, դորա համար ես դեռ այնքան հարուստ չեմ, բայց դորա փոխարէն կարող եմ մի որոշ չափով ապրուստի միջոց տալ անգործներին։ Եթէ ես դրանով մի յայտնի բիսկի եմ ենթարկուում, դա իմ գործն է, արդէն։ Ցամենայն դէպս, ես կարծում եմ, եթէ մարդ կարող է ամենայն օր հացի և թանի փող վաստակել դա աւելի լաւ է քան բոլորովին քաղցած մնալ, այդպէս չէ՞։

Մի քանի ձայներ. Այո, այս պարոն Դրէյսիդեր։

Դրէյսիդեր. Այսպէս ուրեմն, ես պատրաստ եմ գործ ստեղծել երկու հարիւր ջուլհակների համար ևս, թէ ինչ

պայմաններով, այդ ձեզ կբացատրի Պֆէյֆերը։ (կամենում է հեռանալ)

Առաջին կին ջուլհակ. (Առաջը կտրելով, խօսում է շտապ աղերսական և պնդելով) ձերդ ողորմածութիւն, պարոն Դրէյսիդեր, ես խոնարհաբար կխնդրէի ձեզ—դուցէ դուք... ինձ արդէն երկու անգամ ոչինչ չեն տուել, հաշիւ տեսնելու...

Դրէյսիդեր. (Շտապով) Խօսեցէք Պֆէյֆերի հետ, սիրելիս, ես առանց այդ էլ ուշացել եմ։ (անցնում է նորա առաջից)։

Բէյտան ջուլհակ. (Նոյնպէս ճանապարհը կտրելով և վիրաւորուած գանգատուելով) Պարոն Դրէյսիդեր, ես նոյնպէս գանգատաւոր եմ։ Պարոն Պֆէյֆեր... իմ գործուածքի համար չէ՞ որ մինչև այժմ ես ստացել եմ տասներկու և կէս գրոշ, ամէն մի կտորին...

Դրէյսիդեր. (Ընդմիջելով նրան) Էկսպերտորը այնտեղ է նստած, դիմեցէք նրան, դա ամենաուղիղ ճանապարհն է։

Հէյրեր ջուլհակ. (Կանգնեցնելով Դրէյսիդերին) Պարոն Դրէյսիդեր, (կակազելով և արագ) ես կամենում էի ձեզ խոնարհաբար խնդրել, դուցէ... Նա կարող կլինէր ինձ... Չէ՞ կարելի արդեօք, որ պարոն Պֆէյֆերը... դուցէ... նա կարող կլինէր... կարող կլինէր...

Դրէյսիդեր. Իսկապէս դուք ի՞նչ էք կամենում։

Հէյրեր ջուլհակ. Որպէս զի առաջուց վերցրած փողս որը ես վերջին անգամ... ենթադրում եմ... քանի որ ես...

Դրէյսիդեր. Ես ձեզ բոլորովին չեմ հասկանում։

Հէյրեր ջուլհակ. Շատ մեծ կարիք ունէի, որովհետև...

Դրէյսիդեր. Դիմեցէք Պֆէյֆերին, Պֆէյֆերին, ես ճշմարիտ ոչինչ չեմ կարող անել, բացատրեցէք Պֆէյֆերին։ (Մանելով գրասենեակը) (խնդիրք ունեցողները անօգնական միմեանց անցում են։ Մէկը միւսի ետևից հեռանում են հառաչելով)։

Պֆէյֆեր. (Նորից քննելով կտորները) Դէհ, ծերուկ բերածդ ի՞նչ է։

Ծերունի Բաումերտ. Իսկ այժմ քանիսով պիտի հաշուէք ամեն մի կտորը, պ. Պֆէյֆեր։

Պֆէյֆեր. Ամեն մի կտորը տասը արծաթ գրոշ։

Ծերունի Բաումերտ. Դէհ, լաւ, ինչպէս կամենաք։ (Ջուլհակների մէջ իրարանցում, խօսակցութիւն և տհաճութիւն)։

ՎԱՐԱԳՈՅՐ.

ԵՐԿՐՈՐԴ ԳՈՐԾՈՂՈՒԹԵԱՆ ԱՆՁԻՆՔ

Ծերունի Բաումերտ.
(Պառաւ) Մայր Բաումերտ, նորա կինը.
Աւգուստ, նոցա որդին.
Էմմա
Բերտա } նոցա աղջկերքը.
Ֆրից, Էմմայի ապօրինի զաւակը.
Ծերունի Անզօրգէ, աղքատ ջուլհակ.
Ֆրաու Հենրիխ, կին ջուլհակ.
Մորից Եգեր, արձակուած զինուոր, նախկին ջուլհակի աշակերտ։

ԵՐԿՐՈՐԴ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ.

Վիլհելմ Անզօրգէի տան սենեակ, Կաշբախում, Էյլինի լեռներում։ Փտած յատակով, մրոտած առաստաղով նեղ, վեց ոտնաչափից պակաս բարձրութեամբ սենեակում երկու մատաղահաս օրիորդներ Էմմա և Բերտա Բաումերտ, նստած են դազդեահի առաջ նրանց մայրը՝ կռացած պառաւը նստած է մահճակալի առաջ նըստարանի վերայ, առաջին դրուած է ճախարակ, նրա որդին՝ Աւդուստը, քսան տարեկան, ապուշ, փոքրիկ բերանով և փոքրիկ գլխով, երկար սարգանման ոտներով և ձեռքերով նստած փոքրիկ աթոռակի վերայ, նոյնպէս թել է փաթաթում։ Զախ կողմում գըտնուող երկու փոքրիկ, կէսը թղթով և յարդով ծածկուած, լուսամուտներից թափանցում է թոյլ վարդագոյն մայր մտնող արևի լոյսը։ Նա ընկնում է օրիորդների շէկ և թափուած մազերի, մերկ նիհար ուսերի և բարակ մոմանման պարանոցի, կոպիտ շապկի ծալքերի վերայ, որոնք հասարակ կտաւից դերիայի հետ կազմում են նրանց միակ հագուստը։ Պառաւի երեսը, պարանոցը և կուրծքը լուսաւորուած են արևի պայծառ ճառագայթով։ Նրա առանց արիւնի՝ ծալքերով և կնճիռներով պատած երեսը, բոլորովին չորացած է. աչքերը խոր ընկած, շարունակ կարմրած, փոշուց. և ծուխ ու կըրակից չրակալած. վիզը երկար, ծալքերով, ուռուցքով (kropf) և դուրս ցցուած եբակներով։ Ներս ընկած կուրծքը, փաթաթուած է մաշուած թաշկինակներով և ինչ որ փալաներով։ Արեգակը լուսաւորում է նոյնպէս աջակողմեան պատի մի մասը որտեղ գտնուում է վառարանը. երեք կողմից շրջապատ նստարանով. անկողինը և սըրբերի մի քանի պայծառ հասարակ (գունաւոր փայտի վերայ փորագրած) պատկերներ։ Վառարանի առաջ մի ծղոլի վերայ ծգուած են փալաներ չորացնելու։ Վառարանի ետևը թափթփած է անպէտք իրերի կոյտ։ Դարակի վրայ դարսած են մի քանի աւէ կճուճներ և ուրիշ խոհանոցի կարասիք, Թղթի վրայ չորացնելու համար փռած են գետնախնձորի կլեպներ, և այլն։ Գերանից կախ են ընկած թելի վիլներ, և թել փաթաթելու գործիքներ։ Դազդեահի մօտ մի զամբիւղ ռչը կաժեր, ետևի պատում ցածրիկ դուռ առանց կողպէքի։ Պատին նեցուկ տուած է մի կապոց ուռենու ճիպոտներ. մի քիչ հեռուում մի քանի կոտրատած մանր զամբիւղներ։ Սենեակի մէջ լսւում է դազդեահի աղմուկը, թել լցնելու բեռնի ճեղքոցները, որից ցնցուում են յատակը և պատերը և մրկոյկների չրխկոցն ու աղմուկը։ Դրան միանում է թել փաթաթելու անիւների միապաղաղ խոր աղմուկը, որ նման է մեծ իշամեղուների բզզոցին։

Պառաւ Բաումերտ. (*Խղճալի յոգնած ձայնով, այն ժամանակ, երբ օրիորդները զադարեցնում են գործը և կռանում են դէպի գործուածքը*) *Միթէ՞ նորից պէտք է կապել։*

Էմմա. (*օրիորդներից ամենամեծը քսաներկու տարեկան, կապելով կտրուած թելը։ Համա թել է՞ է, ի՞նչ ասեմ։*

Բերտա. (*Տասն և հինգ տարեկան*) *Միայն տանջանք է, ուրիշ ոչինչ!*

Էմմա. *Այս ո՞ւր է կորել ծերունին, չէ՞ որ տնից դուրս եկաւ ժամի ինեին։*

Պ. Բաումերտ. *Եւ իսկապէս ո՞ւր կարող է լինել նա այժմ։*

Բերտա. *Աստուած սիրէք, էլ սրտաճանք մի լինէք մայրիկ։*

Պ. Բաումերտ. *Նրա ամէն դուրս գնալը ինձ համար վախ է։*

Էմմա. (*Շարունակում է գործել*)։

Բերտա. *Փիչ սպասիր դու, Էմմա!*

Էմմա. *Ի՞նչ է որ.*

Բերտա. *Ինձ թուաց թէ մէկը գալիս է։*

Էմմա. *Երևի Անզօրգէն է, տուն է վերադառնում։*

Ֆրից. (*Փոքրիկ, ոտաբոբիկ, ցնցոտիներով, չորս տարեկան տղայ, ներս է վազում լալով*)։ *Մայրիկ քաղցած եմ, ուտել եմ ուզում։*

Էմմա. *Սպասիր, Ֆրից, մի փոքր սպասիր, այ իսկոյն պապիկը կգայ, սուրճ էլ կբերի և հաց էլ։*

Ֆրից. *Այնպէս քաղցած եմ, որ մայրի՞կ։*

Էմմա. *Չէ՞ որ բան ասացի քեզ, դէ՞հ, խելօք կաց, նա հէնց իսկոյն կգայ, թաղայ հաց կբերի և սուրճ էլ։ Իսկ երբ մենք կվերջացնենք մեր գործը, մայրիկը գետնախնձորի կլեպը կտանի կտայ գիւղացուն, իսկ նա դորա փոխարէն լաւ ժաժիկ կբերի իմ երեխիս համար։*

Ֆրից. *Բայց ո՞րտեղ է պապիկը։*

Էմմա. *Գործարանատիրոջ մօտ է, գործով է գնացել, Ֆրից։*

Ֆրից. *Գործարանատիրոջ մ՞օտ.*

Էմմա. *Այո, այո՞, Ֆրիցիկ, Պետերսվալդում Դրէյսիգերի մօտ է։*

Ֆրից. *Նրան այնտեղ հաց կտա՞ն։*

Էմմա. *Այո, այո, նրան փող կտան և այն ժամանակ կարելի կլինի հաց առնել։*

Ֆրից. *Բայց պապիկին փող շա՞տ կտան։*

Էմմա. (*Բարկանալով*) *Դէհ, բաւական է, սուս արա։*

(շարունակելով գործելը, նոյնպէս, ինչպէս և Բերտան։ Շուտով նրանք երկուսը նորից դադարեցնում են գործը)։

Բերտա. Գնա Աւգուստ, հարցրու Անդրոգէից, չի՞ կարող նա մեզ մի ճրագ տալ։ (Աւգուստը հեռանում է Ֆրիցն էլ նրա հետ)։

Պառաւ Բաումերտ. (Լացակումած երեխայի նման) Ախ, որդիք, որդիք ո՞ւր է մեր ծերունին։

Բերտա. Երևի անցնելուց մտել է Հաուֆի մօտ։

Պ. Բաումերտ. (Լալիս է) Միայն թէ գինետուն չգնար։

Էմմա. Մի լար մայրիկ, չէ՞ որ հայրիկը խմող չէ։

Պ. Բաումերտ. (Իրեն կորցնելով սաստիկ անհանգստութիւնից և երկիւղից). Բայց... բայց ի՞նչ կլինի մեր ճարը այն ժամանակ, եթէ նա... եթէ նա չվերադառնայ... եթէ նա նոցա գինետնում թողնի և տուն ոչինչ չբերի. տանը ոչ մի պտղունց աղ կայ և ոչ մի կտոր հաց, գոնէ մի քիչ ածուխ լինէր...

Բերտա. Անհանգիստ մի լինիր, մայրիկ, այժմ լուսնեակ գիշեր է, մենք Աւգուստի հետ կգնանք անտառ և մի քիչ փայտ կժողովենք։

Պ. Բաումերտ. Զգոյշ եղէք, անտառապահը ձեզ չբռնի։

Անդրոգէ. (Ծերունի ջուլհակ, այնպիսի հսկայական կազմուածքով, որ սենեակ մտնելուց, նա պիտի կռանայ։ Դռնից կիսով չափ երևում է, մաղերը և մօրուքը գզգզուած)։ Ի՞նչ էք կամենում։

Բերտա. Ճրագ տուէք։

Անդրոգէ. (Զայնը մեղմացնելով, որպէս թէ հիւանդի մօտ է)։ Դեռ լոյս է չէ՞։

Պ. Բաումերտ. Ուզում ես մեզ խաւարի մէջ պահես, թէ ի՞նչ է։

Անդրոգէ. Չէ՞ որ ես էլ իմ հաշիւս ունիմ։ (Հեռանում է)։

Բերտա. Տես ինչ ժլատն է։

Էմմա. Հիմա այնքան սպասիր, մինչև նա կբարեհաճի...

Ֆրաու Հենրիխ. (Մտնելով սենեակը։ Երեսուն տարեկան, պատճառաւոր կին, նրա երկիւղից լարուած երեսը արտայայտում է մաշող հոգսեր)։ Բարի երեկոյ!

Պ. Բաումերտ. Ի՞նչ կասես սիրելիս։

Ֆրաու. Հենրիխ. (Կաղում է)։ Ոտս խեցի է մտել։

Բերտա. Արի այստեղ նստիր, ես կփորձեմ հանել։ (Ֆ. Հենրիխը նստում է. Բերտան կռանում է նրա առաջ և աշխատում է հանել)։

Պ. Բաումերտ. Դէ՛հ, պատմիր տեսնեմ ձեր տանը ի՞նչ կայ սիրելիս,

Ֆրաու. Հենրիխ. (Ակամայ վհատութեամբ) Է՛հ, ինչ պիտի, մեռնելը աւելի լաւ է, քան այսպէս ապրելը... Աստուած վկայ... (Զուր աշխատում է պահել արտասուքները, ըսկըսում է լուռ հեկեկալ)։

Պ. Բաումերտ. Մեզ նմաններիս համար, ամենալաւը այն կլինէր, որ ինքը տէր Աստուածը տեսնելով դրութիւնը, մեզ տանէր էն աշխարհը։

Ֆ. Հենրիխ. (Ձկարողանալով զսպել իրան, արտասուախառն բացականչում է)։ Երեխաներս քաղցից մեռնում են, (ձայնով հեկեկում է) չգիտեմ թէ որ ջուրն ընկնեմ. ինչ ուզում ես արա, աշխատիր մինչև բոլորովին ոյժից կնկնես։ Ես առանց այդ էլ հազիւ եմ ոտի վերայ կանգնում, բայց միևնոյն է, ինչպէս որ եղել է այնպէս էլ կայ։ Իննը քաղցած բերաններ, համեցիր, նրանց կշտացրու։ Իսկ ի՞նչով կերակրեմ, երեկ երեկոյ մի կտոր հաց կար, բայց երկու փոքրիկին էլ չկշտացրեց։ Ո՞ւմ տայի. ամէն կողմից բղաւում են, մայրիկ ինձ տուր, մայրիկ ինձ տուր։ Հիմայ դեռ ոտերս քաշ եմ տալիս, իսկ որ պառկեմ, այն ժամանակ ի՞նչ կլինի։ Ինչ որ գետնախնձոր ունէինք ջուրը քշեց։ Այժմ տանը ոչինչ չկայ։

Բերտա. (Հանելով խէցը և լուանալով վերքը) Պէտք է փայտով կապել. (Էմմային) մի կտոր փայտ գտիր։

Պ. Բաումերտ. Մեր բանն էլ լաւ չի։

Ֆ. Հենրիխ. Գոնէ դու աղջկերք ունես, դու ամուսին ունես, որ կարող է աշխատել։ Իսկ իմը անցեալ շաբթին նո-

բից պառկեց, այնպէս էր թրպրտում կուչ ու ձիգ դալիս, որ ես երկիւղից չէի իմանում ինչ անել, իսկ երբ նա մէկ անգամ ընկնում է, յետոյ ամբողջ շաբաթ պարկած է մնում։

Պ. Բաումերտ. Իմ ամուսինս էլ ոչ մի բանի պէտք չէ, նոյնպէս, թուլացել է, կուրծքը ցաւում է, մէջքը կոտրում է։ Մեր ծեռքի վերջին կոպէկն էլ է դուրս եկել։ Եթէ նա այսօր էլ գոնէ մի քանի գրոշ չբերի, չգիտեմ թէ ինչ կլինի այն ժամանակ մեր ճաշը...

Էմմա. Հաւատում ես, մենք այն տեղն ենք հասել... հայրս փոքրիկ շնիկին իւր հետ տարաւ նորան էլ մորթեցինք ու կերանք, չէ որ մի բանով պէտք է փորներս լցնել։

Ֆ. Հենրիխ. Գուցէ ձեր տանը մի բուռը աւելորդ ալիւր ունենաք։

Պ. Բաումերտ. Ի՞նչ ալիւր, մի պտղունց աղ անգամ չկայ տանը Հենրիխ ջան!

Ֆ. Հենրիխ. Է՜հ, էլ չեմ իմանում ինչ անեմ այժմ... (բարձրանում է և կանգնած մտածում է) Այն ժամանակ էլ ոչինչ չեմ հասկանում... էլ ոչ մի ելք չունեմ... (բացականչում է կատաղութեամբ և սարսափով) Գոհ կլինեի թէկուզ խոզի կերակուր դանէի. ես դատարկ ծեռքերով տուն գնալ չեմ կարող։ Այդ անկարելի է... Ներիր ինձ տէր Աստուած, ես ուրիշ ճանապարհ չգիտեմ... (ձախ կրնկի վերայ կանգնելով և կաղալով շուտ հեռանում է)։

Պ. Բաումերտ. (Բղաւում է նրա ետևից նախազգուշացնելով) Հէյնրիխին, Հէյնրիխին, յիմարութիւն չանես!

Բերտա. Նա իր գլուխը բան չի բերի։ Դու այդ իզուր ես ասում։

Էմմա. Նա միշտ այդպէս է։ (Նստում է դազդեահի մօտ և մի քանի վայրկեան գործում է։

Աւգուստ. (Մտնում է վառած ճարպէ մոմով, լոյս անելով ծերունի հօրը, Բաումերտին, որը նրա ետևից քաշ է գալիս, մի կապոց թել ձեռքին)։

Պ. Բաումերտ. Փառք Աստուծոյ! այ մարդ, այս ուր էիր այսքան ժամանակ։

Ծ. Բաումերտ. Դէ՜հ, էլի սկսեցիր մրթմրթալ, թող մի քիչ շունչ քաշեմ. մէկ տես ում եմ բերել հետս։

Մորից Եգեր. (Կռանալով անցնում է դռնով, առողջ կարմրաթուշ միջին հասակի, պահեստի զինուոր, հուսարի թեք դրած դլխարկով շորերը, և ոտնամանները կարգին են. հագին մաքուր շապիկ, առանց օձիքի, մտնում է, ուղղւում է և զինուորի նման բարևում։ Ուրախ և համարձակ ասնով)։ Բարի երեկոյ, հօրաքոյր Բաումերտ!

Պ. Բաումերտ. Ա՛յ, գալուստդ բարի, արդէն վերադարձե՞լ ես տուն, մեզ դեռ չես մոռացել, դէհ, եկ նստիր, մօտեցիր, այստեղ մօտիկ նստիր։

Էմմա. (Դերիի փեշով սրբելով փայտեայ աթոռը և տալով Եգերին) Բարի երեկոյ, Մորից, նորից ցանկացել ես աչքովդ տեսնել թէ ինչպէս են խեղճ մարդիկը ապրում։

Եգեր. Ասա խնդրեմ, Էմմա, ով կհաւատար! ինչ լաւ տղայ ունես, շուտով զինուոր կտանեն, դու սրան այդ որտեղից ես ճարել։

Բերտա. (Որը հօրից ընդունում է նրա բերած ինչին պաշարը, միսը դնում է թաւում և դնում է վառարանի մէջ, նոյն ժամանակ երբ Աւգուստը կրակ է անում)։ Դու հօ ջուլհակ Ֆինգերին յիշում ես։

Պ. Բաումերտ. Նա մեզ հետ այս սենեակումն էր ապրում, ուզում էր սրան առնել, բայց կուրծքը այն ժամանակն էլ թոյլ էր։ Ես զգուշացնում էի աղջկաս, բայց մի՞թէ նա ինձ կլսէր։ Նա արդէն վաղուց մեռել է, Աստուած հոգին լուսաւորի... այժմ աղջիկս իւր որդու հետ լալիս է... Իսկ դու ինչպէս էիր ապրում, Մորից։

Ծեր. Բաումերտ. Սրա մասին ի՞նչ ես հարցնում. նա արդէն մարդի շարք է ընկել. նա հիմայ թքել է մեզ բոլորիս վրայ։ Իշխանի պէս հագնում է, արծաթի ժամացոյց է բերել և բացի դրանից տասը տալեր նաղդ փող։

Եգեր. (Նստած է ծգուած ինքնաբաւական, ժպիտը երեսին)։ Գանգատաւոր չեմ, դինեւորական կեանքս բաւականին լաւ էր։

Ծեր. Բաումերտ. Բոռմիստրի մօտ ծառայ է եղել, լսիր, լսիր, հիմայ նրա խօսալու եղանակն էլ մեծաւորի է։

Եգեր. Ես այնպէս ընտելացել եմ այս բարձր ոճին, որ ուրիշ կերպ չեմ էլ կարող խօսել։

Գ. Բաումերտ. Դէհ, տեսէք, ի սէր Աստծոյ, այս փոքրացածին մաիկ առէր, այժմ փող էլ ունի, չէ՞ որ դու ոչ մի օրինաւոր բանի ընդունակ չէիր. պատահում էր, որ կծիկն էլ մի նստելում չէիր կարողանում ետ տալ։ Ոնց որ լինէր մի պատճառ կը դանէիր և դուրս կփախչէիր քո բանը, գործը աղունակների ետևից վազվզելն էր։ Ինքդ ասա, միթէ՞ ճշմարիտ չէ։

Եգեր. Ճիշտ է, ճիշտ է, հօրաքոյր Բաումերտ, ոչ միայն աղունակներ, այլ և ծիծեռնակներ էի որսում։

Էմմա. Իսկ քանիցս անգամ էինք մենք նրան ասում թէ ծիծեռնակները թունաւոր են։

Եգեր. Ինձ համար բոլորը մէկ էր, իսկ դուք ի՞նչպէս էիք ապրում, հօրաքոյր Բաումերտ։

Գ. Բաումերտ. Էհ մի հարցնիր, շատ վատ, այս վերջին չորս տարին, շատ վատ էր։ Տեսնում ես բոլորովին հիւանդ եմ. ոսկորներս ջարդւում են։ Նայիր մատներիս՝ չդիտես ոսկրացաւ է թէ ինչ է. ինքս էլ չեմ հասկանում։ Շատ վատ է դրութիւնս. ձեռքս և ոտս շարժել չեմ կարողանում։

Ոչ ոք չի հաւատալ ինչ ցաւեր, ինչեր եմ քաշում։

Ծ. Բաումերտ. Այժմ նրա առողջութիւնը շատ վատ է, երկար չի ապրիլ։

Բերտա. Առաւօտ շորերը հագցնում ենք, գիշերը հանում՝ իսկ կերակրում ենք, ինչպէս մի փոքր երեխայի։

Գ. Բաումերտ. (Բոլոր ժամանակ լացի և ողիորդմ ձայնով)։ Եւ ոչինչ չեմ կարողանում անել առանց ուրիշի օգնութեան, ոչ միայն ինքս եմ հիւանդ, ուրիշների համար էլ ծա-

նը բեռ եմ դարձել. թէ քա՛ի անգամ եմ ես Աստծուն խընդրել որ կեանքս առնի։ Օ՜հ, տէր իմ Աստուած, տէր իմ Աստուած, այնքան ծանր է իմ ապրուստը. ինքս էլ չգիտեմ ճշմարիտ... Գուցէ մարդիկ ասեն... Բայց չէ՞ որ ես հէնց փոքրը հասակից սովոր եմ աշխատելու։ Միշտ ինքս եմ տարել գործերս, իսկ այժմ յանկարծ... (իզուր աշխատում է տեղից բարձրանալ) չեմ կարող, որ չեմ կարող, մարդս լաւ մարդ է, երեխայքս էլ նոյնպէս, փառք Աստուծոյ, բայց որքան դժուար է ինձ, նրանց այսպէս տեսնել... աղջկերանցս—կերպարանքին նայիր, տես ինչ են դարձել։ Շուտով նրանց մէջ արեան հետք էլ չի մնալ։ Սպիտակել, կաւ են դարձել... Այսպիսի աղջկերանց վիճակուած է մեքենայի տակ աշխատել, միևնոյն բանն է, ծնողների մօտ է ապրում թէ առանձին։ Իսկ ի՞նչ կեանք է սրանց կեանքը! ամբողջ տարին տեղից չեն շարժւում, մինչև անգամ իրանց փալասների համար էլ չեն կարողանում փող հասցնել, չեն կարողանում, քիչից շատից հագնուել. մարդու երես դուրս գալ, եկեղեցի գնալ, կամ զուարճանալ—մի փոքր, ջահիլ աղջկերք են 15, 20 տարեկան, բայց նրանց դէմքին նայելուց կարծես խեղճերին կախաղանից ես դուրս բերել։

Բերտա. (Վառարանի մօտ)։ Էլի քիչ ծուխ է անում։

Ծեր. Բաումերտ. Օհ, ինչ սարսափելի ծուխ է։ Ինքդ դատիր, միթէ՞ կարելի է, այստեղ առողջ լինել։ Շուտով ամբողջ վառարանը վայր կթափուի։ Իսկ մենք պիտի նայենք ու մրրից խեղդուենք։ Ամենքս էլ հազում ենք, մէկը մէկից աւելի, հէնց որ մէկի հազը բռնում է քիչ է մնում որ թոքերն էլ լեարդն էլ դուրս թափուեն... Բայց ինչ փոյթ մարդկանց...

Եգեր. Դա չէ՞ որ Անզօրգէի պարտքն է, նա պէտք է ուղղի վառարանը։

Բերտա. Ինչպէս, ո՞նց չէ, կուղղի! Նա առանց այդ էլ մի տ փնթփնթում է։

Գ. Բաումերտ. Մենք առանց այդ էլ շատ տեղ ենք բռնում նրա տանը։

Ծ. Բաումերտ. Իսկ եթէ մենք սկսենք տրտունջներ էլ յայտնել, այն ժամանակ մեզ դուրս կրշպրտեն այստեղից, շուտով վեց ամիս է որ մենք նրան ոչինչ չենք վճարել:

Պ. Բաումերտ. Նա հօ աղքատ չէ՞, կարող էր մի քիչ աւելի լաւ վարուել:

Ծ. Բաումերտ. Նա էլ ոչինչ չունի, պառաւ, նա էլ կարիք ունի, թէպէտ չի զոռում իւր կարիքի մասին:

Պ. Բաումերտ. Բայց նա գոնէ տուն ունի:

Ծ. Բաումերտ. Չէ, պառաւ չէ! գուցէ այս տան մէջ մի գերանն էլ այժմ իրան չի պատկանում:

Եղեր. (Ուղղուելով և հանելով գրպանից մի գեղեցիկ ծխամորճ իսկ միւսից մի շիշ օղի). Այսպէս շարունակուել չի կարող: Էլ սրանից վատ ապրուստ չի լինիլ, ես զարմանում եմ, ինչպէս են մարդիկ այստեղ ապրում. քաղաքում շները աւելի լաւ են ապրում, քան թէ դուք այստեղ:

Ծ. Բաումերտ. (զգացած) Սրան մտիկ արէք, բան ասաց, բաւական է, որ մարդ մի բերան բաց անի, ամէն կողմից լսում է թէ ժամանակը վատացել է:

Անդրդէ. (Մանելով, մի ասան ապուր մի ձեռքին, միւս ձեռքին կիսատ գործած զամբիւղ է): Բարև Մորից, ինչ է, տուն ես վերադարձել, եղբայր!

Եղեր. Այո, փառք Աստուծոյ, քեռի Անդրդէ:

Անդրդէ. (Ասանը դնելով վառարանի մէջ): Տեսնում է՞ք— բոլորովին իշխան ես դարձել:

Ծ. Բաումերտ. Ցոյց տուր նրան ժամացոյցդ, նոր հագուստ էլ է բերել և տասը տալեր փող:

Անդրդէ. (Գլուխը շարժելով): Կարծո՞ւմ ես—ամենևին ոչ:

Էմմա. (Բսակի մէջ հաւաքելով զետնախնձորի կլեպը): Դէհ, տանեմ կլեպը, գուցէ մի բաժակ երեսը քաշած կաթ կարողանամ բերել: (Հեռանում է):

Եղեր. (Նոյն բոպէին, երբ ամենքը լարուած ուշադրութեամբ նրան են նայում): Իսկ յիշում է՞ք, ինչպէս, դուք ինձ վախեցնում էիք, ասելով ապա մի սպասիր, քեզ ցոյց կտան,

երբ զինուոր կտանեն: Բայց տեսէք, ինչպէս ամէն բան լաւ վերջացաւ, կէս տարուց յետոյ արդէն (չին) աստիճան ստացայ. պէտք է ճարպիկ (ժիր) լինել, այս է գլխաւորը, և ես աշխատում էի, վախմիստրի կոշիկներն էի մաքրում, նրա ձին էի պահում, գարեջրի էի վազում. իսկ պահակատեղում երբ կանգնում էի, ինչպէս էր փայլում իմ զգեստը... զոմում առաջինն էի, կոչումի ժամանակ առաջինն էի, թամբի վրայ առաջինն էի: Իսկ երբ յարձակում էինք գործում յառաջ, կուրծքս դէմ տուած հեռացիր ճանապարհից, սատանայ, միշտ արթուն էի, ինչպէս որսի շուն: Միշտ մտածում էի, այստեղ քեզ ոչինչ չի օգնիլ, այստեղ փիլիսոփայութեան տեղ չէ: Ականջս միշտ ձայնի էր, և դրծս էլ յաջող գնաց: Վերջ ի վերջոյ այն տեղը հասցրի, որ բոամիստրը ամբողջ էսկադրոնի առաջ իմ մասին ասաց. ա՛յ, իսկական Հուսար. (լռութիւն, Եղերը վառում է ծխամորճը):

Անդրդէ. (Գլուխը շարժելով) Ահա թէ ինչպէս բախտը բանել է. ա՛յ լաւ բան... (յատակի վերայ նստում է կողքին է դնում ուռենու ճիւղերը, և սկսում է գործել սկսած զամբիւղը ոտերի մէջ պահելով):

Ծ. Բաումերտ. Դէհ կսպասենք, որ դու մեզ համար էլ բախտ կբերես, լաւ չի՞ լինիլ մի քիչ խմէինք:

Էդեր. Իհարկէ, իհարկէ քեռի Բաումերտ. Սա վերջանայ ուրիշը կհանենք: (Սեղանի վերայ է դնում մի դրամ):

Անդրդէ. (Ցիմարի պէս և զարմացած ժպտում է): Է՞, է, է, այստեղ արդէն հարստութեան հոտ է փչում: Այստեղ միս է տապակւում. այստեղ ամբողջ մի լիտր օղի է. (շիշը բերանը տանելով) կենացդ, Մորից...այդպէս ա՛յ... (շիշը ձեռքից ձեռք է անցնում):

Ծ. Բաումերտ. Այ, թէ կարողանայինք, ամենայն օր տապակած միս ուտել, թէ չէ, տարիներով մսի երես չենք տեսնում թէ չէ —սպասիր մինչև նորից ներս կվազի մի փոքրիկ շուն, ինչպէս մի ամիս սրանից առաջ պատահեց, բայց դա էլ սակաւ է պատահում!

Անզօրդէ. Մի՞թէ Ամիչկային մորթել ես։

Ծ. Բաումերտ. Միևնոյն չէ՞ նորա համար, քաղցից սատկել թէ...—

Անզօրդէ. Ի՞նչ ես ասում,... մի՞թէ դու...

Պ. Բաումերտ. Իսկ ինչ սիրուն ատաղով շուն էր։

Ծ. Եղեր. Ուրեմն դուք առաջուայ պէս շան մսի սիրահա՞ր էք։

Ծ. Բաումերտ. Բա ինչ, գոնէ դրանից լինէր, շատ լինէր։

Պ. Բաումերտ. Ինչ խօսք, մի՞թէ մեղք բան է, մի կտոր միս ուտելը։

Ծ. Բաումերտ. Իսկ քեզ համար այժմ երևի այդպիսի կերակուրները ճաշակովդ չեն. մնա մեզ մօտ, Մօրից և շուտով բերանիդ համը կհասկանաս։

Անզօրդէ. (Օդը ներշնչելով)։ Հապա, հապա... այդ լաւ կլինի... այդ բաւական համով բան է, դրանից լաւ հոտ է փչում։

Ծ. Բաումերտ. (Բռնոթին քաշելով)։ Իսկական դարիչին, է, կարելի է ասել։

Անզօրդէ. Իսկ դու էլ, Մօրից, մի քո կարծիքը մեզ յայտնիր. չէ՞ որ քեզ յայտնի է թէ ի՞նչ է կատարւում աշխարհում, այստեղ մեզ ջուլհակներիս համար, մի որևէ փոփոխութիւն լինելու է թէ ոչ։

Եղեր. Այո, պէտք է լուսալ։

Անզօրդէ. Մենք այստեղ ոչ ապրում ենք. ոչ մեռնում։ Շատ անտանելի է մեր ապրուստը։ Ինքդ կտեսնես։ Բոլոր այժմ վեր ես դնում—իսկ վերջ ի վերջոյ ձեռքերդ թուլանում են. կարիքը գլխիդ վերև առաստաղն էլ է ուտում, ոտերիդ տակի յատակն էլ։ Առաջ որ մեքենայի տակ բանում էի, մի կերպ քաշ էի գալիս։ Իսկ այժմ մի տարուց աւելի է, գործ չեմ կարողանում գտնել։ Զամբիւղ եմ հիւսում, բայց օրանով էլ հազիւ հաց եմ հայթայթում ապրուստս։ Մինչև կէս գիշեր բանում եմ, իսկ երբ վերջացրի, տեսնում ես ընդամէնը մի գրոշ և 6 պֆենինգ եմ աշխատել։ Դու ուսեալ

մարդ ես, ինքդ էլ լաւ հասկանում ես, մի՞թէ կարելի է այսպիսի թանկութեան մէջ ծայրը ծայրին հասցնել. երեք տալեր տան համար տուրը պէտք է վճարել. մի տալեր դեռնահարկ, դարձեալ երեք տալեր կապալի վարձ և այսպէս իմ ամբողջ տարուայ աշխատած տասն և չորս տալերից ինձ ընդամենը մնում է եօթը տալեր։ Հիմա արի դրանով և կերակրուիր և հագնուիր, և տաքացիր և հնոտիքդ նորոգիր։ Բնակարան էլ է հարկաւոր ունենալ և վերջապէս, մի՞թէ դարձեալ էլի ուրիշ շատ և շատ ծախսեր չկան... Ինչ զարմանալի բան, եթէ այս պայմանների մէջ չկարողանաս կապալի վարձը վճարել։

Ծ. Բաումերտ. Հարկաւոր է, որ մէկն ու մէկը, գնայ Բերլին և Թագաւորին պատմէ մեր ապրուստի մասին։

Եղեր. Այդ ոչինչ չի օգնիլ, քեռի Բաումերտ, լրագրները մի՞թէ քիչ են գրում այդ մասին։ Հարուստները կարող են ամբողջ գործը իրենց ուզածի պէս շուռ տալ, այսպէս էլ այնպէս էլ... Նրանք ամենաբարի Քրիստոնեայ մարդուն էլ կարող են խաբել։

Ծ. Բաումերտ. Զարմանալի է, ի՞նչպէս է, որ Բերլինում մարդիկ այս չեն հասկանում։

Անզօրդէ. Աստ, Մօրից, մի՞թէ դա հնարաւոր բան է, մի՞թէ այդ մասին օրէնքների մէջ ոչինչ չի գրուած։

Եթէ դու բանում ես այն աստիճան, որ մինչև անգամ ձեռքերիդ կաշին քերթւում է, իսկ հոգի կապալագինը այնուամենայնիւ չես կարողանում վճարել, մի՞թէ գիւղացին այդ դէպքում կարող է խլել իմ տունը։ Իհարկէ, գիւղացու փողն էլ պէտք է ձեռքը գայ, իսկ ես ինչ մեղաւոր եմ. եթէ ես ստիպուած լինիմ տնից... (քթի տակին մրթմրթում է) Այստեղ ես ծնուել եմ, այստեղ հայրս 40 տարուց ի վեր դազգեահի տակ աշխատել է. յաճախ պատահում էր, ասում էր մօրս, պառաւ, ասում էր, իմ մահից յետոյ զգուշացիր, տունը իհարկէ ձեռքից բաց չթողնես։ Զէ՞ որ ես նրան արիւն քրտինքով եմ ձեռք բերել։ Այստեղ ամէն մի մեխը ան-

քուն դիշեր է, ամէն մի սիւնը, ամբողջ տարի չոր հաց եմ կերել։ Հարկաւոր էր խորհել այդ մասին...

Եդեր. Նրանք վերջին պատառն էլ կխլեն։ Այս մարդիկը ամէն բանի ընդունակ են։

Անդրդէ. Այ քեզ օյին! եթէ բանը դրան հասնի, աւելի լաւ է, ինձ ուղղակի գերեզմանատուն տանեն, քան թէ ծերութեան հասակում այստեղից դուրս քշեն։ Մահը ինձ համար մեծ բան չէ։ Հայրս էլ հոգին աւանդելուց չէր վրշտանում. միայն վերջի րոպէներին մի փոքր դժուարին եղաւ։ Իսկ երբ ես նորա հետ միասին անկողնում պարկեցի, նա նորից հանգստացաւ։

Երբ մտաբերում եմ, այն ժամանակ տասնհրեք տարեկան երեխայ էի... Սաստիկ յոգնած էի և հիւանդի կողքին քնեցի։ Այն ժամանակ շատ բան էլ չէի հասկանում, իսկ երբ արթնացայ, նա արդէն սառած էր։

Պ. Բաումերտ. (Պատուհանից յետոյ) Բերտա ապուր բեր Անդրդէի համար, վառարանումն է։

Բերտա. Անուշ արէք, քեռի Անդրդէ։

Անդրդէ. (Արտասուքը աչքերին ուտում է) Ա՛յ քեզ բան։

Ծ. Բաումերտ. (Թաւայից միսը ուտում է)։

Պ. Բաումերտ. Ծերուկ չէ՞իր կարող սպասել, մինչև Բերտան սեղանը կպատրաստէր։

Ծ. Բաումերտ. (Ծամծմելով) Ահա երկու տարի է, որ չեմ հաղորդուել։ Զէ՞ որ դա այն ժամանակն էր, երբ ես մաքուր սիրտուկս վաճառեցի և այդ փողով մի կտոր խոզի միս առանք։ Այն օրից մինչև հիմայ մսի համ չեմ տեսել։

Եդեր. Միսը մեզ համար չէ, մեր փոխարէն գործարանատէրերն են ուտում։ Այ, նրանք որ իւղի մէջ լողում են։ Ով չի հաւատում թող գնայ Բիլաու, և Պետերսվալդաու, այնտեղ դարմացած կմնայ։ Այնտեղ ղղեակը ղղեակի եռևից, պալատներ, մէկը միւսից գեղեցիկ և այդ բոլորը գործարանատէրերին է պատկանում։ Ահագին ապակիներ, աշտարակներ, երկաթեայ վանդակապատեր։ Այն երջանիկ կողմերում

չքաւորութեան մասին չեն խօսում։ Նրանց ունեցածը կբաւականացնի թէ տապակածի և թէ խմորեղէնի, թէ սեպհական կառքերի, թէ դաստիարակչուհիների, և էլ Աստուած գիտէ թէ ինչ զահրումարների։ Ծարպից տրաքւում են։ Չեն իմանում թէ, ինչ հնարեն հարստութիւնից ու զոռոզութիւնից։

Անդրդէ. Անցեալներումն ամէն ինչ բոլորովին ուրիշ կերպ էր դասաւորուած։ Այն ժամանակները գործարանատէրերը իրանք էլ էին ապրում, ջուլհակներին էլ էին ապրեցնում։ Իսկ այժմ իրանք մենակ են վատնում։ Եւ այդ բոլորը նրանից է, որ իմ կարծիքով, բարձր դասակարգը ոչ Աստուծուն է հաւատում, ոչ սատանային։ Աստծու պատուիրանքները մոռացել են և նրա պատժից էլ չեն վախենում։ Մեր վերջին կտոր հացը գողանում, վերջին ապրուստի միջոցը խլում։ Մեր բոլոր անբախտութիւնն այդ մարդկանցից է, առաջ գալիս։ Եթէ մեր գործարանատէրերը լաւ մարդիկ լինէին, մեր օրերն էլ սեւացած չէին լինիլ։

Եդեր. Դէհ, լսեցէք, ես ձեզ մի հրաշալի բան կարդամ. (գրպանից հանում է մի քանի թերթ թուղթ) Լսիր Աւգուստ! վաղիր դինետուն մի շիշ օղի բեր... Էհ, Աւգուստ դու էլի առաջուայ պէս շարունակ ծիծաղում ես։

Պ. Բաումերտ, Զեմ իմանում մեր փոքրիկին ինչ է պատահել, միշտ ուրախ է։ Ամեն դատարկ բանի համար ատամները բաց է անում։ Դէհ, վազիր, վազիր! (Աւգուստը դուրս է գնում դատարկ շիշը ձեռքին) Ի՞նչ ծերուկ, երևի շատ համով է!

Ծ. Բաումերտ. (Ծամում է ուտելուց և խմելուց ոգեւորուած) Մորից, դու մեր գործի համար ամենայարմար մարդն ես, դու գրագէտ ես, ջուլհակների գործերի դրութիւնը քեզ մօտ ծանօթ է, քո սիրտը խեղճ ջուլհակների համար ցաւում է, ինչ կլինէր, եթէ դու մեր գործի ղլուխն անցնէիր!

Եդեր. Էհ, եթէ միայն հարցը դրանումն է, դա ինձ

համար խաղալիք է։ Ես այդ գարշելի գործարանատէրերի բուրդը կրզէի։ Այդ ինձ համար դժուար չէ։ Ես վարող բնաւորութիւն ունիմ. իսկ եթէ համը տանեն այն ժամանակ ձեր Դրէյսիդերին կբռնեմ մի ձեռքում, իսկ Դիտրիխին միւսում և այնպէս կը թրխկացնեմ ճակատները իրար, որ աչքներից կրակ կը թափուի։ Այ, եթէ մենք բոլորս համերաշխ համախմբուէինք, մենք, այն օլինը կրբերենք նրանց գլխին!... Ո՞ր, հա՜, յեաոյ կասէինք նրանց, այս ենք ուզում, այն ենք ուզում, իսկ դա չենք ուզում։ Այն ժամանակ նրանք ուրիշ պար կը պարէին։ Հէնց, որ տեսան մենք գործին լրջօրէն ենք կպել, իսկոյն մոմ կդառնային։ Լաւ կճանաչեմ այդ խոնարհներին։ Նրանք բոլորն էլ վախկոտ են, այդ անպիտանները։

Պ. Բաումերտ Իրաւ է, իրաւ ես ասում։ Ես չար չեմ, ես միշտ ասում էի. հարկաւոր է որ հարուստ մարդիկ էլ լինին։ Բայց եթէ այդպէս է...

Եգեր. Իսկ իմ կարծիքով սատանան նրանց բոլորին տանի, նրանց ամբողջ սերունդը ոչնչանայ!

Բերտա. Իսկ ո՞ւր է հայրիկը (Ծ. Բաումերտ այդ ժամանակը սենեակից դուրս է գալիս)։

Պ. Բաումերտ. Զգիտեմ ո՞ւր կլինի գնացած։

Բերտա. Գուցէ... մսեղենից հիւանդացաւ, նա վաղուց ետէ սովորել...

Պ. Բաումերտ. (Վհատութեամբ լալիս է). Դէհ, տեսնո՞ւմ էք, նա չի մարսիլ կերածը. ինչ լաւ կերակուր ուտի իսկոյն ետ կբերի։

Ծ. Բաումերտ. (վերադառնում է դառնութիւնից լալով) Վախճանս մօտ է, հոգիս դուրս եկաւ, եթէ պատահմամբ մի որևէ օրինաւոր կերակուր ուտում եմ, այն էլ անօգուտ է անցնում, չի մնում ստամոքսումս, (շարունակում է լալ, նստում է աթոռի վերայ, վառարանի մօտ)։

Եգեր. (Կատաղի զայրոյթով ֆանատիկորէն) Իսկ այստեղ մեզնից ոչ հեռու բնակւում են մարդիկ, մի որևէ մե-

ծաւոր, հաստափոր, տխմար, որը տարին 12 ամիս անգործ պտտում է...

Եւ այդպիսի մարդիկ համարձակւում են ասել որ ջուլհակների կեանքը վատ չէր անցնիլ, եթէ միայն ծուլութիւն չանէին։

Անդրդէ. Դրանք մարդիկ չեն, այլ հրէշներ։

Եգեր. Էհ, բաւական է, հանդիստ եղէք, նա իրեն հասանելիքը ստացաւ։ Մենք շէկ Բեկկերի հետ միասին նրան մի լաւ հիւրասիրեցինք։ Եւ դեռ բացի դրանից հեռանալուց առաջ էլ ահեղ դատաստանի երգը երգեցինք։

Անդրդէ. Աստուած իմ, Աստուած իմ. այդ այն ե՞րգն է։

Եգեր. Այո, այո հէնց նա է։

Անդրդէ. Դրէյսիդերեա՞ն է կոչւում նա, թէ ինչպէս։

Եգեր. Ահա ես կկարդամ։

Պ. Բաումերտ. Ո՞վ է հնարել այդ երգը։

Եգեր. Այդ ոչ մի մարդու յայտնի չէ, դէհ, լսեցէք. (կարդում է աշակերտի պէս, վանկերով, սխալ շեշտելով, բայց անպայման խիստ զգացմունքով։ Նրա ձայնի մէջ լսւում է վհատութիւն, ցաւ, կատաղութիւն, վրէժխնդրութեան ծարաւ).

Այստեղ մեր գիւղում, կայ մի դատարան,
Մի զարհուրելի դաժան տանջարան,
Ուր բնաւ մարդիկ չեն աճապարում
Դատապարտելի կեանքի վերջ տալու։

Այստեղ տանջում են առանց փութալու
Այստեղ դժողք է, դժոխք սոսկալի,
Այստեղ համրում են առանց յոգնելու
Հառաչը մարդկանց դառն ու ողբալի։

Ծ. Բաումերտ. (Ոգևորուած Եգերի երգից ցնցուած մինչև հոգու խորքերը. մի քանի անգամ հազիւ է զսպում իրեն,

որպէս զի չխանգարի Եղերին։ Զկարողանալով այլ ևս տիրել իւր զրգիռը, նա դառնում է դէպի իւր կինը և փնթփնթում լալով և ծիծաղելով) Այստեղ տանջանքների խափանելու տեղ է... ճշմարիտ է ասում նա, ով գրել է այդ երգը... ինքդ կարող ես վկայել.., ինչպէս է... այստեղ հառաչանքների... ինչպէս... այստեղ ծանր հառաչանքների հաշիւ չկայ...

Եղեր. Այստեղ դառն վշտերին չափ ու սահման չկայ։

Ծ. Բաումերտ. Դու հո գիտես, թէ մենք ինչքան ենք հառաչում ամէն օր գործի ժամանակ էլ հանդստութեան ժամանակ էլ։

Եղեր. (Նոյն միջոցին երբ Անդրոպէն գործը թողնելով սառած և խորը ցնցուած մնացել է տեղն ու տեղը. իսկ Բաումերտ տատը և Բերտան մի քանի անգամ սրբում են աչքերը, նա շարունակում է կարդալ)։

Դրէյսիդերները դահիճ են մի-մի.
Նրա ծառաները քոռ ոստիկան,
Առանց ամօթի խղճահարութեան
Պոկում են կաշին խղճուկ բանւորի։

Ծ. Բաումերտ. (Դողալով կատաղութիւնից։ Ոտքերով խփում է գետնին)։ Այո, ձեզ ամենքիդ հարկաւոր է փոս!...

Եղեր. (Կարդում է)։

Սրիկաներ առանց բացառութեան...
Դուք դժոխային ահռելի դևեր.
Դուք որ ծծում էք արիւնն աղքատի
Թող մեր անէծքը ձեր վարձը լինի։

Անդրոպէ. Այդպէս, այդպէս, անէծք կգայ։

Ծ. Բաումերտ. (Սպառնալով բռունցքը ցոյց է տալիս)։ Դուք խեղճերի կերակուրն էք լափում։

Եղեր. (Կարդում է)։

Զուր է արտասուք, զուր է աղաչանք,
Ցուսահատութեան ճիչ ու պաղատանք.
Թէ չէք հաւանում, քաղցից սատկեցէք
Կին ու զաւակով սովամահ եղէք!...

Ծ. Բաումերտ. Ինչպէս, այդ ինչպէս է գրուած այնտեղ, այստեղ, արտասուքներ, էլ չեն օգնիլ, ամէն մի խօսքը... ամէն մի խօսքը... բոլորը ճիշտ է. ինչպէս կայ։ Այստեղ արցունքներով էլ չես օգնիլ։

Անդրոպէ. Այդպէս, այդպէս, ապա, ապա... այո, ոչ մի բանով չես կարող օգնել։

Եղեր. (Կարդում է)։

Եւ այս ցաւերը անծայր, անվերջ,
Եւ տառապանքը այս թշուառների.
Կատր հաց անգամ չկայ տանը մէջ
Ո՞հ, մի՞թէ սրանք չեն ողորմելի։

Խղճահարութեան, զութ ու վէհ զգացմունք,
Չեն տրւում ձեզ պէս մարդակերներին.
Գողի ձեռներով խլել էք ուզում
Աշխատաւորի շապիկը վերջին։

Ծ. Բաումերտ. (Վեր է թռչում ուժգին կատաղութեամբ)։ Բոլորը իրաւացի է։ Մեր դժբախտութիւնը ձեզ ուրախութիւն է... Ուրախութիւն մեր տանջանքը։—Ահա կանգնած եմ ես, Բոբերտ Բաումերտս, ջուլհակ վարպետ Կաշբախում։ Ո՞վ կհամարձակուի իմ մասին մի որևէ բան ասել... Ես ամբողջ կեանքս աղնիւ մարդ էի, բայց նայեցէք ինձ վերայ! Ի՞նչ օգուտ ունեցայ, ինչի՞ նման եմ ես... Ի՞նչ դարձրին նրանք ինձ... Այստեղ մի տանջանքների բանտ է... Այստեղ տանջանքների կայարան է... (մեկնում է իւր ձեռքերը)։ Ահա, հիացէք, կաշին ու ոսկորն է մնացել։ Դուք բոլորդ խարեբաներ

էք, բոլորդ խաբեբաներ էք... առանց բացառութեան! (Աթոռի վերայ է ընկնում, լացից և վհատութիւնից, ու չարութիւնից ցնցուած)։

Անզօրգէ. (Շպրտում է և բարկութիւնից ամբողջ մարմնով դողալով փնթփնթում է)։

Եւ այդ պէտք է փոխուի, ասում եմ, քեզ այժմ իսկոյն ևեթ։ Մենք այլ ևս չենք կամենում համբերել. մենք այլ ևս չենք համբերիլ, ինչ լինում է թող լինի։

Վ. ԱՐԱԳՈՑՐ.

ԵՐՐՈՐԴ ԳՈՐԾՈՂՈՒԹԵԱՆ ԱՆՁԻՆՔ.

Բեկկեր.
Մորից Եգեր.
Ծ. Բաումերտ.
Ծ. Անզօրգէ.
Վելցել, գինետան տէր.
Տ. Վելցել, նրա աղջիկը.
Կոմիվոյաժոր.
Վիգանդ, ատաղձագործ.
Հորնիգ, ցնցոտավաճառ.
Գիւղացի.
Անտառապահ.
Վիտտիխ, դարբին.
Կուտչէ, ժանդարմ.
Մի քանի ծեր և երիտասարդ ջուլհակներ.

ԵՐՐՈՐԴ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ

Պետերսվալդաուի գինետանը մեծ սենեակ, գերաններից շինած առաստաղ, յենուած փայտի սիւների վերայ, Ռչտեղում։ Սիւների չորս կողմը սեղան։ Սիւնից աջ ետևի կողմում, երևում է մուտքի դրան մի մասը, որից երևում է այն բնակարանը, որտեղ գտնւում են տակառներ և գարեջրագործական պիտոյքներ։ Ներսում, դրան աջ կողմում, անկիւնում դախլան, փայտից միջնապատ, մարգարոյ, դարակներ որոնց վրայ դասաւորուած են (խմիչքների) ըմպելիքների պիտոյքներ։ Մի քիչ հեռու պատի մէջ պահարան մի քանի կարգ շշերով։ Միջնապատի և պահարանի մէջտեղը—փոքրիկ տարածութիւն, տիրոջ համար։ Դախլի առաջ սեղան, գունաւոր սփռոցով ծածկած. սեղանի վրայ գեղեցիկ կախած լամպար, նրա չորս կողմում մի քանի հիւսած աթոռներ։ Սեղանից ոչ հեռու աջակողմեան պատում մի դուռ հեռևեալ մակագրութեամբ։ „Գինետուն“, որը տանում է „մաքուր բնակարանը“։ Մի քիչ աւելի առաջ աջ կողմում չիչխկում է սեղանի վրայ հնածև դրուած ժամացոյցը։ Մուտքի դրան ձախ կողմում, ետևի պատի մօտ մի սեղան վրան շիշեր և բաժակներ դասաւորուած, իսկ նրա առաջ անկիւնում, մեծ յախճապակից վառարան ծախկողմեան պատում, երեք փոքրիկ լուսամուտ, նրանց տակը դրուած է նստարան նստարանի առաջ, ամէն մի լուսամուտի դիմաց մի երկար սեղան է դրուած նեղ կողմով դարձրած դէպի պատը։ Սեղանների երկար կողմերի հանդէպ դրուած են թիկնաւոր նստարաններ, իսկ նեղ կողմերի դիմացը, որոնք դէպի սենեակի ներսն են դարձրած մի մի փայտեայ աթոռ։ Պատերը կապոյտ գոյնով են ներկած։ Պատերից կախուած են յայտարարութիւններ, (փայտեայ հասարակ փորագրած) նկարներ, ծիծանկարներ, նրանց մէջ Ֆրիդերիկոս Վիլհելմ IV-ի պատկերը։

Շոլց Վելցել. յաղթանդամ, յիսունից անց, տակառից գարեջուրը քամելով բաժակի մէջ։

Տիկ. Վելցել՝ վառարանի մօտ ուրթոյում է, վայելչակազմ, մաքուր հագնուած, մօտ երեսուն և հինգ տարեկան։

Աննա Վելցել. տասն և եօթ ամեայ, դեղեցիկ, մաքուր հագնուած, հրաշալի շիկահեր մի անձ, նստած է ձեռագործը ձեռքին սփռոցով ծածկած սեղանի առաջ։

Մի վայրկեան նա թողնում է ձեռագործը և ականջ է դնում, որովհետև հեռուից լսւում են աշակերտների խմբի թաղման երգի ձայնը։

Վիգանդ վարպետը, առաղձագործ, բանւորական հագուստով, նստած է նոյնպիսի սեղանի առջև և խմում է, Բաւարիայի գարեջուր. այդ մարդու վրայ նկատւում է, որ նա հասկանում է թէ կեանքի մէջ որոշ նպատակների հասնելու համար հարկաւոր է լինել խորամանկ, ճարպիկ, և ոչ մի բանից չքաշուելով առաջ գնալ։

Կոմիվոյաժոր. Սիւնին կից սեղանի առաջ եռանդով ծամում է գերմանական բիֆշտեկը։ Միջահասակ, լաւ գերացած, ուրախ բնաւորութեամբ, աշխոյժ և յանդուգն։ Վերջին տարազով հագնուած ճանապարհական պիտոյքները, ճանապարհորդական պայուսակ, նմուշներով արկղ, հովանոց, վերարկու և թաւշեայ պլեդ, այդ բոլորը դարսուած են նրա մօտ աթոռների վրայ։

Վելցել. (Տալով Կոմիվոյաժորին մի բաժակ գարեջուր, մի կողմը, Վիգնադին) Սատանան գիտէ, թէ այսօր ինչ է կատարւում Պետերսվալդայում։

Վիգանդ. (Բարձր, ինչպէս խողովակի միջից հնչուող ձայնով) Չէ՞ որ այսօր Դրէյսիդերի մօտ ջուլհակները իրանց գործուածքներն են յանձնում։

Տիկ. Վելցել. Առաջները այսպիսի կենդանութիւն երբէք չէ եղել։

Վիգանդ. Այդ գուցէ նրանից է, որ նա կամենում է նոր երկու հարիւր ջուլհակ վարձել։

Տիկ. Վելցել. (Շարունակելով ուրթոյել)։ Այո, այո հաւանական է։ Եթէ նրան երկու հարիւր լինի հարկաւոր, վեց հարիւր կգան։ Մեզ մօտ նրանցից շատ կան։

Վիգանդ. Ի՞նչ ասել կուզէ—մինչև անդամ շատ շատ։ Եւ որքան էլ նրանց կեանքը անտանելի լինի, դարձեալ չեն կոտորւում։ Աւելի շատ են ծնում, քան թէ գործի համար մարդիկ են հարկաւոր։ (Երգեցիկ խմբի ձայնը մի վայրկեան աւելի բարձր է լսւում)։ Ահա և թաղում։ Ջուլհակ Նինավիդն է մեռել։

Վելցել. Բայց բաւական երկար քաշ տուեց նա, ի՞նչքան ժամանակ է նա ուրուականի պէս քարշ էր գալիս։

Վիգանդ. Հաւատո՞ւմ ես, Վելցել, գաղաղը այնքան փոքրը էր, ես դեռ կեանքումս այդպիսին չեմ շինել։

Իսկ դիակը գուցէ ինչնուն ֆունտ էլ չքաշէր։

Կոմիվոյաժոր. (Ծամծմելով)։ Ահա թէ ես ինչը չեմ հասկանում... լրագրին նայելով միայն կարդում ես ամենասարսափելի պատմութիւններ ջուլհակների կարիքների մասին։

Այնպիսի գաղափար ես կազմում, կարծես այստեղի մարդկանց երեք քառորդը քաղցածութիւնից կոտորուել է։ Իսկ նայում ես այս թաղումներին. ես հէնց նոր գիւղն էի մտնում—երաժշտութեան ուսուցիչ, աշակերտներ, քահանայ, իսկ նրանց ետևը մի ամբողջ մարդկանց խումբ—Տէր իմ Աստուած, կարծես Զինացոց կայսրին են թաղում։ Եթէ մար-

դիկ կարողանում են այդ ծախքերն անել... (խմում է գարեջուրը, բաժակը ուրախ դնելով, թեթևամիտ եղանակով)։ Ճիշտ չէ՞ օրիորդ, միթէ՞ ես իրաւացի չեմ։

Աննա. (Շփոթուած ժպտում է և շարունակում է ձեռագործը)։

Կոմիվոյաժոր. Երևի նոր հողաթափներ են մայրիկի համար։

Վելցել. Ոչ, ես այդպիսի բաներ ոտերիս չէի հագնիլ։

Կոմիվոյաժոր. Ի՞նչ էք ասում! Ես իմ կարողութեան կէսը կտայի եթէ այդ հողաթափները ինձ համար լինէին նշանակած։

Տիկ. Վելցել. Նա այդպիսի բաները դնահատել չգիտէ։

Վիզանդ. (Շատ անգամ հաղալով, քաշում է աթոռն ու պատրաստւում է խօսել)։ Իսկ դուք Թաղման մասին զարմանալի ճիշտ կարծիք յայտնեցիք, պարոն։ Դէհ, ասացէք, տիրուհի, միթէ՞ դա մեզանում համեստ Թաղում չէր։

Կոմիվոյաժոր. Բայց հեռաքրքրական է իմանալ յամենայն դէպս, չէ՞ որ այդ Թաղումը ահագին փող կնստի, ուստեղից են դրանք այդ փողերը ճարում։

Վիզանդ. Ներեցէք ինձ պարոն, այդ արդէն այստեղացի մեր խեղճ ժողովրդի անհասկացողութիւնն է։ Այսպէս ասած, նրանք անհեթեթ գաղափար ունին կազմած մեռելների յիշատակը և նրանց սրբազան աճիւնները յարգելու պարտականութեան մասին։ Օրինակի համար. եթէ հանգուցեալը մէկի ծնող է, այստեղ գոյութիւն ունի նախապաշարմունքը, որ մեռածի մերձաւոր սերունդը և ժառանգները ծախսում են իրանց վերջի կոպէկները, և թէ այդ էլ չի բաւականանում, այն ժամանակ նրանք փող են վերցնում հարուստ բարեկամներից և մինչև կոկորդը խրւում պարտքի մէջ։ Փող են վերցնում արժանապատիւ պաստորից, կեստերից և բոլոր միւս դրանց նման անձերից։ Դեռ ինչքան ծախսեր կան հիւրասիրութեան և ուրիշ բաների համար։ Ոչ, ոչ ծնողներին յարգելը իմ կարծիքով գովելի է, բայց ոչ այնպէս, որ յետոյ բոլոր

կենդանի մնացածները ամբողջ կեանքը չարչարուեն և տանջուեն։

Կոմիվոյաժոր. Թոյլ տուէք ինձ, չէ՞ որ պաստորները պարտաւոր են այդ բանը ժողովրդին հասկացնել։

Վիզանդ. Ներեցէք խնդրեմ, պարոն, պարտք եմ համարում ձեզ հակաճառել, որ մեզանում ամէն մի համայնք ունի իւր եկեղեցին և պարտաւոր է իւր պաստորին պահել։

Իսկ Թաղման մեծ հանդէսներից հոդևորականութիւնը իւր մեծ եկամուտն ունի։ Թաղումը ինչքան փարթամ է այնքան եկամուտը շատ է։ Ով այստեղի բանուորների կեանքին ծանօթ է, նա կարող է հաստատել, որ իրենք պարոն ստացողները ակամայից են գնում համեստ Թաղումների։

Հորնիդ. (Մտնում է փոքրիկ, կողքը ծուռ մի ծերունի, հնոտեավաճառ, բեռը մէջքին)։ Բարի աջողում, մի ռիւմկա հասարակ օղի խնդրեմ։ Հէնց լաւ միաս եկաւ, տիկին, ցնցոտիներ չունէ՞ք ծախու, իսկ դո՞ւք, օրիորդ։ Իմ սայլակումս կան զանազան գեղեցիկ ժապաւէններ, մագերի համար, շապկի երիզներ, կապիճներ, գնդասեղներ, վարսակալներ, հանդոյցներ, չափոտաստներ, այդ բոլորը ես քեզ կզիջեմ մի քանի լաթերի։ (Զայնը փոխելով)։ Այդ, լաթերից փալասներից պատրաստւում են գեղեցիկ Թուղթ, իսկ նրա վրայ ձեր սիրելին կգրի ձեզ բարևագիր։

Աննա. Խոնարհաբար շնորհակալ եմ, ես փեսացու չեմ ուզում։

Տիկ. Վելցել. (Ոռթոյելով)։ Դա այնպիսի աղջիկ է, մարդու գնալու մասին լսել էլ չի ցանկանում։

Կոմիվոյաժոր. (Վեր թռչելով ըստ երևոյթին, ուրախացած և մօտենում է սփռոցով ծածկած սեղանին և մեկնում Աննային իւր ձեռքը)։ Շատ խելացի միտք է, օրիորդ, վարուեցէք, միշտ այդպէս, ինչպէս որ ես եմ վարւում, տուէք ինձ ձեր թաթիկը։ Մենք երկուսս էլ ազատ կմնանք։

Աննա. (Սաստիկ կարմրելով) Բայց չէ՞ որ դուք արդէն ամուսնացած էք։

Կոմիվոյաժոր. Օ, ՝ն, Աստուած մի արասցէ, այդ մի-այն հէնց այնպէս! Դուք այդ կարծել էք երևի նրանից, որ իմ մատիս մատանի կայ: Ես այդ մատիս դրել եմ, որպէս զի իմ դիւթիչ անձնաւորութիւնս ազատեմ դանազան չար դիտաւորութիւններից. բայց ես ձեզանից ամենևին չեմ վախենում: (Մատանին դրպանը դնելով): Ասացէք, աղաչում եմ, լրջօրէն, օրիորդ, դուք բոլորովին մտադիր չէք... այնպէս ասած... քիչ մարդու գնալ:

Աննա. (Գլուխը շարժելով): Ա՜յ քեզ բան:

Տիկ. Վելցել. Նա մարդու չի գնալ: Ջոկ բան է, եթէ շատ յարմար փեսացու լինի:

Կոմիվոյաժոր. Բայց չեմ հասկանում, ինչու մի հարուստ Սիլեզեացի կալուածատէր պսակուեց, իւր մօր աղախնու հետ: Ա՜յ, հէնց գործարանատէր Դրէյսիզերը, գիւղական տանուտէրի աղջկան է առել: Նա ձեր դեղեցկութեան կէսն էլ չունի օրիորդ: Իսկ այժմ նա սեպհական կառքով է պտտում իւր Լիվրի ծառայով: Ինչու մարդու չգնալ այդ տեսակ դէպք պատահելուց: (Ման է գալիս սենեակում, ծգծգուելով և տրրորուելով) Ես հիմա մի թաս սուրճ կխմեմ:

Անզօրդէ և Ծ. Բաումերտ մտնում են, ամէն մէկը բեռնուած և կամաց ու կորագլուխ նստում են Հորնիգի առաջ դրուած սեղանի մօտ ծախ կողմում):

Վելցել. Բարով էք եկել, վերջապէս Անզօրդէ պապը մեր կողմերում երևեցաւ:

Հորնիգ. Սևացած ծակից վերջապէս դուրս եկաւ:

Անզօրդէ. (Անօգնական և բացարձակ վիրաւորուած, շփոթուած): Ա՛յ, էլի խծուծ եմ վերցրել:

Բաումերտ. Կամեցաւ 10 դրոշ աշխատել:

Անզօրդէ. Երբէք չէի համածայնուիլ գնալ այդ բանին, բայց զամբիւղի գործս վերջացել է:

Վիզանդ. Այդ աւելի լաւ է քան ոչինչ: Նա չէ՞ որ հէնց դրա համար էլ հոգ է տանում, որ ձեզ գործ տայ, ես Դրէյսիզերին լաւ եմ ճանաչում: Մի շաբաթ առաջ ես նրա մօտ

պատուհանի շրջանակներ էի դնում: Այն ժամանակ մենք էլ խօսեցինք այդ մասին: Նա հէնց խղճահարուելուց էլ անում է այդ ամէնը:

Անզօրդէ. Ահա, այդպէս, յետոյ, յետոյ!

Վելցել. (Ջուլհակների առաջ մի թաս օղի դնելով): Ահա ձեզ: Բայց ասա Անզօրդէ, քանի ժամանակ է, որ երեսդ չես ածիլել. այս մարդը հետաքրքրուում է այդ բանով:

Կոմիվոյաժոր. (Աղաղակում է): Ախ, պարոն, ես երբէք այդպիսի բան չեմ ասել: Վարպետը ինձ զարմացրեց իւր պատկառելի դէմքով: Չէ՞ որ այդպիսի հսկաների յաճախ չենք պատահում:

Անզօրդէ. (Շփոթուած գլուխը քորում է): Ա՜յ, հա, այդպէս, յետոյ, յետոյ:

Կոմիվոյաժոր. Այդպիսի նախնական ուժեղներ այժմ շատ հազիւ են պատահում: Կրթութիւնը այնպէս կտրատել է մեր ամենքի թևերը... բայց ես գոնէ, դեռ ընդունակ եմ հրրճուելու, երբ տեսնում եմ այնպիսի նահապետական անարատութիւն:

Այդ ծիլ ծիլ յոնքերը, այդ զզզուած մօրուքը...

Հորնիգ. Գիտէ՞ք ինչ կայ, յարգելի պարոն, ահա թէ ես ձեզ ինչ կասեմ. այստեղի ժողովուրդը սափրիչի համար փող չունի, իսկ ածիլի առնելը ամենևին անկարելի է նրանց համար: Ինչ որ բուսել է, այն էլ աճում մեծանում է:

Իւրեանց արտաքինի համար նրանք ոչինչ չեն ծախսում:

Կոմիվոյաժոր. Թոյլ տուէք, սիրելիս, բայց մի՞թէ ես... (կամաց տանտիրոջը): Ի՞նչ էք կարծում, կարելի՞ է այս մաղերաւոր մարդուն մի բաժակ գարեջուր առաջարկել:

Վելցել. Օ՜յ, ՝ն, Աստուած մի արասցէ, նա չի ընդունիլ! Նա այդպէս մի առանձին բնաւորութիւն ունի:

Կոմիվոյաժոր. Դէ՜հ, հարկաւոր չէ: Դուք թոյլ կտաք, օրիորդ, (նստում է սփռոցով ծածկած սեղանի մօտ) կարող եմ ձեզ հաւատացնել, որ հէնց որ ես ներս եկայ, ձեր մաղերը աչքիս ընկան: Այդ կիսաթափանց գոյնը, այդ փափկա-

թիչ բրդոտութիւնը... (կարծես, հիացման մէջ, համբուրում է իւր մատները)։ Եւ այդ հասունացած հասկի գոյնը... Եթէ դուք ձեր մազերով Բերլին գաք, այնտեղ մեծ ֆուրոր կանէք (տպաւորութիւն) parol d'honneur, այդպիսի մազերով դուք կարող էք ներկայանալ պալատում... (յետ նայելով զննում է նրա մազերը, հրաշալի է, ուղղակի հրաշալի։

Վիգանդ. Հէնց դրա համար էլ այդպիսի լաւ մականուն է ստացել։

Կոմիվոյաժոր. Ի՞նչ մականուն։

Աննա. (Բոլոր ժամանակ ինքն իրեն ծիծաղելով)։ Մի՞թ լսել դրան։

Հորնիգ. Աղուէս, այդպէս չէ՞!

Վելցել. Դադարեցէք խնդրեմ, դուք իմ աղջկան բոլորովին խելքից կհանէք, նրան առանց այդ էլ խելքից հանել են։ Դուքս Թաւազայ արէք նրան, իսկ վաղը գուցէ և իշխան կպահանջուի։

Տիկ. Վելցել. Մի յանդիմանիր նրան, խնդրեմ, դրա մէջ ոչ մի մեղք բան չկայ, երբ մարդ աւելի լաւն է փնտռում։ Ամենքը հօ քեզ նման չեն մտածում, և ոչինչ լաւ բան չէր լինիլ, եթէ ամենքը նստէին մի կէտում և չշարժուէին տեղից։

Եթէ Դրէյսիգերի պապն էլ քեզ նման մտածէր, այն ժամանակ նա էլ խեղճ ջուլհակ կմնար։ Իսկ այժմ նրանք ինչպէս հարստացել են, ծերունի Սատմդրան էլ խեղճ ջուլհակ էր, իսկ այժմ նա 12 մեծ կալուածք ունի, և բացի այդ բոլորից էլ ազնուական է դարձել։

Վիգանդ. Ինչ որ ճիշտ է, ճիշտ է, Վելցել։ Այս անգամ քո կինը ուղիղ է դատում։ Նրա ասածը ես երկու ձեռքով կստորագրեմ։ Ես քեզ նման մտածէի, ուր կլինին հիմա իմ եօթը աշակերտները։

Հորնիգ. Ի՞նչ ասել կուզէ, դու գործ բռնել գիտես, այդ բանը քո մասին բարեկամդ էլ, Թշնամիդ էլ կասեն։ Ջուլհակը դեռ կենդանի է, բայց դագաղը նրա համար արդէն պատրաստ է։

Վիգանդ. Ով չի կամենում դատարկ մնալ, ականջը սուր պիտի պահէ։

Հորնիգ. Այո, այո, դու արդէն ականջներդ շատ սուր ես պահում։ Բժշկից լաւ գիտես, թէ ջուլհակի որդին երբ կմեռնի։

Վիգանդ. (Բռնի ժպտում է, յետոյ յանկարծ բարկանալով)։ Իսկ դու պոլիցեայից աւելի լաւ գիտես, թէ ջուլհակներից որն է անմաքուր, կամ որն է նրանցից ամէն շաբաթ կաժերի մի լաւ պաշար պատրաստում։ Դու դալիս ես լաթ ու փալասների համար, բայց եթէ պատահի, դէմ չես նաև խծուծ բերել։

Հորնիգ. Իսկ դու քո եկամուտներդ, գերեզմանատանն ես ժողովում։ Ինչքան շատ մարդ մեռնի, այնքան քեզ համար լաւ է։ Նայում ես թէ ինչքան մանուկների գերեզմաններ կան, և միայն փորիդ ես խփում մտածելով. «Այս տարի էլ լաւ տարի եղաւ, դարձեալ շատ փոքրիկ ննջեցեալներ կան, որոնք մայիսուայ բղեզների նման թափւում էին ծառերից։ Կարելի է այդ առիթով ամէն շաբաթ մի 1/4 օրի էլ աւելի կոնծել»։

Վիգանդ. Ինչ կայ, դրա փոխարէն էլ ես թագցնող չեմ դառնալ։

Հորնիգ. Դու միայն հարուստ գործարանատէրերին կրրկնակի հաշիւ ես ցոյց տալիս և դէմ չես Դրէյսիգերի շինութիւնից մի աւելորդ տախտակ քարշ տալու, երբ գիշերը մութն է։

Վիգանդ. (Մէջքը նրան դարձնելով)։ Դէ՞հ, խօսիր, ում հետ կամենում ես, միայն ոչ ինձ հետ. (յանկարծ նորից) սրտախօս, անիծեալ!

Հորնիգ. Ննջեցեալների գործի վարպետ։

Վիգանդ. (Ներկայ եղողներին)։ Նա կարողանում է անասունների վերայ էլ ապականութիւն բերել։

Հորնիգ. Զգուշացիր ինքդ, չլինի թէ ես իմ այդ շնորքը, քեզ վերայ ևս փորձեմ։

Վիգանդ. (Դունատուելով)։

Տիկ. Վելցել. (Դուրս եկած էր, և այժմ Կոմիվոյաժորին սուրճ տալով)։ Աւելի լաւ չէ՞ որ սուրճը ձեր սենեակը բերեմ։

Կոմիվոյաժոր. Ի՞նչ էք ասում... Աստուած սիրէք։ (Քրնքոյշ հայեացք ձգելով Աննային)։ Ես կցանկանայի այստեղ նրստել մինչև մահս։

Երիտասարդ անտառապահ և գիւղացի. Բարև ձեզ! (կանգնում են տախտի առաջ)։

Գիւղացի. Մի զոյգ կոճապղպեղ տուէք մեզ։

Վելցել. Բարով էք եկել. (ածում է պահանջուածը։) Երկուսն էլ վերցնում են, զարկում բաժակները խմում ու յետոյ նորից դնում են տախտի վերայ)։

Կոմիվոյաժոր. Պարոն անտառապահ, լա՞ւ ման եկաք։

Անտառապահ. Ոչինչ... Ես Շտէրնզէյֆէրսդորֆից եմ գալիս։ (Առաջին և երկրորդ ծերունի ջուլհակները մտնում են և նստում Անդօրդէի Բաումերտի և Հորնիգի մօտ)։

Կոմիվոյաժոր. Ներեցէք խնդրեմ։ Դուք Հոխգէյմ իշխանների՞ անտառապահն էք։

Անտառապահ. Ոչ, իշխան Կեյլէի։

Կոմիվոյաժոր. Հէնց այդ, հէնց ես էլ այդ էի ուզում ասել։ Այստեղ ձեզանում շատ շատ են այդ իշխանները, բարոնները և զանազան պայծառափայլ անձնաւորութիւնները։ Սատանան գիտէ, թէ ինչ տեսակ յիշողութիւն պիտի ունենալ... Ինչ կանէք դուք կացինը, պարոն անտառապահ։

Անտառապահ. Ես նրան փայտ կտրողներից խլեցի։

Պ. Բաումերտ. Մեր աղաները ամեն մի փայտի կրտորի համար առիթ են որոնում կռուելու։

Կոմիվոյաժոր. Թոյլ տուէք, սակայն, չէ՞ որ մի բանի նման չէ, եթէ ամէն մարդ մտածէր...

Ծ. Բաումերտ. Եթէ կարելի է այսպէս ասել,—այստեղ մանր ու մեծ գողեր, ինչպէս և ամէն տեղ, շատ կան։ Այստեղ այնպիսիները կան, որ փայտի իսկական առևտուր են

անում, և իրանց համար կամաց կամաց հարստանում գողացած փայտերով, իսկ եթէ խեղճ ջուլհակը...

Առաջին ծեր ջուլհակ. (Բաումերտին ընդմիջելով)։ Մենք իրաւունք չունինք ոչ մի ճիւղ վերցնելու, իսկ տերերը, նրանք չեն քաշւում և կենդանի մեղնից կաշին քերթում են։ Այստեղ տուր ապահովութեան և տէրունական փողը վճարիր, զանազան յանձնարարութիւնների համար ծրի վազիր, տէրերի համար աշխատիր, ուզես չուզես!

Անդօրդէ. Դա իսկապէս որ այդպէս է. այն ինչ որ զորձարանատէրը վճարում է մեզ, տէրը միւս գրպանից հանում է։

Երկրորդ ծ. ջուլհակ. (Նստելով հարևան սեղանի մօտ)։ Ես ինքս իրեն, տիրոջ երեսին ասացի. դուք ինձ ներեցէք պարոն կոմս ասում եմ նրան, այս տարի ես այդքան օր տիրոջ համար անկարող եմ ծառայել։ Բոլորովին ուժերիս վեր է։ Իսկ ահա, թէ ինչու. ներեցէք ինձ, ասում եմ, ջուրը ամէն բան փչացրել է ինձանում։ Արոտատեղի ես քիչ ունիմ, բայց եղածն էլ ողողել է։ Ես պէտք է օր ու գիշեր բան անեմ, որ մի կերպ կարողանամ ապրել... Այդպէս տարի լուսացաւ... Էհ, եղբայրք իմ, եղբայրք, ես միայն կանգնած էի և ձեռքերս էի կոտրատում! Այնպէս լաւ արտ էր, և այդ բոլորը յանկարծ բարձրից քշեց դէպի տնակս։ Սերմերն էլ թանկագին էին! Օ՜հ, Աստուած, Աստուա՜ծ! Այնպէս ես զոռում էի, այն ժամանակ, իսկ յետոյ դարձեալ ամբողջ շաբաթը այնպէս լալիս էի, որ արևի լոյս չեմ տեսել... բայց յետոյ դարձեալ ստիպուած էի ինքս հողը սարի գլուխը կրել։

Գիւղացի. (Կոշտ) Դէհ, ի՞նչ կարիք կայ մէկ մէկ հաշուել, ինչ որ Աստուածանից ուղարկւում է, պէտք է համբերել։ Եւ վերջապէս ո՞վ է մեղաւոր, եթէ ձեզանում մի որևէ բան վատ է, դուք ինքներդ էլ հէնց մեղաւոր էք։ Երբ ձեզանում գործը լաւ էր գնում, ինչպէս էիք պահում ձեզ. բոլորը տարւում էիք ու խմում։ Եթէ մի որևէ բան ետ դցէիք, այն ժամանակ սև օրուայ համար էլ մի զրոշ կունենայիք։ Փայտ և խծուծ գողանալու կարիք էլ չէր լինիլ։

Առաջին երիտ. ջուլհակ. (Մի քանի ընկերների հետ նախասենեակում կանգնած, բարձր խօսում է դռների մէջ)։ Ռամիկը միշտ ռամիկ էլ կմնայ, թէկուզ հէնց մինչև կէսօր թաւալի անկողնում!

Առաջին պ. ջուլհակ. Ահա թէ հիմայ բանը ինչպէս է փոխուել հիմա թէ ռամիկը թէ տէրը, մի տեսակ են ձգւում! Օրինակ քեզ բնակարան է հարկաւոր ռամիկը ասում է, այ քեզ ծակ և ինձ աւելի վճարիր, օգնիր և խոտ ու ցորենը հաւաքել, իսկ եթէ չես ուզում, ինչպէս կամենաս ապրիր, ուր ուզում ես! ուրիշի մօտ կգնաս, նա էլ միևնոյնը կասի։

Բաուսերտ. (Կատաղի) Ջուլհակը անասուն է! սրանից երկու կաշի են աշխատում քերթել!

Գիւղացի. (Զարացած)։ Ախ, դուք սոված շներ, մի՞թէ դուք կարող էք արօրի հետ գործ ունենալ, կամ թէ ուղիղ ակօս գցել, կամ թէ վարսակի խուրձը սայլի վրայ բարձել, ինչ բանի էք պէտք դուք։ Պարապ մանգալ և կանանց հետ ընկնել կարող էք! ախ դուք անպէտքներ։ Նատ օգուտ կայ ձեզանից, էլ խօսք չկայ. (միևնոյն ժամանակը վճարում է փողը և հեռանում։ Անտառապահը ծիծաղելով հետևում է նրան։ Վելցելը, ատաղձագործը, Վիդանդը, և տիկ. Վելցելը բարձր ծիծաղում են։ Կոմիվոյաժորը ինքն իրեն է ծիծաղում։ Երբ ծիծաղը դադարում է, տիրում է լռութիւն)։

Հորնիգ. Ռամիկը իսկ և իսկ կատաղի եղն է! Եթէ ինքս չիմանայի այդ լեռներում ապրող գիւղացիների կեանքը... Ինչ բանից չես զարմանալ այնտեղ! Զորս, հինգ հոգով մերկ ընկած են մի հատիկ խոտի դոշակի վրայ։

Կոմիվոյաժոր. (Փափուկ յանդիմանօրէն)։ Թոյլ տուէք սիրելիս, սարերի վրայ ապրողների պակասութիւնների մասին կարծիքները տարբերւում են։ Եթէ դուք կարդալ գիտէք...

Հորնիգ. Որ յրագիրն ուզէք ձեզանից վատ չեմ կարդալ։ Ինչպէս ես չիմանամ, իսկ այստեղի ժողովրդի մէջ ես բաւականին ապրել եմ։ Երբ քառասուն տարի մշտապէս ցցապատուես, վերջի վերջոյ մի բան կսովորես։ Իսկ Ֆուլլերնցիների

հետ ինչ եղաւ... Երեխաները սագերի հետ ագռի մէջ ուտելիք էին փնտրում, մարդիկ մեռնում էին բոլորովին մերկ, ուղղակի քարի յատակի վրայ։ Այնպիսի կարիք կար, որ դազգեահի հոտած սոսինձն էին ուտում։ Սովից հարիւրաւոր ու հազարաւոր մարդիկ էին կոտորւում։

Կոմիվոյաժոր. Եթէ դուք կարդալ իմանայիք, դուք պիտի գիտենայիք, որ պետութիւնը մանրամասն տեղեկութիւններ է հաւաքել և որ...

Հորնիգ. Այդ մենք գիտենք, այդ մենք գիտենք։ Մի որևէ մարդ կգայ տէրութիւնից նշանակուած, որը ոչ մի բան չտեսած, արդէն ամէն բան ամենից լաւ գիտէ, և մի փոքր կգբօսնի առուի բերանի մօտ, որտեղ մեզանում լաւ տներ են շինուած։ Նա շատ էլ մեծ ցանկութիւն չունի իւր մաքուր կոշիկները կեղտոտելու։ Ինքն իրեն կվճռի, որ երևի թէ ամենուրէք էլ այդպէս լաւ է, կնստէ կառքը և տուն կերթայ։ Իսկ յետոյ գրում է Բերլին, որ ոչ մի բանի կարիք չի զգացուում։ Եթէ նա գործով հետաքրքրուէր, այն ժամանակ նեղութիւն կկրէր բարձրանալ գիւղը—այնտեղ, ուր առուակը սկիզբն է առնում, և միւս կողմը, փոքրիկ շէնը, և կրնայէր այն խղճալի խրճիթները, որոնք բոլորովին հեռու են կանգնած։ Զէ՞ որ այդ հին բները սարերում այնքան մրոտուել են (մաշուել են), որ մարդ լուցկին ափսոսում է կպցնել այդ փտած բաները այրելու համար։ Եթէ այդ բոլորը նա տեսնէր, այդպէս չէր գրիլ Բերլին։ Ինձ գիմէին այդ տէրութիւնից ուղարկուած պարոնները, որոնք չեն կամենում հաւատալ, որ մեզանում իսկապէս կարիք կայ։ Ես նրանց ցոյց տալու բան շատ կգտնէի։ Ես նրանց աչքերը կբանայի։ Ես քաղցած ծակ ու ծուկեր կցոյց տայի նրանց։ (Փողոցում լսւում է ջուլհակների երգը)։

Վելցել. Դարձեալ սկսեցին իրանց սատանայական երգը։

Վիդանդ. Նրանք ամբողջ գիւղը տակն ու վրայ կանեն։

Տ. Վելցել. Թւում է թէ փոթորիկ է պատրաստւում։

(Եգեր և Բեկկեր ամբողջ երիտասարդ խմբի գլուխ կանգնած աղմուկով անցնում են նախասենեակից և մտնում գինետուն)։

Եգեր. Էսկադրոն կանգնիր! Նստիր։ (Եկողները ուղղում են դէպի զանազան սեղանները, ուր նստած են ուրիշ ջուլհակներ, և նրանց հետ խօսքի են բռնում)։

Հորնիդ. (Գոչում է Բեկկերին)։ Ասա եղբայր, ձեզանում այդ ինչ բան է կատարւում, այդ ինչու էք դուք ամբողջ խմբերով շրջում (Թափառում)։

Բեկկեր. (Խորհրդաւոր)։ Գուցէ մի որևէ բան է սարքւում։ Այդպէս չէ՞ Մորից։

Հորնիդ. Դէհ, Թողէք անկարգութիւնը։

Բեկկեր. Արիւն արդէն թափուել է, կկամենաս տեսնել. (Թեր բանալով ցոյց է տալիս, արմունկից վերև արեան բծեր, ծաղկի պատաստելուց. նոյն բանը անում են միւս սեղանների մօտ գտնւող ջուլհակները)։

Բեկկեր. Մենք Ֆելդշեր Շմիդտի մօտ էինք, ծաղիկ էինք պատուաստում։

Հորնիդ. Այո, այժմ պարզ է, էլ զարմանալու բան չկայ, որ փողոցում այսպիսի աղմուկ կայ։ Երբ այսպիսի թոկից փախածները գինետներում թափառում են...

Եգեր. (Իւր վրայ վսեմութիւն թողնելով, բարձր)։ Շուտով երկու քառորդ, Վելցել։ Ես վճարում եմ, գուցէ դու կարծում ես թէ զրպանս դատարկ է, սխալւում ես! Եթէ մենք ուզենայինք, միջոց կգտնէինք թէ ինչպէս ամբողջ գիշերը լուսացնէինք, օղի խմէինք, և սուրճ ամէն մի անցորդից ոչ պակաս։ (Երիտասարդ ջուլհակների մէջ ծիծաղ)։

Կոմիվոյաժոր. (Կոմիքական զարմացմամբ)։ Չլինի՞ թէ ինձ էք ակնարկում։ (Տանտիկինը, տանտէրը, աղջիկը, ատաղձագործը, Վիգանդը և ինքը Կոմիվոյաժորը ծիծաղում են)։

Եգեր. Ինչպէս ասում են, ահը վատ է քանց մահը։

Կոմիվոյաժոր. Թոյլ տուէք պարոն, ինչպէս երևում է ձեր գործերը շատ լաւ են գնում։

Եգեր. Այո, չեմ կարող դանդատուել։ Ես չէ՞ որ Կոմիվոյաժոր եմ նրբակերպ ապրանքների մասում։ Գործակատարների հետ եկամուտը կէս եմ անում։ Քանի ջուլհակները շատ են քաղցած մնում, այնքան ես շատ եմ չաղանում։ Ցայտնի բան է, կատուի ծիծաղը, մկների լացն է։

Բեկկեր. Գեղեցիկ է ասուած։ Քո կենացդ Մորից։

Վելցել. (Օղին բերում է. դախլի մօտ վերադառնալով կանգնում է իւր սովորական անտարբերութեամբ ծանր և դանդախկոտ դառնում է դէպի ջուլհակները. հանդարտ և խորհրդաւոր ձայնով)։ Իսկ դուք պարոնին հանդիստ թողէք նա ձեզ ոչինչ չի արել։

Երիտասարդ ջուլհակների ձայներ։ Մենք նրան չէ՞ որ ծեռք էլ չենք տալիս։ (Տ. Վելցել մի քանի խօսք ասելով Կոմիվոյաժորին, վերցնում է նրա սուրճի թասը և տանում է հարևան սենեակը, Կոմիվոյաժորը նրան հետևում է ջուլհակների ընդհանուր ծիծաղ)։

Երիտ. ջուլհակների ձայներ. (Երգում են)։ Այստեղ Դրէյսիդերները դահիճներ են, նրանց ծառաները նրանց օգնականները...

Վելցել. Շշ... շշ... այդ երգը կարող էք երգել որտեղ կամենաք իսկ իմ տանը ես չեմ թոյլ տալ։

Առաջին ծեր ջուլհակ. Նա ճշմարիտ է ասում, դադարեցէք երգել։

Բեկկեր. (Բղաւում է)։ Բայց Դրէյսիդերի մօտից, մի անգամ էլ հարկաւոր է անցնել, թող մի անգամ էլ լսի մեր երգը։

Վիգանդ. Շատ էլ մի հրապուրուէք! Չլինի թէ նա ձեր հանաքները լուրջ բանի տեղ դնի. (Ծիծաղ և աղմուկ «օհ»)!

Ծ. Վիտոիխ. (Ճերմակած դարբին, առանց կարատուզի, կաշուի գոգնոցով, փայտէ կոշիկներով, սևացած, ուղղակի գործից և սպասում է դախլի մօտ, մի թաս օղի)։ Թող աղմուկ հանեն... հաջող շունը չի կծում։

Ծ. ջուլհակների ձայներ. Վիտոիխ, Վիտոիխ!

Վիտոիխ. Այստեղ եմ ի՞նչ էք ուզում։

Ծ. ջուլհակների ձայներ. «Վիտոիխը եկաւ». Եկ այս-

տեղ Վիտտիխ «Նստիր մեզ մօտ» «եկ մեզ մօտ Վիտտիխ»։

Վիտտիխ. Ինչպէս չէ, հէնց էն է խաբեցիք, ինչ կնըստեմ ես, այդպիսի անհաւատների հետ։

Եղեր. Եկ, խմիր մեզ հետ։

Վիտտիխ. Քոնը քեզ համար պահիր, երբ ես խմում եմ, ինքս էլ վճարում եմ։ (Իւր բաժակով մօտենում է և նստում Բաումերտի և Անդրէասի մօտ։ Վերջինիս փորին խփելով)։ Եղբայր, ջուլհակներն ինչ ծախս ունեն որ... թթու կաղամբ, և եփած ոչիլ!

Պ. Բաումերտ. (Տաքացած)։ Բայց ինչ կլինի եթէ պատահի որ յանկարծ նրանք դրանով անբաւական են։

Վիտտիխ. (Կեղծ զարմացմամբ, յիմարորէն աչքերը չրռում է նրանց վերայ)։ Է, հէ՞, ասա խնդրեմ, սիրելիս, մի՞թէ այդ դու ես (Անդուսպ ծիծաղում է)։ Դէհ, սիրելիք, նա ուղղակի ինձ ուզում է սպանել։ Պ. Բաումերտը ապստամբութիւն է սարքում! Համա լաւ կերթան մեր գործերը հա՞, հիմա դերձակներն են սկսում, յետոյ ոչխարները. կապստամբեն, իսկ յետոյ գուցէ և մեծ մեծ մկներն ու մկնիկները։ Տէ՞ր իմ Աստուած, տէ՞ր իմ Աստուած, ա՜յ, թէ ծիծաղ կլինի (ծիծաղից դողում է)։

Ծ. Բաումերտ. Տեսնում ես Վիտտիխ, ես այժմ նոյնն եմ ինչ որ առաջ, ես հիմայ էլ կասեմ, թէ հաշտութեամբ վերջանայ աւելի լաւ կլինի։

Վիտտիխ. Միմիայն յիմարութիւն կլինի և ոչ թէ լաւ բան։ Այդ որտեղ լաւ վերջացաւ բանը—Ֆրանսիայում թէ ուր, մի՞թէ Ռոբեսպիերը հարուստների գլուխը շյել է։ Այնտեղ միայն լաւում էր. դնա Գելոտենի մօտ!

Այդպէս էլ պիտի լինի, allons enfants, տագակած սագերը բերան չեն թռչում։

Ծ. Բաումերտ. Եթէ, եթէ ես մի կերպ անցնէի...

Առաջ. ծ. ջուլհակ. Էլ ոյժ, կարողութիւն չմնաց մեզ մօտ, Վիտտիխ։

Երկ. ծ. ջուլհակ. Շուտով առն դնայ էլ չես ուզիլ, թէ աշխատես, թէ քնես, միևնոյնն է, քաղցած ես!

Առաջ. ծ. ջուլհակ. Տանն էլ հօ բոլորովին գլուխդ կորցնում ես։

Ծ. Անդրէասէ. Իսկ ինձ համար հիմայ միևնոյն է, ինչ լինում է, թող լինի։

Ծ. ջուլհակների ձայներ. (Աճող յուզմունքով)։ «Քեզ ոչ մի տեղ հանգիստ չկայ». «ոչ մի ցանկութիւն չկայ գործի կպչելու» «մեզանում Շտէյնկուլնցենդորֆում, մէկը միայնակ նստած է առուակում ամենևին մերկ, ինչպէս Աստուած ստեղծել է, և ամբողջ օրը լուացուում է»... «Բոլորովին ցնորուել է»։

Երր. ծ. ջուլհակ. (Վեր է կենում և սպառնալիքով բարձրացնելով մատը, ասում է, կարծես մարգարէական ոգևորութեամբ համակուած)։ Աստուծոյ դատաստանը մօտենում է! Հարուստներին և մեծատուն անծանց միք մօտենալ! Աստուծոյ դատաստանը մօտենում է! Սարդովթների տէրը... (մի քանիսները ծիծաղում են և նորից նրան նստեցնում իւր տեղը)։

Վելցել. Սա չի կարող մի բաժակ էլ է խմել, որ գլխին չտայ!

Երրորդ ծ. ջուլհակ. (Նորից վեր է թռչում)։ Վա՜յ նրանց, նրանք Աստուծուն չեն հաւատում! Նրանք միայն սրբբապրդում են... Նրանց համար ոչ դժողք կայ, ոչ արքայութիւն...

Առաջ. ծ. ջուլհակ. Դէհ, բաւական է, բաւական!

Բեկկեր. Թող խօսի։ Գուցէ մէկը կզգացուի։

Շատ ձայներ. (Աղմկալից)։ Թող խօսի! Թող խօսի!

Երրորդ ծ. ջուլհակ (Ձայնը բարձրացնելով)։ Ուստի և դժողքը կրանայ, իւր անսահման վիհը, որպէսզի նրա մէջ ընկնին. ամենքը, որոնք խեղճերին ստորացնում են և դժբախտների իրաւունքները ոտնակոխ անում, ասում է Աստուած։ (Աղմուկ)։

Երրորդ ծ. ջուլհակ. (Աշակերտի պէս արտասուելով)։ Ճշմարիտ զարմանալի է, երբ նայում ես, ինչպիսի խեղճութիւն է տիրում չորս կողմում երբ մարդիկ քաթան գործող ջուլհակների աշխատանքը արհամարհում են։

Բեկկեր. Բայց չէ՞ որ մենք կտաւ ենք գործում։
(Ծիծաղ)։

Հորնիգ. Քաթան գործողները աւելի վատ են ապրում։ Նրանք ուրուականների նման թափառում են սարերում! Դուք դեռ գոնէ ապստամբել կարող էք։

Վիտտիխ. Իսկ դու կարծում ես թէ ամենասարսափելին դեռ չեռոյ է լինելու։ Գործարանատէրերը նրանց միջից կհանեն այդ չար հոգին։

Բեկկեր. Նա հէնց այդպէս էլ ասաց, ջուլհակները այժմ կաշխատեն մի կտոր հացի ու պանրի համար։
(Աղմուկ)։

Ծեր և երիտ. ջուլհակներ. Այդ ո՞վ ասաց։

Բեկկեր. Դրէյսիգերն ասաց ջուլհակների մասին։

Երիտասարդ ջուլհակ. Կախել հարկաւոր է այդ անբզգամին։

Եգեր. Լսիր, Վիտտիխ, դու միշտ պատմում էիր ֆրանսիական յեղափոխութեան մասին, ճոռոմաբանում էիր ամեն տեսակ։ Այժմ գուցէ բանը այնպէս կփոխուի, որ մէկն ու մէկը մեզանից գործով էլ կհաստատուի թէ ո՞վ է ինքը, մի պոռոտախօս պարծենկոտ, թէ ազնիւ մարդ։

Վիտտիխ. (Բարկութիւնից բռնկելով)։ Համարձակուիր մի խօսք ևս ասել տխմար. դու հօ լսե՞լ ես ինչպէս են սուլում գնդակները, հօ կանգնե՞լ ես թշնամու առաջ յառաջապահ զօրքում։

Եգեր. Դէհ, դէհ, մի բարկանար, մենք չէ՞ որ բարեկամներ ենք, ես այնպէս բան չասացի։

Վիտտիխ. Թքել եմ քո բարեկամութեան վրայ, խրատելուկ (տուտուց)։

Ժանդարմ Կուտչէ. (Մտնում է)։

Մի քանի ձայներ. Ա... ա... ոստիկանը. (շատ երկար լսւում է շոգի ծայն մինչև վերջապէս, սկսւում է հանդարտութիւն տիրել)։

Կուտչէ. (Նստում է մէջ տեղի սեղանի մօտ, դրած սեղանի առաջ) Մի թաս օղի տուէք ինձ խնդրում եմ! (ընդհանուր լռութիւն)։

Վիտտիխ. Ի՞նչ է, Կուտչէ, քեզ ուղարկել են այստեղ որ մեր կարգապահութեանն հետևես։

Կուտչէ. (Ուշադրութիւն չդարձնելով Վիտտիխին)։ Առողջ ես Վիդանդ վարպետ։

Վիդանդ. (Դեռ բոլոր ժամանակ կանգնած անկիւնում դախլի առաջ)։ Շնորհակալ եմ Կուտչէ!

Կուտչէ. Գործերդ ի՞նչպէս են։

Վիդանդ. Շնորհակալութիւն։

Բեկկեր. Նրա մեծաւորը վախենում է, որ մենք այստեղ չբարաբուենք այն աշխատանքով, որ ստանում ենք (ծիծաղ)։

Եգեր. Ճշմարիտ չէ, Վելցել, մենք չէ՞ որ այստեղ խոզի միս կերանք չաղ համեմով, քուֆթայ, կաղամբ, իսկ այժմ ահա շամպանիայով կողողենք այդ բոլորը (ծիծաղ)։

Վելցել. Ահա և արևը դուրս եկաւ։

Կուտչէ. Ձեզ թէկուզ տապակած միս և շամպանեա տան, մի՞թէ դուք բաւական կլինէք։ Ես էլ չունեմ շամպանեա, բայց էլի չէ՞ որ ապրում եմ։

Բեկկեր. (Կուտչէի քթին ակնարկելով)։ Նա իւր կարմիր վարունգը օղիով և գարեջրով է ջրում, դրա համար էլ հասնում է (ծիծաղ)։

Վիտտիխ. Կարծում էք ժանդարմի ապրուստը հեշտ է կամ սովամահ եղած երեխային փոսի մէջ նստացրու, կամ դեղեցիկ ջուլհակ օրիորդին գայթակղեցրու, կամ այնպէս հարբիր, որ կնոջդ ծեծես, այնքան ծեծիր, մինչև որ վախից նրա հոգին կրուզը հասնի և սարսափից սարսուռած հարևանների մօտ պահուի, իսկ ծիու վերայ առաջ փառաջ ընթանալ և անկողնում մինչև 9-ը ժամը թաւալուել, այդ բոլորը մի՞թէ հեշտ գործ է։

Կուտչէ. Դուրս տուր, աւելի դուրս տուր! մինչև որ վղակութիդ կգան, վաղուց յայտնի է, թէ դու ինչ պատուն ես։ Քո երկար լեզուիդ մասին վաղուց ամենին յայտնի է մինչև

իսկ ժողովի նախագահին էլ. իսկ ես մի այդպիսի մարդու ճանաչում եմ, որը հարբեցողութեամբ և գինետներ թափառելով, շուտով կնոջը ու երեխաներին դռնէ դուռ կդցի, իսկ իրան բանար: Նա ժողովրդին կապստամբեցնի, այնքան, մինչև որ իր գլուխը մի պատուհաս կբերի:

Վիտտիխ. (Դառն ծիծաղ): Ո՞վ գիտէ, ինչ կլինի! դուցէ դու վերջ ի վերջոյ ճիշտ էլ ասացիր! (բռնկելով բարկութիւնից) բայց եթէ այդտեղ հասաւ, գիտեմ թէ ում կլինեմ պարտական, ո՞վ է բամբասել իմ մասին գործարանատէրերին և կալուածատէրերին, սևացրել և չարախօսել իմ մասին այնպէս, որ ես այլևս գործ չեմ ստանում. ո՞վ է իմ դէմ զրրզրռել գիւղացուն և ջաղացպաններին, այնպէս որ ամբողջ շաբաթ զրկուած կլինեմ ձի պայտելուց կամ մի անիւ ուղղելուց! Գիտեմ ո՞վ է այդ անողը! ես այդ անիծեալին արդէն մի անգամ ծիուց վայր եմ ծդել, նրա համար, որ նա իւր մտրակով ծեծել էր մի լիմար երեխայի մի քանի խակ տանձի համար: Եւ ահա թէ ինչ կասեմ ես քեզ. դու ինձ ճանաչում ես եթէ դու իսկապէս մինչև բանտը հասցնես ինձ, այդ դէպքում աւելի լաւ է հէնց այժմ զրիր կտակդ: Եթէ ես մի որևէ բանի մասին լսեցի, ինչ որ ձեռքս ընկնի, լինի դա պայտ, մուրճ, ճապ, վեղրո, կվերցնեմ, կդտնեմ քեզ, եթէ մինչև անգամ ես ստիպուած լինեմ քեզ մահճակալից քարշ տալու, քարշ կտամ և գանդդ կջախջախեմ, և ես Վիտտիխը չլինեմ, եթէ այդ բոլորը չանեմ: (Վեր է ցատկում, կամենում է յարձակուել Կուտչէի վրայ):

Երիտ. և ծ. ջուլհակներ. (Նրան արգելելով) Վիտտիխ, Վիտտիխ հանդարտուիր!

Կուտչէ, (Ակամայից բարձրանում է, երեսը գունատուած յեռագայ խօսքերն ասելով, նա յետ է քաշւում: Ինչքան դռանը մօտենում է, այնքան աւելի համարձակ է դառնում: Վերջին խօսքերը նա ասում է դռների մէջ և անյայտանում է): Ի՞նչ ես կամենում դու ինձնից, ես քեզ հետ գործ չունեմ. ես պէտք է խօսեմ այստեղի ջուլհակների հետ! ես քեզ ոչինչ

չեմ արել! և քեզ հետ գործ էլ չունեմ: Բայց ձեզ ջուլհակներ, ես պէտք է յայտնեմ, որ պարոն ոստիկանապետը արդելում է ձեզ երգել այն երգը, որ Դրէյսիզերի անունին է թէ չգիտեմ ինչպէս է կոչւում ձեզանում: Եթէ դուք այդ երգը փողոցում երգելուց չէք դադարի, այն ժամանակ նա կաշխատի, որ դուք աւելի շատ ժամանակ և հանգիստ ունենաք բանտում. Եթէ այնտեղ ձեզ ցամաք հացի և ջրի կապեն, այն ժամանակ կարող էք երգել այնտեղ, որքան կամենաք! (հեռանում է):

Վիտտիխ. (Գոչում է նրա ետևից): Նա մեզ ոչինչ չի համարձակուիլ արգելել, թէկուզ հէնց այնպէս գոռանք որ լուսամուտները զնգզնգան, թէկուզ մեր ձայնը մինչև Բէյհենբախ հասնի, թէկուզ մեր երգելուց գործարանատէրերի տունը գլխներին քանդուեն, այնպէս որ բոլոր գլխաւորների սաղաւարտները գլխներին պար գան, դա ոչ ոքի գործը չէ:

Բեկկեր. (Որը այդ ժամանակ բարձրացել է տեղից, նշան է տալիս, որ երգը սկսեն, և ինքն էլ միւսների հետ ձայն է պահում):

Այստեղ մեր գիւղում, կայ մի դատարան,
Մի զարհուրելի դաժան տանջարան,
Ուր մարդիկ բնաւ չեն ազատւում
Դատապարտելի կեանքին վերջ տալու:

(Ծանտէրը կամենում է հանդարտեցնել ջուլհակներին, բայց նրան չեն լսում. Վիդանդը ականջները խցում է և զուրս է վազում: Ջուլհակները բարձրանում են և շարունակելով երգը հետևում են Վիտտիխին և Բեկկերին, որոնք նշաններով ցոյց են տալիս, որ բոլորը դուրս գան):

Այստեղ տանջւում են առանց փութալու.
Այստեղ դժոգք է, դժոգք սոսկալի,
Այստեղ հարում են առանց յոգնելու

Հառաչը մարդկանց, դառն ու ողբալի։

(Ջուլհակների մեծամասնութիւնը երգում է ռատանաւորի միւս տունը արդէն փողոցում։ Միայն մի քանի ջահել տղաներ վճարելով ուշանում են գինետանը։ Ռատանաւորի տնից յետոյ սենեակը դատարկւում է։ Նրա մէջ մնում են Վելցելը իւր կնոջ և աղջկայ հետ, Հորնիգը և Ծ. Բաումերտը)։

Սրիկաներ առանց բացառութեան,
Դուք դժոխային ահռելի դևեր,
Դուք որ ծծում էք արիւնն աղքատի,
Թող մեր անէծքը ձեր վարձքը լինի։

Վելցել. (Սառնասրտորէն հաւաքում է բաժակները)։ Նրանք այսօր բոլորովին խելագարուել են (Ծ. Բաումերտը կամենում է գնալ)։

Հորնիգ. Ասա, ի սէր Աստուծոյ Բաումերտ, ինչ է նշանակում այս ամենը։

Ծ. Բաումերտ. (Ուզում են գնալ Դրէյսիգերի մօտ, տեսնեն չի՞ աւելացնիլ արդեօք մի փոքր վարձ։

Վելցել. Մի՞թէ դու էլ այդ խելագարների հետ համամիտ ես։

Ծ. Բաումերտ. Գիտե՞ս, Վելցել, դա ինձանից չէ կախուած, մի մի անգամ երիտասարդութիւնը անում է, ինչ որ կամենում է, և պառաւին ընտրել չի լինում։ (Մի փոքր շրփոթուած հեռանում է)։

Հորնիգ. (Բարձրանալով)։ Դէհ, շատ զարմանալի կլինի, եթէ մի վատ բան չպատահի...

Վելցել. Ալեւորներն էլ են կորցրել իրանց խելքը։

Հորնիգ. Ամէն մարդ մի որևէ բանի համար երազում է։

ՎԱՐԱԳՈՅՐ.

ՉՈՐՐՈՐԴ ԳՈՐԾՈՂՈՒԹԵԱՆ ԱՆՁԻՆՔ

Բեկկեր.
Մորից Եգեր.
Ծերունի Բաումերտ.
Ծերունի Անզօրգէ.
Դրէյսիգեր.
Պֆէյֆեր.
Վիտտիխ.
Կուտչէ.
Տ. Դրէյսիգեր.
Կիտտելգաուս, պաստոր.
Տ. Կիտելգաուս.
Վեյնհոլդ, Աստուածաբանական գիտութեան կանդիտատ և Դրէյսիգերի տնային ուսուցիչ։
Հէյդէ, տեղական ոստիկանապետ.
Կառապան Իւհան.
Երիտասարդ և պառաւ ջուլհակներ և ջուլհակուհիներ.

ՉՈՐՐՈՐԴ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ.

Պետերսվալդաու. Սենեակ կտաւի գործարանատիրոջ Դրէյսիգերի բնակարանում։ Ներկայ դարու սկզբին անբարուաւան ճաշակով կահաւորուած բնակարան։ Առաստաղը, վառարանը, դռները սպիտակ են. պաստառները շերտաւոր սառը մանր ծաղիկներով արճճէ մոխրագոյն ֆոնով։ Փափուկ կահ կարասին կարմիր փայտից, կարմիր երեսով ծածկուած, շքեղ քանդակագործուած է։ Նոյնպիսի պահարաններ և աթոռներ, կահ կարասիքը դասաւորուած է հեռաւել կերպով։ Աջ կողմում մուգ կարմրագոյն մետաքսեայ վարագոյրներ ծածկած, լուսամուտների մէջ տեղում դրուած է պիհարանի նման պարապելու սեղան, առաջ ծռուած տախտակով, նրա դիմաց բազմոց, նրանից մի քիչ հեռու երկաթի դրամարկղը։ Բազմոցի առաջ սեղան, տաբուրետներ, և աթոռներ։ Եռևի պատի կողմը զենքերի պահարան։ Այդ պատից ինչպէս և միւսներից կախուած են ոսկեգոյն շրջանակներով վառ նկարներ։ Բազմոցի վերայ կախուած է հայելի, բայց ոսկեգոյն բոկոկո շրջանակներով։ Ձախ կողմը հասարակ դուռ, որը տանում է դէպի նախասենեակը։ Լայն բոլորովին բաց դուռ, եռևի պատից տանում է դէպի հիւրասենեակը, կահաւորուած նոյն անչարմար չափազանց շքեղ կերպով։ Հիւրասենեակում երկու կին են երևում տ. Դրէյսիգեր և պաստորի կին Կեատելհաուսը, որոնք զբաղուած են նկարներին նայելով։ Բացի նրանցից պաստոր Կիտտելհաուսը, որ խօսում է կանդիտատի անային ուսուցիչ Վէյնհոլցի հետ։

Կիտտելհաուս. (Դուրեկան մարդ միջին հասակի, մրտնում է տաք խօսելով կանդիտատի հետ առաջին սենեակը։ Երկուսն էլ ծխում են։ Պաստորը չորս կողմը նայում է և ոչ ոքի չտեսնելով սենեակում, գլուխը շարժում է)։ Դա բոլորովին զարմանալի չէ պարոն կանդիտատ. դուք երիտասարդ էք։ Ձեր հասակում մենք պառաւներս էլ չեմ ասում նոյն դաղափարներին, բայց նրա նմանների կողմնակից էինք, յամենայն դէպս դրանց նման։ Զէ՞ որ ինքը երիտասարդութիւնը այնքան զեղեցիկ է, և նրա իդէալներն էլ այնքան զեղեցիկ են, պարոն կանդիտատ! բայց, ափսո՜ս, նրանք անհաստատ են, Ապրիլ ամսուայ արեգակի նման փոփոխական։ Մ՚ի, իմ հասակն առէք! եթէ մարդ երեսուն տարուայ ընթացքում յիսուն երկու անգամ տարուայ մէջ, չհաշուելով մեծ ուռները, արտասանում է իւր քարոզը ամբիոնից, նա կամայ-ակամայ խաղաղ կդառնայ։ Յիշեցէք իմ մասին, երբ դուք էլ կհասնէք դրան պ. կանդիտատ։

Վէյնհոլդ. (Տասն և ինը տարեկան, գունատ, նիհար, բարձրահասակ և հարթ երկար շէկ մազերով։ Նա շատ անհանդիստ և ջղային է շարժուածքների մէջ)։ Զնայելով իմ բոլոր յարգանքին դէպի ձեզ, պարոն պաստոր... Ես ճշմարիտ չգիտեմ... Մարդկային բնաւորութիւնները այնքան տարբեր են...

Կիտտելհաուս. Սիրելի պարոն կանդիտատ, որքան էլ որ դուք բնաւորութեամբ անհանդիստ լինէք, (ծայնի կրշտամբանքով) բայց դուք այդպէս էք։ Որքան էլ դուք կամակորութեամբ կռուէիք, եղած կանոնների հետ, այդ բոլորը կանցնի։ Իհարկէ, ես բոլորովին համաձայն եմ, և իմ ընկերակիցների մէջ այնպիսիները կան, որոնք մինչև անգամ ամենահասունացած տարիքում պատրաստ են պառաւական արարմունքներ թոյլ տալու։ Մէկը քարոզում է արբեցողութեան դէմ, և հիմնում է ժուժկալութեան ընկերութիւն, միւսը հրաւերներ է յօրինում, որոնք մեծ հետաքրքրութեամբ կարդացուում են, այդ չի կարելի ժխտել։ Բայց դորանով ինչի՞ են հասնում։

Ջուլհակների մէջ կարիքը, այնտեղ ուր նա կայ, չի պակասում։ Բայց դորան խախտում է հիմնովի հասարակական խաղաղութիւնը։ Ոչ, ոչ մարդ ցանկանում է ասել նրանց. «կոշկակար ճանաչիր չափդ»։ Հոգիների հոգաբարձու ստամոքսների հոգաբարձու մի դարձիր։ Աստուծոյ, խօսքը քարոզիր, իսկ մնացեալի հոգսը թող նրան ով թռչունների համար բուն է շինում, նրանց կերակուր է հասցնում, և դաշտում պաշտպանում է Նուշանեին կորստից. սակայն կուզէի իմանալ ո՞ւր է թաղնուել մեր սիրալիր տանտէրը։

Տ. Դրէյսիգեր. (Պաստորի կնոջ հետ դուրս է գալիս դէպի բեմի առաջնակողմը. երեսունամեայ զեղեցիկ կին է, առողջ լայնաթիկունք կազմուածքով։ Աչքի է ընկնում մի քանի անհամապատասխանութիւն իւր խօսակցութեան և ձևե-

րի ու նրա արիստոկրատիք հարուստ հագուստի մէջ)։ Դուք բոլորովին իրաւացի էք, պարոն պաստոր։ Վիլհելմը միշտ այդպէս է, երբ նրա գլուխը մի որևէ բան է մտնում, նա իսկոյն սկսում է վազել և ինձ մենակ է թողնում։ Քանիցս անգամ ես նրան այդ մասին ասել եմ։ Բայց չէ՞ որ նրան ինչ ուզում ես ասա։

Կիտտելհաուս. Մեծարգոյ տիկին, չէ՞ որ նա էլ գործի մարդ է։

Վեյնհոլդ. Եթէ ես չեմ սխալւում, ցաւումը ինչ որ բան է պատահել։

Դրէյսիդեր. (Մտնում է վրդովուած և այլայլուած)։ Ա-պա, Բոգա, սուրճը պատրաստ է։

Տ. Դրէյսիդեր. (Նեղանալով)։ Դու միշտ փախչում ես։

Դրէյսիդեր. (Հարևանցի)։ Ախ, դու ինչ ես հասկանում դրա մէջ։

Կիտտիլհաուս. Ներեցէք, դուք անբաւականութիւնն՞ էք ունեցել, պ. Դրէյսիդեր։

Դրէյսիդեր. Ես ամենայն Աստծու օր անբաւականութիւն, ունեմ սիրելի պարոն պաստոր. ես դրան սովոր եմ... Դէհ, Բոգա, ուրեմն դու հոգ կտանես։

Տ. Դրէյսիդեր. (Վատ արամադրութեամբ հեռանում է և մի քանի անգամ ուժով քաշում է կարովի զանգը։

Դրէյսիդեր. Մի քանի բոպէ առաջ... (մի փոքր լռելով). Պարոն կանդիտատ, ես կցանկանայի, որ դուք ներկայ լինէիք մի տեսարանի... Դուք մի որևէ բան կեզրակացնէիք նրանից։ Սակայն... գնանք նստենք մեր վիստը խաղալու։

Կիտտելհաուս. Այո, այո և մի անգամ էլ այո! Թափ տուէք ձեր ուսերից ձեր ամբողջ օրուայ անախորժութիւնները ու ծանրութիւնները և մեզ նուիրուեցէք ամբողջապէս։

Դրէյսիդեր. (Մօտենալով լուսամուտին, հեռացնում է վարագոյրները և դուրս է նայում դէպի փողոց. ակամայից)։ Անպիտաններ! արի այստեղ Բոգա! (կինը մօտենում է)։ Ասա... ահա այն բարձրահասակ շէկ երկար մազերաւորը...

Կիտտելհաուս. Դա այսպէս կոչուած շէկ Բեկկերն է։

Դրէյսիդեր. Ասա, դա գուցէ նոյն այն մարդն է, որը վիրաւորեց քեզ այն ժամանակ երկու օր առաջ։ Ցիշում ե՞ս, դու դեռ ինձ պատմեցիր, երբ Իւհանն քեզ կարետայի մէջ նստեցնում էր։

Տ. Դրէյսիդեր. (Շրթունքները ծռմռելով ծգուած)։ Ճրշմարիտն ասած չեմ յիշում!

Դրէյսիդեր. Բաւական է խնդրեմ խառով կենաս։ Չէ՞ որ ես այդ պէտք է իմանամ։ Վերջապէս այդ լրբութիւնը ինձ զզուացրեց։ Եթէ դա նա է, ես նրան պատասխանատուութեան կենթարկեմ։ (Զուլհակների երգի ձայնն է լսւում) Ահա, լսեցէք, լսեցէք խնդրեմ։

Կիտտելհաուս. (Զափազանց վրդովուած)։ Այս ի՞նչ է նշանակում, մի՞թէ վերջ չի լինելու այս բոլոր անկարգութիւններին։ Այժմ ես էլ պիտի ասեմ, ժամանակ է, որ ոստիկանութիւնը խառնուի այս գործին։ Սպասեցէք, (մօտենում է լուսամուտին). Նայեցէք խնդրեմ, պարոն Վէյնհոլդ! Այստեղ չէ՞ որ միայն երիտասարդ զուլհակները չեն, ահա վազում են և ծերերը, ծանրաբարոյ զուլհակները և ահագին բազմութիւն է։ Այն մարդիկ, որոնց ես շատ տարիների ընթացքում համարել եմ վերին աստիճանի յարգելի Աստուածավախ, նրանք էլ այստեղ են։ Նրանք էլ են մասնակցում այդ անլուր անկարգութեան։ Նրանք էլ են ոտնակոխ անում Աստուծոյ օրէնքները։ Դուք նրանց էլ էք կամենում ձեր պաշտպանութեան տակ առնել։

Վէյնհոլդ. Իհարկէ ոչ, պ. պաստոր, կամ աւելի լաւ է ասել, պ. պաստոր... cum grano salis. Դրանք չէ՞ որ քաղցած տգէտ մարդիկ են։ Իրենց անբաւականութիւնը նրանք արտայայտում են ինչպէս գիտեն։ Չի էլ կարելի սպասել, որ այդպիսի մարդիկ...

Տ. Կիտտելհաուս. (Փոքրահասակ նիհար, դեղնած, աւելի պառաւ օրիորդի քան տիկնոջ նման)։ Պ. Վէյնհոլդ! ես խնդրում եմ ձեզ!

Դրէյսիդեր. Պարոն կանդիտատ, ես շատ ցաւում եմ,... ես ձեզ իմ տունն եմ հրաւիրել, ոչ նրա համար, որ դուք ինձ համար մարդասիրութեան դասախօսութիւններ կարդաք: Ես ձեզ թախանձանօք խնդրում եմ, սահմանափակուել, իմ երեխաների կրթութեամբ, իսկ մնացեալ բոլորը ինձ վերապահէք, և միայն ինձ: Դուք ինձ հասկացաք:

Վեյնհոլդ. (Մի վայրկեան անշարժ մնալով, գունատ, ինչպէս դիակ և յետոյ լարուած ժպիտով դլուխ տալով կամաց): Իհարկէ, իհարկէ, ես հասկացայ ձեզ: Ես այդ նախատեսնում էի, դա համապատասխանում է և իմ ցանկութիւններին: (Հեռանում է):

Դրէյսիդեր. (Կոպիտ): Այդ դէպքում, որքան կարելի է շուտ, մեզ հարկաւոր է ձեր սենեակը:

Տ. Դրէյսիդեր. Վիլհելմ! Վիլհելմ! ի՞նչ ես անում!

Դրէյսիդեր. Արդեօք խելքդ գլխի՞դ է: Դու պաշտպանում ես մի մարդու, որը պաշտպանում է այնպիսի ցած գարշելի բաներ, ինչպէս է այդ զզուելի երգը:

Տ. Դրէյսիդեր. Բայց սիրելիս, հօ նա այդ երգը չէ...

Դրէյսիդեր. Պարոն պաստոր, պաշտպանում է նա թէ ոչ:

Կիտտելհաուս. Պէտք է ներողամիտ լինել դէպի նրա երիտասարդութիւնը:

Տ. Կիտտելհաուս. Ես, ճշմարիտ չեմ հասկանում—այդ երիտասարդը այնպիսի լաւ, պատուական ընտանիքից է: Նրա հայրը քառասուն տարի ծառայում էր և երբէք ոչ մի բանում չէր կարելի նրան պարսաւել: Մայրը անչափ բախտաւոր էր, երբ նա ձեզ մօտ այդպիսի լաւ պաշտօն ստացաւ: Իսկ այժմ... նա չկարողացաւ գնահատել:

Պֆէյֆեր. (Դուռը բաց անելով գոռում է): Պարոն Դրէյսիդեր, պ. Դրէյսիդեր, նրանք բռնել են նրան: Եկէք խնդրեմ, մէկին բռնել են:

Դրէյսիդեր. (Շտապով): Վազէք մէկն ու մէկը դէպի ոստիկանատուն:

Պֆէյֆեր. Ոստիկանապետն արդէն բարձրանում է սանդուխներով:

Դրէյսիդեր. (Դռան մէջ): Իմ յարգանքս, պարոն ոստիկանապետ, շատ ուրախ եմ, որ շնորհ էք բերել:

Կիտտելհաուս. (Նշան է անում տիկիններին, որ հարկաւոր է հեռանալ. նա, իւր կինը և տ. Դրէյսիդերը անցնում են հիւրասենեակը):

Դրէյսիդեր. (Սաստիկ յուզուած դառնալով նոյն րոպէին ներս մտնող ոստիկանապետին): Պ. ոստիկանապետ, ես ստիպուած էի վերջ իվերջոյ հրամայել եմ ներկարարներիս, որ երդողներից մէկին բռնեն: Ես այլևս անկարող էի համբերել այդ բոլորին: Նրանց լրբութիւնը ոչ մի սահման չունի: Այդ ուղղակի վրդովեցուցիչ է: Ես հիւրեր ունեմ, իսկ այդ անպիտանները համարձակւում են... Նրանք վիրաւորում են կնոջս, երբ նա դեռ անից դուրս է գալիս և ես դեռ վստահ չեմ իմ տղաներիս ապահովութեան համար: Ես վախենում եմ, որ նրանք կարող են և հիւրերիս էլ ծեծել... Համարձակւում եմ ձեզ հաւատացնել, որ եթէ մեր բարեկարգ տէրութեան մէջ իմ և իմ ընտանիքի նման օրինաւոր մարդիկ անվերջ կարող են ենթարկուել հասարակութեան անարգանքների... այդ դէպքում... կարելի է միայն ցաւել, որ իմ հասկացողութիւնները բոլորովին այլ են իրաւունքի և բարեկարգութեան մասին...

Տեղ. ոստիկանապետ. (Մօտ յիսուն տարեկան, միջին հասակի, հաստ ու կարմիր, կաւալերիայի հագուստով, թուրը վրան և խթաններով): Ոչ մի դէպքում... ոչ, ոչ... մի դէպքում! վստահ եղէք ինձ վերայ հանդարտուեցէք, խնդրեմ, ես ձեր խոնարհ ծառան եմ: Այդ բոլորովին հեշտ է... Մինչև անգամ շատ լաւ էք արել, որ դուք հրամայել էք աղաղակողներից մէկին բռնել: Ես շատ ուրախ եմ, որ այդպիսով վերջապէս գործը կպարզուի: Այստեղ մի քանիսները ի նկատի կան, որոնք անվերջ պղտորում են:

Դրէյսիդեր. Այո, այո, մի քանի երեխաներ, թափառաշրջիկներ, ախմարներ և ծոյլեր, որոնք բացի անառակու-

թիւնից, ուրիշ բան չեն անում, ամէն օր զինետներում ընկած են և այնքան են կոնծում մինչև որ վերջին պֆենինգը չեն վատնում: Բայց այժմ ես վճռեցի, այժմ ես կփակեմ այդ բղաւողների կոկորդը, որոնք դոռդոռալը փեշակ են շինել: Հասարակութեան պահանջն է դա, և ոչ միայն իմը:

Ոստիկանապետ. Անկասկած! անկասկած, պ. Դրէյսիդեր, և ոչ ոք դրա համար ձեզ չի մեղադրիլ: Եւ որքան այդ ինձնից է կախուած...

Դրէյսիդեր. Մարակով պէտք է խելքի բերել այդ սրիկաներին:

Ոստիկանապետ. Իսկապէս մարակով, իսկապէս մարակով պէտք է օրինակ տալ դրանց:

Ժանդարմ Կուտչէ. (Ներս մտնելով և ֆրոնտ կանգնելով) (նախասենեակի դուռը բաց լինելով սանդուխտներով բարձրացող ոտքերի ձայն է լսւում): Պ. ոստիկանապետ, պատիւ ունիմ յայտնելու. մենք մի մարդ կալանաւորեցինք:

Դրէյսիդեր. Դուք ցանկանում էք նրան տեսնել պ. ոստիկանապետ:

Ոստիկանապետ. Իհարկէ, իհարկէ գործը սկսելու համար նրան մօտից նայենք: Շնորհ արէք պարոն Դրէյսիդեր, բոլորովին հանգիստ եղէք: Ես հէյդէն չլինեմ, եթէ ձեզ կատարեալ բաւարարութիւն չտամ:

Դրէյսիդեր. Դրանով ես չեմ բաւականանալ: Այդ մարդը պիտի ներկայանայ դատախազին:

Եգեր. (Նրան ներս են բերում հինգ ներկարար, որոնք ուղղակի գործից են գալիս, նրանց երեսը, ձեռքերը և շորերը ներկի մէջ թաթախուած են: Կալանաւորուածի գլխարկը ծուռ է դրած, երեսը յանդուգն ուրախութիւն է արտայայտում. նա դրգռուած դրութեան մէջ է խմած օղիից): Ախ դուք արխմարներ, անպիտաններ, դուք էլ բանւորներ էք, ընկերներ էք կոչւում: Իմ ձեռքերս չչորանային, եթէ ես մտքովս էլ անց կացնէի մինչև անգամ ընկերի դէմ գնալ! (ոստիկանապետի

հրամանով Կուտչէն նշան է անում որ արձակեն Եգերին, որը համարձակ կռուողի դիրք է բռնում, այդ ժամանակ ներկաները խափանում են նորա առաջ բոլոր դռները):

Ոստիկանապետ. (Գոչում է Եգերի վրայ): Գլխարկդ հանիր, հաստագլուխ! (Եգերը հանում է գլխարկը, բայց շատ դանդաղ և շարունակ հեգնաբար ժպտալով) Անունդ ի՞նչ է:

Եգեր. Ի՞նչ ես դու-ով խօսում, մենք քեզ հետ միասին խօսքեր հօ չենք արաժացրել. (այդ խօսքերի վրայ ներկայ եղողների մէջ իրարանցում է լինում):

Դրէյսիդեր. Ա՜յ լրբութիւն!

Ոստիկանապետ. (Գոյնը փոխում է, պատրաստ է բռնկելու, բայց զսպում է իրեն): Այդ դեռ մենք կտեսնենք — անունդ ի՞նչ է ես հարցնում եմ. (քանի որ հարցին նա չի պատասխանում, կատաղած) պատասխանիր, ապուշ, թէ չէ կհրամայեմ քեզ քսան և հինգ մարակ զարկել:

Եգեր. (Անվրդով ուրախութեամբ, ոչ մի ուշադրութիւն չդարձնելով կատաղի ձայնին, ներկայ եղողների գլխի վրայից. սում է գեղեցիկ սպասուհուն, որը կամենում է սուրճը տալ, բայց յանկարծ բերանը բաց կանգնում է սարսափահար եղած անսպասելի տեսարանով): Սակայն, սա խնդրեմ, Էմիլիա, այժմ դու ի՞նչ հասարակութեան մէջ ես, գտնւում, միայն տես, շուտ դուրս եկ այստեղից: Այստեղ մի այնպիսի քամի կարող է փչել, որ մի գիշերուայ մէջ բոլորը տակն ու վրայ կլինի: (Աղջիկը աչքերը յառում է Եգերի վրայ և հասկանալով որ խօսքերն իրեն են ուղղուած, ամօթից կարմրում է, աչքերը ձեռքերով ծածկում է և դուրս փախչում սենեակից, թողնելով բաժակները անկարգ թափուած սեղանի վրայ: Ներկայ եղողների մէջ կրկին իրարանցում):

Ոստիկանապետ. (Սաստիկ վարանման մէջ, Դրէյսիդերին): Այսքան տարի է ապրում եմ աշխարհիս երեսին... այսպիսի անլսելի յանդգնութիւն ես դեռ չեմ...

Եգեր. (Յատակի վրայ թքում է):

Դրէյսիդեր. Դու ախոռատան մէջ չես, ապուշ!

Ոստիկանապետ. Սա մարդու համբերութիւնից կհանի: Վերջին անգամն եմ հարցնում, անունդ ի՞նչ է:

Կիտտելհաուս. (Կիսաբաց դռնից դիտելով և ականջ դնելով վերջին տեսարանը ներս է մտնում, ակամայ յափշտակուած կատարուածից և վրդովմունքից դողալով խառնուում է գործի մէջ): Նրա աղգանունը Եգեր է, պ. ոստիկանապետ, Մորից... այդպէս չէ՞, Մորից Եգեր: (Եգերին): Ասա Եգեր, մի՞թէ դու ինձ մոռացել ես:

Եգեր. (Լուրջ): Դուք պարոն Կիտտելհաուսն էք:

Կիտտելհաուս. Այո, քո հոգևոր հայրը, Եգեր, այն հայրը, որը քեզ մկրտեց, երբ դու դեռ մանուկ էիր: Այն հայրը, որը քեզ առաջին անգամ ճաշակեց Քրիստոսի մարմնի մասունքից: Մի՞թէ դու ինձ չես յիշում: Ես աշխատում էի ամէն կերպ աշխատում էի, Աստուծոյ խօսքը քո սրտի մէջ հաստատել: Եւ այժմ այդ է քո շնորհակալութիւնը:

Եգեր. (Ծրտում, ինչպէս մի աշակերտ, որին նկատողութիւն են արել) Ես չէ՞ որ զոհեցի մի տալեր փող:

Կիտտիլհաուս. Փող, փող... Մի՞թէ դու կարծում ես, որ այդ ատելի խղճուկ դրամները... Աւելի լաւ է մօտդ պահիր, փողերդ... դա ինձ համար անհամեմատ աւելի դուրալի կլինի: Ի՞նչ անմտութիւն է. ագնիւ եղիր, Քրիստոնեայ եղիր, մի մոռանար այն, ինչի համար որ ուխտեցիր Աստուծոյ առաջ: Աստուծոյ պատգամների դէմ մի մեղանչիր, բարի եղիր, Աստուածապաշտ եղիր... փող... փող...

Եգեր. Ես կվակեր եմ, պարոն պաստոր, ես ոչ մի բանին էլ չեմ հաւատում:

Կիտտիլհաուս. Ինչ կվակեր...! յիմարութիւններ մի դուրս տա խնդրեմ! աշխատիր ուղղուել և մի խօսիր այն, ինչ որ ինքդ էլ չես հասկանում: Դոքա բարեպաշտ մարդիկ են և ոչ քեզ նման կռապաշտ, կվակեր, ի՞նչ կվակեր:

Ոստիկանապետ. Ձեր թոյլտուութեամբ պարոն պաստոր (կանգնում է պաստորի և Եգերի մէջ տեղ): Կուտչէ. կապեցէք սրա ձեռքերը. (բեմի ետևից վայրենի աղաղակ, «Եգեր, Եգեր, Եգերը թող դուրս դայ»):

Դրէյսիդեր. (Մի փոքր վախեցած, ինչպէս և միւս ներկայ եղողները, ակամայ մօտենում է լուսամուտին): Ա՞յս ինչ նոր բան է:

Ոստիկանապետ. Օ, ես այդ լաւ եմ հասկանում: Նրանք ուզում են, որ այդ անպիտանին բաց թողնենք: Բայց այդ լաւութիւնը մենք չենք անիլ նրանց: Հասկացա՞ք Կուտչէ նրան, բանտ նստացրէք:

Կուտչէ. (Դանդաղ, թոկը ձեռքին): Կհամարձակուեմ խոնարհաբար յայտնել ձեզ պ. ոստիկանապետ, նա մեզ շատ պիտի չարչարի! Այնտեղ մի այնպիսի անիծեալ խուռն բազմութիւն կայ, իսկական աւազակներ, պ. ոստիկանապետ: Այնտեղ է Բիկկերը, դարբինը...

Կիտտելհաուս. Թոյլ տուէք ասել, պ. ոստիկանապետ, չլինի թէ մենք նրանց աւելի գրգռենք: Աւելի լաւ չէ՞ որ փորձենք խաղաղութեամբ ուղղել գործը: Գուցէ Եգերը կըհամաձայնուի ինքնակամ գնալ, կամ որևէ կերպով...

Ոստիկանապետ. Ախ, բաւական է խնդրեմ, ես երաշխաւոր եմ! ես երբէք չեմ համաձայնուիլ դրան: Նուտ Կուտչէ! մի ուշացնիր բանը:

Եգեր. (Ծիծաղելով պարզում է իր ձեռքերը և դնում իրար վրայ: Ապա, պինդ, պինդ, որքան ոյժ ունէք! Միևնոյն է, հօ երկար ժամանակով չէ: (Կուտչէն ներկարարների օգնութեամբ կապում է նրան):

Ոստիկանապետ. Դէպի առաջ! շարժուիր (Դրէյսիդերին) եթէ դուք անհանդիստ էք, մի 6 ներկարար ուղարկեցէք: Նրանք նրա չորս կողմը կպատեն: Ես առաջ եմ գնում Կուտչէ, հետևիր ինձ: Ով կդիմադրէ, նրան ջարդել! (Ցածից լսում են, կու—կու—բեկու!!! հաու, հաու, հաու!...)

Ոստիկանապետ. (Սպառնալով դէպի լուսամուտի կողմը): Անդդամներ! Ես ձեզ այնպէս կուկուրեկու և հաու, հա-

ու ցոյց տամ! յառաջ, շարժուիր! (առաջ է անցնում, թուրը ձեռքին միւսները հետևում են նրա հետ)։

Եղեր. (Գնալով բղաւում է)։ Թող տիկին Դրէյսիդերը հպարտանայ որքան կամենայ, նա դարձեալ ոչ մի կերպ բարձրը չէ մեզանից. հայրս քանի անգամ է նրան օդի թաւազայ արել։ Էսկադրոն, մի ձախ , մի աջ—յառաջ։ (Դուրս է գնում ծիծաղելով)։

Դրէյսիդեր. (Մի փոքր ընդմիջումից յետոյ շինծու հանդարտութեամբ)։ Հ՞ը, ինչպէս էք կարծում, պ. պաստոր, չշարունակե՞նք արդեօք մեր վիստը, կարծեմ մեր թրդթախաղին այլ ևս ոչի՞նչ չի խանգարիլ։ (Կպցնում է սիգարը և մի քանի անգամ կցկտուր ծիծաղում, սիգարը կպցնելուց յետոյ, նա յանկարծ բարձր ծիծաղում է)։ Այժմ այս բոլոր պատմութիւնը ինձ ուղղակի ծիծաղելի է թւում։ Ա՜յ տխմար, (կրցկրտուր, ջղային ծիծաղով)։ Չէ, չէ, սա ուղղակի ծիծաղելի է, նախ և առաջ սեղանի մօտ—վէճ կանդիտատի հետ, հինգ բոպէից—նա արդէն հրաժեշտ է տալիս, և անհետանում մեր աչքերից։ Ցեռոյ այս պատմութիւնը, իսկ այժմ մենք շարունակում ենք մեր վիստը։

Կիտտելհաուս. Այո, բայց տեսնում էք... (Ցածից աղմուկ)։ Գիտէք, ինչ նրանք սաստիկ աղմուկ են բարձրացնում այնտեղ։

Դրէյսիդեր. Այն ժամանակ անցնենք միւս սենեակը, շատ հասարակ բան։ Այնտեղ մեզ չեն նեղացնիլ։

Կիտտելհաուս. (Գլուխը շարժելով)։ Եթէ միայն ես կարողանայի հասկանալ թէ ի՞նչ է կատարւում նրանց հետ։ Այդ դէպքում ես պիտի համաձայնուեմ կանդիտատի հետ—գոնէ, ոչ շատ առաջ՝ ես կարծում էի որ ջուլհակները խոնարհ, համբերող և հնազանդ ժողովուրդ է։ Մի՞թէ դուք էլ նոյն կարծիքին չէիք, պ. Դրէյսիդեր։

Դրէյսիդեր. Իհարկէ, նրանք համբերող և համոզուող էին, առաջ նրանք կարգին մարդիկ էին և գիտէին իրանց պահել... Այո, իսկապէս, այդպէս էին, քանի որ այստեղ չէին խառնուել

զանազան մարդասէրներ։ Հէնց այս վերջինները աշխատեցին նրանց հասկացնել, թէ ինչ անտանելի դրութեան մէջ են գտնուում։ Ուշադրութիւն դարձրէք այն բոլոր ընկերութիւնների և կոմիտեների վրայ, որոնք հիմնուած են ջուլհակների կարիքի դէմ կռուելու համար։ Վերջի ի վերջոյ ինքը ջուլհակն էլ սկսեց հաւատալ այդ կարիքին, և այդ բոլորը մեխի պէս գլխում ցցուեց։ Թող մէկը համարձակուի նրա գլխից հանել այդ բանը! Այժմ նա գիտէ, միայն տրտնջալ։ Այժմ նրա համար այս էլ վատ է, այն էլ վատ է։ Այժմ տուր նրան ինչ որ կայ աշխարհիս երեսին, ամենալաւ բանը։ (Ցանկարծ լսւում է բազմածայն, աւելի ու աւելի սաստկացող—«հուռռա՜»)։

Կիտտելհաուս. Այդպիսով այդ բոլոր մարդասիրութիւնը այն տեղը հասցրեց, որ ոչխարները մի գիշերում իսկական գայլեր դարձան։

Դրէյսիդեր. Իհարկէ, ինչ ասել կուզէ! Եթէ սառնարիւն մտածենք այդ բոլորը, այդպիսով սրա մէջ էլ կարելի է լաւ կողմեր գտնել։ Գուցէ այդ անցքերը ուշադրութիւն դարձնել կտան իրանց վերայ և կառավարութեան շրջաններում, և այնտեղ այն համոզման կգան, որ այդպէս երկար շարունակուել չի կարող, որ անպայման հարկաւոր է մի օրէնք բան անել, եթէ չեն կամենում, որ մեր երկրի արդիւնաբերութիւնը վերջնականապէս ոչնչանայ։

Կիտտելհաուս. Ասացէք խնդրեմ, իսկ ի՞նչ է իսկապէս այդ սարսափելի անկման պատճառը։

Դրէյսիդեր. Օտարազգիները պաշտպանուել են մեզնից մաքսերով, նրանց գլխաւոր շուկաները մեզ համար կտրուած են, իսկ մեզանում, մենք ստիպուած ենք ոչ կեանքի, այլ մահուան կռիւ մղել մրցումների դէմ, որովհետև չէ՞ որ այդ տեսակէտից ամէն բան մեզ են թողել, բացառապէս մեզ!

Պֆէյֆեր. (Մտնում է, օրրուելով, գունատուած և ձաները շնչելով) պ. Դրէյսիդեր! պ. Դրէյսիդեր!

Դրէյսիդեր. (Որը արդէն կանգնած էր հիւրասենեակը

տանող դռան մէջ բարկացած շուռ գալով)։ Էր, էլ ի՞նչ է պատահել, Պֆէյֆեր։

Պֆէյֆեր. Ո՛չ... Ո՛չ... Ի՛ սէր Աստուծոյ!...

Դրէյսիգեր. Ինչո՞ւմն է բանը։

Կիտտելհաուս. Դուք միայն վախեցնում էք, ասացէք շուտով։

Պֆէյֆեր. (Դեռ բոլորովին իրեն կորցրած)։ Ի սէր բոլոր սրբութիւններին... այս ի՞նչ է, այս ինչ բան է իսկապէս... ոստիկանութիւն... օհ՜, համա կհասնի է՞!...

Դրէյսիգեր. Գրողը տանի, ասացէք վերջապէս, ի՞նչ է պատահել ձեզ... մէկն ու մէկը զլուխն է կորցրել ի՞նչ է։

Պֆէյֆեր. (Գրէթէ լալով աղաղակում է վախեցած)։ Նրանք ապատեցին Մորից Եգերին, ոստիկանապետին ծեծեցին, և դուրս արին... ժանդարմին ծեծեցին, և դուրս արին... Առանց կասկածի... թուրը կոտրեցին... ո՛չ... ո՛չ...

Դրէյսիգեր. Դուք խելագարուե՞լ էք Պֆէյֆեր!

Կիտտելհաուս. Բայց այստեղ յեղափոխութեան հոտ է փչում։

Պֆէյֆեր. (Նստելով աթոռի վրայ դողում է ամբողջ մարմնով և լացի ձայնով)։ Պ. Դրէյսիգեր, բանը վատ է, պ. Դրէյսիգեր, շատ վատ է բանը!

Դրէյսիգեր. Այստեղ ամբողջ ոստիկանութիւն պէտք է ուղարկել...

Պֆէյֆեր. Պ. Դրէյսիգեր, բանը շատ վատ է!

Դրէյսիգեր. Դէ՜հ, լսեցէք վերջապէս, Պֆէյֆեր, գրողը տանի ձեզ։

Տ. Դրէյսիգեր. (Մտնում է Պաստորի կնոջ հետ հիւրասենեակից)։ Դէհ այս արդէն իսկապէս վրդովեցուցիչ է Վիլհելմ! Ամբողջ մեր երեկոն փչացրին։ Այ, քեզ բան, այժմ տիկին Կիտտելհաուսն է կամենում գնալ տուն։

Կիտտելհաուս. Սիրելի տիկին Դրէյսիգեր, այսօր կարծում եմ այդպէս աւելի խելացի կլինի անել...

Տ. Դրէյսիգեր. Դու պէտք է նրանց լաւ դաս տայիր, այդ ջուլհակներին, Վիլհելմ։

Դրէյսիգեր. Գնա ինքդ խօսիր նրանց հետ, ինքդ խօսիր! Ինքդ գնա! (Կանգնելով պաստորի առաջ անօգնական)։ Ի՞նչ է ես մի որևէ բռնակա՞լ եմ, ես մի որևէ հոգեհան եմ։

Կառապան Իւհան. (Մտնում է)։ Տիրուհի! ես լծեցի ձիերը։ Պարոն կանդիտատը երեխաներին նստացրեց արդէն կարետը, եթէ բանը վատանայ մենք կերթանք։

Տ. Դրէյսիգեր. Ի՞նչ, վա՞տ կլինի։

Իւհան. Զգիտեմ ճշմարիտ! ես կարծում էի... ժողովուրդը քանի գնում շատանում է. նրանք չէ՞ որ ոստիկանապետին ժանդարմի հետ միասին դուրս վռնդեցին։

Պֆէյֆեր. Բանը վատ է, պ. Դրէյսիգեր, բանը վատ է։

Տ. Դրէյսիգեր. (Սաստկացող վախով)։ Ի՞նչ է վատ, ի՞նչ էն կամենում, այդ մարդիկը, խօ չեն կարող յարձակուել մեզ վրայ Իւհան։

Իւհան. Տիրուհի, նրանց մէջ իսկական շներ կան։

Պֆէյֆեր. Բանը վատ է, շատ վատ է!

Դրէյսիգեր. Լսիր, աւանակ! դռները փակ են։

Կիտտելհաուս. Թոյլ տուէք խնդրեմ... թոյլ տուէք խընդրեմ... Ես մի բան վճռեցի... թոյլ տուէք.... (Իւհանին)։ Իսկապէս այդ մարդիկը ի՞նչ էն պահանջում։

Իւհան. (Վախեցած)։ Կամենում են, որ վարձը աւելացնուի... յիմարներ!...

Կիտտելհաուս. Լաւ, շատ գեղեցիկ! ես դուրս կգամ ու կկատարեմ իմ պարտքս, կաշխատեմ նրանց հետ լուրջ խօսել։

Իւհան. Ո՛չ, պ. պաստոր, դուք այդ աւելի լաւ է թողէք։ Այստեղ խօսքերը չեն օգնիլ։

Կիտտելհաուս. Սիրելի պ. Դրէյսիգեր, մի խօսք ևս, դռների եաև մարդիկ դրէք, իսկ իմ եաևից հրամայեցէք փակել։

Տ. Կիտտելհաուս. Ա՛խ, Յովսէփ, դու իսկապէս կամենում ես...

Կիտտելհաուս. Այո, կամենում եմ, այո, կամենում եմ: Ես գիտեմ թէ ինչ եմ անում: Մի անհանգստանար, Աստուած ինձ կպաշտպանէ:

Տ. Կիտտելհաուս. (Նրա ձեռքը սեղմում է, յետ է կանգնում և աչքերը սրբում է):

Կիտտելհաուս. (Նոյն ժամին, երբ ցածից ժողովուած բազմութեան խուլ աղմուկ է բարձրանում): Ես ցոյց կտամ... Ես կձևանամ թէ հանդարտ տուն եմ գնում... տեսնենք... մի՞թէ իմ հոգևոր կոչումը... Մի՞թէ ինձ այլևս այնքան էլ չեն յարգում այդ մարդիկ... տեսնենք... (Վերցնում է գլխարկը և փայտը): Այդպէս ուրեմն, յառաջ—Աստուծոյ անունով: (Հեռանում է Դրէյսիգերի Պֆէյֆերի և Իւհանի ուղեկցութեամբ):

Տ. Կիտտելհաուս. Սիրելի տ. Դրէյսիգեր, (Հեկեկալով ընկնում է նրա պարանոցով): Վայ թէ նրան մի բան պատահի...

Տ. Դրէյսիգեր. (Կարծես բացականչելով): Ես ճշմարիտ չգիտեմ, տիկին Կիտտելհաուս, ես կարծես թէ... Ես ճշմարիտ չգիտեմ ինչ է պատահում ինձ: Չէ՞որ այդպիսի բան չի լինիլ! Եթէ այդ այդպէս է, դուրս է գալիս, որ հարստութիւնը մի ինչ որ յանցանք է: Գիտէ՞ք ինչ է, եթէ մէկը ինձ ասէր այդ բանը ես ճշմարիտ չգիտեմ, տիկին Կիտտելհաուս, աւելի լաւ էր որ ես մնայի իմ հասարակ դասակարգի մէջ:

Տ. Կիտտելհաուս. Սիրելի տ. Դրէյսիգեր, ամէն մի դասակարգում բաւականին վիշտ և հիասթափութիւն կայ:

Տ. Դրէյսիգեր. Իհարկէ, իհարկէ, ես ինքս էլ այդպէս եմ կարծում, իսկ եթէ մենք ուրիշներից աւելի հարուստ ենք, մենք խօ այդ չենք—դուշակել: Ամէն մի գրոշը աղնիւ աշխատանքով է ձեռք բերուած: Չէ կարող պատահել, որ այդ մարդիկը յարձակուեն մեզ վրայ: Մի՞թէ իմ ամուսինս մեղաւոր է, որ գործերը վատ են գնում: (Ցածից լսւում է բազմութեան աղաղակ, նոյն միջոցին, երբ տիկինները վախեցած և զուսնատ նայում են միմեանց երեսի, ներս է մտնում Դրէյսիգերը):

Դրէյսիգեր. Գլխիդ մի բան ծածկիր Ռոզա, և իսկոյն կառք նստիր, ես նոյնպէս դուրս կգամ: (Վազում է դէպի գրամարկղը, բաց է անում, հանում է մի քանի թանկագին իրեր):

Իւհան. (Ներս է մտնում): Ամէն բան պատրաստ է: Միայն թէ շուտ արէք, քանի եռևի դռները արձակ են:

Տ. Դրէյսիգեր. (Սարսափելի երկիւղով, փաթաթուելով կառապանին): Իւհան, սիրելի, թանկագին Իւհան! ազատիր մեզ սիրելի, բարի Իւհան! ազատիր երեխաներիս, ախ, ա՜խ...

Դրէյսիգեր. Ուշքի եկ, խնդրեմ, բաց թող Իւհանին:

Իւհան. Հանգիստ եղէք, տիրուհի! մեր սև ձիաները լաւերն են. նրանց ոչ ոք չի հասնիլ, իսկ ով ճանապարհին մեր առաջն ընկնի, նրա վրայից կանցնենք, (դուրս է գնում):

Տ. Կիտտելհաուս. (Բոլորովին իրան կորցրած և երկիւղով): Իսկ իմ ամուսի՞նը, իսկ ամուսի՞նս, ասացէք պ. Դրէյսիգեր, ամուսինս ո՞րտեղ է:

Դրէյսիգեր. Նա ողջ և առողջ է, տ. Կիտտիլհաուս, հանգարտուեցէք, խնդրեմ, նրան առանձին ոչինչ չի պատահել:

Տ. Կիտտելհաուս. Նրան մի բան է պատահել և դուք չէք կամենում ասել, չէք կամենում ասել:

Դրէյսիգեր. Հանգիստ եղէք, նրանք կփոշմանեն այդ բանից! Ես շատ լաւ գիտեմ ում մատն է խառը դրա մէջ: Այնպիսի անսահման, անամօթ լրբութիւնը անպատիժ չի մնալ: Մուխը որ այդպէս է վարուում իւր հոգևոր հօր հետ, այդ ուղղակի անտանելի է. դրանք ուղղակի կատաղած են, կատաղած գաղաններ, դրանց հետ ըստ արժանոյն կվարուեն: (Դառնալով դէպի իւր կինը, որը կանգնած է շշմած): Դէհ, գնա, շարժուիր! (Դռան խփելու ձայներ են լսւում): Մի՞թէ դու չես լսում, նրանք ուղղակի խելագարուել են: (Լսւում է ինչպէս ցածի յարկում կոտրատում են լուսամուտները): Ուղղակի կատաղել են լրբերը! Էլ ոչինչ չի կարելի անել, պէտք է հեռանանք: (Լսւում են աղաղակներ): «Էկսպեդիտոր Պֆէյֆերին այստեղ տուէք, Էկսպեդիտոր Պֆէյֆերին»:

Տ. Դրէյսիդեր. Պֆէյֆեր, Պֆէյֆեր, Նրանք Պֆէյֆերին են պահանջում։

Պֆէյֆեր. (Ներս վազելով)։ Պ. Դրէյսիդեր, երևի դրոների մօտ էլ են մարդիկ հաւաքւում։ Դրսի դուռը երեք բոպէ հաղիւ դիմանայ։ Վիտտիխը խելագարի պէս դոյլով է կոտրում նրան։ (Ցածից լսւում են աւելի բարձր և պարզ աղմուկ)։ «Էկսպեդիտոր Պֆէյֆերին այստեղ տուէք, էկսպեդիտոր Պֆէյֆերին»։

Տ. Դրէյսիդեր. (Փախչում է, կարծես մէկը նրան հետևում է. տ. Կիատելհաուսը հետևում է նրան։ Երկուսն էլ թաղնւում են)։

Պֆէյֆեր. (Ականջ է դնում, գոյնը փոխւում է, որոշում է աղաղակները։ Նա սարսափահար է լինում։ Հետևեալ խօսքերը նա արտասանում է սարսափելի արագ և միևնոյն ժամանակ լալիս է, անքանքում է, ճչում է և աղաղակում, միևնոյն ժամանակնա Դրէյսիդերին երեխայի նման փայփայում է, ձեռքերը համբուրում է, վերջապէս բռնում է նրանից, ինչպէս խեղդուող և ոչ մի բոպէ չի պոկ գալիս, խանդարում է նրան շարժուել)։

Սիրելի, անգին, ամենաբարի պարոն Դրէյսիդեր, մեք թողնիլ ինձ, ձեզ միշտ հաւատարիմ եմ ծառայել, ես բանւորների հետ էլ եմ լաւ վարուել, նրանց հետ պայմանաւորուած գնից, ես աւելի չէի կարող տալ։ Մի թողնէք ինձ, նրանք ինձ կսպանեն, եթէ նրանք ինձ գտնեն, կսպանեն։ Ախ Աստուած իմ, Աստ-ուած իմ, կինս, երեխաներս...

Դրէյսիդեր. (Դուրս գնալով և իզուր աշխատելով ազատուել Պֆէյֆերի ձեռքից)։ Դէ՛հ, թողեցէք ինձ գոնէ, դա մի կերպ կուզդուի, կուզդուի. (գնում է Պֆէյֆերի հետ։ Մի բոպէ սենեակը դատարկ է, հիւրասենեակում լուսամուտները ջարդում են։ Ամբողջ տան մէջ սաստիկ ճռնչիւն է լսւում. ետոյ, բարձր. «կեցցէ». յետոյ տիրում է խաղաղութիւն։ Քանի վայրկեանից յետոյ լսւում են սանդուխներից բարձրացող կամաց և զգոյշ ոտնաձայներ։ Լսւում են վախկոտ ու զսպուած

աղաղակներ)։ «Դէպի ձախ»—«բարձր»! «շշ... կամաց, կամաց!»—«մի հրէշ»—«Այ քեզ բան»!—«շտապեցէք, հոգեհաններ»—դէպի ազատութիւն ենք գնում! «մտիր»—դու ներս մտիր! (Դրսի դրան մօտ երևում են երիտասարդ կին և այր ջուլհակներ, որոնք չեն համարձակւում ներս մտնել և աշխատում են մէկը միւսին ներս հրել։ Մի փոքր ժամանակից վախկոտութիւնը յաղթւում է և խեղճ, նիհար, մասամբ հիւանդոտ, պատռտուած դէմքերը ցրւում են, Դրէյսիդերի առանձնասենեակում և հիւրասենեակում։ Նրանք հետաքրքրութեամբ և վախկոտութեամբ ամեն բան զննում են և յետոյ շշնջում։ Մի քանի աղջկերք բացմոցն են շարժում, մի քանի խմբակներ են կազմւում, որոնք իրենց վերայ նայում են հայելու մէջ։ Մի քանիսը աթոռների վրայ են բարձրանում, որպէս զի աւելի լաւ զննեն և վերցնեն պատից նկարները, մինչ այս մինչ այն, այդ խղճալի կերպարանքները աւելի ու աւելի շատանում են սենեակում)։

Առաջին կին ջուլհակ. (Մտնում է)։ Ոչ, ոչ, այդ չեղաւ... ցածում այնպիսի բան են սկսել, որ ամբողջ գործը կրփրչացրնեն։ Այդ արդէն անխելքութիւն է. ոչ միտք կայ, ոչ դատողութիւն դրա մէջ, և այդ բոլորը ոչ մի բարի հետևանքի չի տանի։ Ում խելքը գլխին է, նա այդ բանում չի մասնակցիլ, ես գոնէ ինքս կզգուշանամ այդպիսի անկարգութիւններից։ (Եղերը, Բեկկերը, Վիտտիխը, փայտի դոյլը ձեռքին Բաումերտը և մի քանի ծեր և երիտասարդ ջուլհակներ ներս են մտնում, կարծես մէկի ետևից վազելով, միմեանց կանչելով խռպոտ ձայներով)։

Եղեր. Ո՞րտեղ գնաց։

Բեկկեր. Ո՞ւր է այն հոգեհանը։

Բաումերտ. Մենք քեզ համար շատ ենք համբերել, հիմայ էլ մենք քեզ ցոյց կտանք...!

Վիտտիխ. Եթէ գտնենք, կկախենք նորան!

Առաջին երիտ. ջուլհակ. Բռնենք նրա ոտքերից և լուսամուտից ցած գցենք, որ էլ տեղից չշարժուի։

Երկրորդ երիտ. ջուլհակ. (Մտնում է)։ Փախաւ! էլ հիմայ նրա հետքն էլ կորաւ!

Բոլորը. Ո՞վ փախաւ։

Երկրորդ երիտ. ջուլհակ. Դրէյսիզերը։

Բեկկեր. Եւ Պֆէյֆերը նոյնպէս։

Ձայներ. Պֆէյֆերին որոնեցէք, Պֆէյֆերին որոնեցէք!

Բաումերտ. Ապա Պֆէյֆեր!

(Ծիծաղ)։

Եգեր. Եթէ մենք այդ անասունին չբռնենք, այդ Դրէյսիզերին, գրնէ կապքատայնենք։

Բաումերտ. Թող ինչպէս մի եկեղեցու մուկ վազի, թող աղքատանայ! (Ամենքը վազում են հիւրասենեակի դռների մօտ, որպէսզի սկսեն աւերել)։

Բեկկեր. (Որը առաջ է վազում, յանկարծ շուռ է գալիս և կանգնեցնում է միւսներին)։

Սպասեցէք, աղերք, լսեցէք! Հէնց որ այստեղ կմաքրենք, յետոյ կերթանք իսկական գործի։ Այստեղից ուղղակի Բիլաու կերթանք, Դիարիխի մօտ, դէպի նրա մեքենաները! Չէ՞ որ բոլոր չարիքը գործարաններից է ծագում!

Ծ. Անդօրգէ. (Մտնում է նախասենեակից։ Մի քանի քայլ անցնելով կանգնում է, շուարած նայում է չորս կողմը, գլուխը շարժում է, ճակատին խփում է, և ասում)։ Ես ո՞վ եմ, ես ջուլհակ, Անտօն Անդօրգէն եմ։ Խելագարուել է թէ ինչ է այդ Անդօրգէն։ Ճշմարիտ, գլուխս պտտւում է ամեն բան պտտւում է աչքիս առաջ, ի՞նչ է անում նա այնտեղ։

(Մի քանի անգամ խփում է գլխին)։ Խելքս գլխիս չէ, ես այլէս ոչ մի բանի համար պատասխանատու չեմ։ Խելքս տեղը չէ, հեռու, հեռու, հեռու, չարագործներ!... Գլուխդ հեռացրու, ոտերդ հեռացրու, ձեռքերդ հեռացրու, եթէ դու իմ տունս ինձնից խլում ես, ես էլ քոնը կխլեմ! Յառաջ, տրէք դրանց, թափեցէք! (Ճչալով մտնում է հիւրասենեակը։ Ներկայ եղողներն հետևում են նրան ճչալով և ծիծաղելով)։

Վ. ԱՐԱԳՈՑ.

ՀԻՆԳԵՐՈՐԴ ԳՈՐԾՈՂՈՒԹԵԱՆ ԱՆՁԻՆՔ.

Բեկկեր.
Մորից Եգեր.
Ծ. Բաումերտ.
Վիտտիխ.
Հորնիգ.
Ծեր Հորնիգ ջուլհակ.
Նրա կինը.
Գոդլիբ, սրա որդին.
Լուիզա, վերջինիս կինը.
Միլհեն, նրա աղջիկը.
Շմիդտ, Փելտչեր.
Մի քանի ծեր և երիտասարդ այր և կին ջուլհակներ.

ՀԻՆԳԵՐՈՐԴ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ

Լանգին Բիլաու։ Ծեր ջուլհակ Հիլզէի սենեակը։ Ձախ կողմում փոքրիկ լուսամուտ, նրա առաջ ջուլհակի դազդեահ, աջակողմում մահճակալ, նրա մօտ սեղան, աջ կողմի անկիւնում վառարան, իւր շրջապատ նստարանով։ Սեղանի շուրջը մահճակալի ծայրին և փայտի նստարանների վրայ նստած են ծեր Հիլզէն, նրա պառաւ, կոյր և գրէթէ խուլ կինը, նրա որդին, Գոտլիբը, և վերջինիս կին Լուիզան։ Նա արտասանում է առաւօտեան աղօթքը։ Սեղանի և դազդեահի միջ տեղում թել փաթաթելու անիւը կարժառով։ Մրոտած դերանների վրայ յարմարեցրած են դազդեահի զանազան պատկանելիքներ։ Մանուածքի երկար կոճերը ցած են կախուած։ Սենեակում թափթփուած է զանազան այլն օչին։ Այդ շատ նեղ ցածրիկ սենեակի եռևի պատում կայ մի դուռ դէպի նախասենեակ, այդ դռան դէմ ու դէմ մի ուրիշ բացուած դուռ, որի միջից երևում է նոյնպէս մի սենեակ նոյն կերպ կահաւորուած, ինչպէս առաջինը։ Նախասենեակը սալայատակ է, պատերի սվաղը թափուած, դէպի վերնատան դրուած է փայտից հին սանդուխք։ Երևում է տաշտակի մի ծայրը, որը դրուած է նստարանի վրայ։ Ամէն տեղ թափուած են սպիտակ և հին ցնցոտիներ և խրդճալի տնային կարասիք։ Երեք սենեակն էլ լուսաւորուած է ձախ կողմից։

Ծ. Հիլզէ. Մօրուքաւոր, լայնաթիկունք, բայց ծերութիւնից կռացած և զառամած աշխատանքից և մի թեից զուրկ ծերունի. նրա երեսը հողի գոյն ունի, քիթը սրուած, նրա անդամները դողում են, ամբողջապէս նա ոսկոռ է, և կաշի։ Ջուլհակին յատուկ, խոր ընկած, կարծես, կերուած աչքեր։ Բարձրանալով տեղից իւր որդու ու հարսի հետ նա աղօթում է)։

Տէր մեր Աստուած, մենք չենք կարող արժանի կերպով քեզ շնորհակալութիւն յայտնել, որ դու մեզ ներում ես, քո դթութեամբ և քո ողորմածութեամբ։ Որ դու մեզ այս դիշեր էլ պահպանեցիր։ «Անպատմելի է քո փառքը, գթութիւնը, Տէր, իսկ մենք աղքատ, չար ու մեղաւոր մարդիկս, արժանի չենք, որ քո ոտքը մեզ կոխոտի, այնքան մենք մեղաւոր ենք և յանցաւոր։ Բայց դու Հայր, նայում ես մեզ վրայ և ընդունում ես մեզ քո Միածին Որդոյ մեր Աստուծոյ, Յիսուսի Քրիստոսի սիրոյն համար։ Նրա արիւնը իմ զարդ ու զարդարանքս է։ Եւ եթէ երբեմնակի տրտնջում ենք քո պատժող մտրակի ուժի դէմ, և

եթէ շատ է տաքացած թւում մեր մեղքերի քաւութեան հնոցը, ներիր և թող մեզ մեր մեղքերը և մեզ տուր համբերութիւն, ով երկնային Հայր որպէս զի դատարկելով մեր տանջանաց բաժակը արժանանանք քո երանութեան։ Ամէն!

Պ. Հիլզէ. (Որը կռացած, լարուած ականջ է դնում աղօթքին, լալով)։ Ախ, ծերուկ, դու միշտ այդպիսի լաւ աղօթքներ ես հնարում։

(Լուիզան կանգնում է տաշտակի մօտ, Գոտլիբը գնում է նախասենեակի միւս կողմը)։

Ծ. Հիլզէ. Իսկ աղջիկդ ո՞րտեղ է։

Լուիզա. Պետերսվալդաու է գնացել, Դրէյսիգերի մօտ։ Նա երեկ երեկոյ դարձեալ երկու կաժ կծկեց։

Ծ. Հիլզէ. (Շատ բարձր)։ Պառաւ քեզ համար կծկելու անիւը չբերե՞նք արդեօք։

Պ. Հիլզէ. Բեր, բեր, ծերուկ։

Ծ. Հիլզէ. (Անիւը նրա առաջ դնելով)։ Ուրախ կլինէի, ես, եթէ կարողանայի քեզ տեղ բանել...

Պ. Հիլզէ. Այդ էր պակաս... Իսկ ես ինչ անեմ, էս արարած օրը։

Ծ. Հիլզէ. Տուր ձեռքերդ սրբեմ, թէ չէ չլինի թէ խրծուծն էլ խզոտես, լսո՞ւմ ես։ (Սրբում է փայտով նրա ձեռքերը)։

Լուիզա. (Լուացք անելով)։ Մի՞թէ մենք իւղալի բաներ ենք կերել։

Ծ. Հիլզէ. Երբ իւղալի բան չկայ ցամաք հաց ենք ուտում, հաց չկայ. դեռնախնձոր ենք ուտում, իսկ երբ դեռնախնձոր չկայ թեփ ենք ուտում։

Լուիզա. (Ցանդուղն)։ Իսկ երբ ալիւր չի լինիլ, մենք այնպէս կանենք, ինչպէս Վինդլերն է անում։ Կը փնտռենք թէ քերթողը արդեօք մի որևէ տեղ սատկած ձի չէ թաղել, կքանդենք, կփորենք, և մի երկու շաբաթ կկերակրուենք, այդ լեշով. այդպէս չէ՞։

Գոտլիբ. (Եռևի սենեակից)։ Դու այստեղ ինչ ես դուրս տալիս

Ծ. Հիլզէ. Գոնէ զգուշացիր, այդ անաստուած խօսքերից։ (Մօտենում է դաղդեահին և դոչում)։ Օգնիր, Գոտլիբ, հարկաւոր է մի քանի թելեր էլ ձգել։

Լուիզա. (Լուսնալով)։ Գոտլիբ, գնա հօրդ օգնիր։ (Գոտլիբը գալիս է. պառաւը և որդին սկսում են իրանց մանրակրկիտ աշխատանքը ձգելով հինգը թելերը ձգում են դաղդեահի կողքերից։

Հէնց որ սկսում են այս աշխատանքը, նախասենեակում երևում է Հորնիզը)։

Հորնիզ. (Դռներում)։ Աստուած օգնական։

Ծ. Հիլզէ և իւր որդին. Շնորհակալ եմ Հորնիզ!

Ծ. Հիլզէ. Դէհ, ասա ի սէր Աստուծոյ, դու իսկապէս ե՞րբ ես հանգստանում ցերեկը առաւուր ես անում, իսկ գիշերը պահապան ես կանգնում։

Հորնիզ. Է՞հ, այժմ քունս էլ չի տանում։

Լուիզա. Բարև Հորնիզ։

Ծ. Հիլզէ. Դէ՞հ, խէր խաբար, գաղուստդ բարի։

Հորնիզ. Լաւ նորութիւններ բարեկամ։ Պետերսվալդաուի ջուլհակները այնպէսի օյին են հանել, որ վեր են առել և գործարանատէր Դրէյսիգերին իւր ընտանիքով դուրս են ծրգել փողոց։

Լուիզա. (Պարզ վրդովմունքով)։ Դէհ, Հորնիզը դարձեալ սկսեց ստել։ Հնարել։

Հորնիզ. Այս անգամ ոչ սիրունիկս, այս անգամ, ոչ իսկ իմ սայլակում, լաւ մանկական զոգնոցներ կան։ Ոչ, ոչ, իսկական ճշմարտութիւն եմ ասում. Աստուծու անունը վկայ, վեր են առել և դուրս ձգել։ Երեկ երեկոյ նա Ռեյշենբախ էր հասել։ Այնտեղ էլ նրան չեն ընդունել, ջուլհակներից վախեցել են, վերջը սարսափած է եղել գնալ Շվէյնից։

Ծ. Հիլզէ. (Զգոյշ ձգում է թելը կարժից և մոտեցնում է

կողքի ճեղքին, իսկ որդին ձգում է նրան միւս կողմից երկաթէ կարթով)։ Բաւական է, ստեր հնարեցիր, Հորնիզ!

Հորնիզ. Դէհ լաւ, տեղն ու տեղը մնամ, եթէ սուտ եմ ասում, որ այդ մասին այժմ վերջին երեխան գիտէ։

Պ. Հիլզէ. Ճշմարիտ, մեզանից մէկը խելքից եղել է, կամ դու, կամ ես։

Հորնիզ. Ճիշտ, Աստուծոյ անունը վկայ, ինչպէս պատմեցի, ուղիղ այնպէս էլ եղել է, ես չէի խօսիլ եթէ ինքս տեսած չլինէի։ Սեպհական աչքերովս եմ տեսել, ինչպէս այժմ քեզ եմ տեսնում, Գոտլիբ։ Ամբողջ տունը քար ու քանդ արին, ցրիւ տուին, սկսած ներքնատնից, մինչև վերնայարկը։ Յախճապակեայ անօթները լուսամուտներից ցած էին գցում— այնպէս որ կտորները կտորի վրայից սլլում էին ջարդւում, իսկ քանի բեռ կտաւ կայ այժմ թափուած առուի մէջ, բաւական կերպով առաջը կտրել են—հաւատա, ուղղակի ջուրը վրայից և կողքերից էր անցնում և բոլորովին կապոյտ, լեղակի գոյն էր ստացել, այնքան վերևից լեղակ էին թափել։ Իսկ լեղակի փոշին կապոյտ ամպի պէս կանգնած էր, բա՜, էլ ինչեր ասես որ չարին! Ոչ միայն տան մէջ... այլ և ներկարանում... և ներքնատանը!... Սանդուխքների մուհաջառները կոտրատեցին, յատակները քանդոտեցին, հայելիները փշրեցին, բազմոցները, բազկաթոռները — բոլորը պատառոտեցին, կտոր-կտոր արին, ոտնատակ տուին ամբողջապէս տունը հիմնայատակ արին, ոչնչացրին։ Կուզես հաւատա, կուզես ոչ, պատերազմից էլ վատ էր։

Ծ. Հիլզէ. Եւ դու ասում ես, որ այդ բանը այստեղի ջուլհակներն են կատարել։ (Դանդաղ և թերահաւատ կերպով գլուխը շարժում է։ Դրան մօտ հետաքրքրուող տնկեցներ են հաւաքուել)։

Հորնիզ. Բայց էլ ուրիշ ով! Ես բոլորին կարող եմ մի առ մի թուել։ Ես չէ՞ որ քննիչ նախագահին ինքս եմ սենեակից սենեակ մատ ածել և ջուլհակներից մի քանիսի հետ էլ խօսացել եմ! Նրանք սովորականի պէս քաղաքավարի էին,

Նրանք իրանց գործը կամայ-կամաց պատրաստել էին, բայց հիմնաւորապէս գլուխ բերելու համար. նախագահը շատերին էր խօսացնում նրանք ինչպէս միշտ խոնարհ էին: Մինչ թէ նրանց ոչ մի բանով չէր կարելի կանգնեցնել: Ամենալաւ կամ կարաորին այնպէս են կոտրել կարծես թէ յատկապէս դրա համար վարձուած լինէին:

Ծ. Հիլդէ. Իսկ նախագահին դո՞ւ էիր սենեակները ման ածում:

Հորնիգ. Ինչո՞ւ չէ, ինձ ամէն մէկը ճանաչում է: Ես ոչ ոքի հետ հաշիւ չունեմ, ամենի հետ էլ բարեկամ եմ: Ես Հորնիգը չլինեմ, թէ նրան ման չեմ ածել: Եւ կհաւատաք, շատ վատ էր գալիս, նրան էլ սրտովը չէր, իսկ ինչո՞ւ: Երանի թէ մէկն ու մէկը մի խօսք խօսեր, ամենքն էլ լուռ էին: Թշուառները վերջ ի վերջոյ իրանց քաղցածութեան վրէժը լուծեցին:

Լուիզան. (Դողդոջուն ձայնով, սաստիկ յուզուած, աչքերը դոգնոցով սրբելով): Այդպէս, այդպէս էլ նրանց հարկաւոր էր:

Ծնկեցների ձայները. «Այստեղ էլ բաւական կեղեքիչներ կան». «Հէնց այստեղ մեր հանդէպը այդպիսի մէկն ապրում է»... Զորս ծի է պահում, ախոռատուն, վեց կառք ունի, իսկ ինչ հոգ թէ ջուլհակները դրա համար քաղցից կըմեռնեն:

Ծ. Հիլդէ. (Կարծես դեռ չհաւատալով): Այդ ի՞նչպէս պատահեց:

Հորնիգ. Ով գիտէ, մէկը մի բան է ասում, միւսը ուրիշ:

Ծ. Հիլդէ. Իսկ ի՞նչ են ասում:

Հորնիգ. Աստուած գիտէ, իբր թէ Դրէյսիգերը ասել է. «եթէ ջուլհակները քաղցած են թող խոտ լափեն! ես էլ ուրիշ ոչինչ չգիտեմ: (Ծնկեցների մէջ շարժում, որոնք միմեանց պատմում են լսածը զանազան ձևերով և զայրոյթի շարժումներով):

Ծ. Հիլդէ. Լսիր, Հորնիգ, եթէ դու ինձ ասես, Հիլդէ

պապիկ դու վաղը մեռնելու ես, այդ կարող է լինել, ես քեզ կպատասխանեմ, ինչու չէ, կարող է, եթէ դու ասես, Հիլդէ պապիկ վաղը պրուսացւոց թագաւորը քեզ մօտ հիւր է գալու... հա... բայց, որ իմ և որդուս նման ջուլհակները այդպիսի բաներ անեն... ոչ, երբէք! երբէք ես չեմ հաւատալ այդ բանին:

Միլխեն. (Գեղեցիկ եօթ տարեկան աղջիկ, երկար բաց թողած մազերով, ներս է վազում փոքրիկ զամբիւղը ձեռքին մօտեցնում է մօրը, արժաթի գդալը): Մայրիկ, մայրիկ ջան, տես ինչ ունեմ! սրանով դու ինձ համար շոր կառնես:

Լուիզա. Այդ որտեղից ես վազէվազ գալիս փոքրիկս: (Աւելի ու աւելի յուզուելով, ու այլայլուելով): Այդ ինչ ես բերել, ի սէր Աստուծոյ». դու հազիւ կարողանում ես շունչ քաշել: Եւ դեռ կաժերն էլ զամբիւղումդ է մնացել: Այդ ի՞նչ է նշանակում:

Ծ. Հիլդէ. Այդ որտեղից ես վերցրել գդալը:

Լուիզա. Երևի գտել է:

Հորնիգ. Երևի երկու երեք տալեր կտան նրա համար:

Ծ. Հիլդէ. (Սաստիկ բարկացած): Դուրս, անպիտան աղջիկ, դուրս այս րոպէիս, դուրս կորիր! այս րոպէիս ասում եմ, թէ չէ կծեծեմ: Գդալը դու այնտեղ տար, որտեղից վերցրել ես, դուրս կորիր! դու ուզում ես մեզ ամենքիս գոր դուրս բերել: Ես քեզ ցոյց կտամ ուրիշի բաները գողանալը... (Ման է գալիս, որ մի բանով ծեծի):

Միլխեն. (Մօրը շորից կպչելով լալիս է): Մի ծեծիր, ինձ պապիկ... մենք... գտել ենք... բոլոր երեխաներն էլ... ա՛յ... դ... պէսն... ունեն:

Լուիզա. (Վախից և սարսափից հազիւ կարողանում է խօսել): Ահա, տեսնո՞ւմ ես նա գտել է. դու որտեղ ես գտել:

Միլխեն. (Հեկեկալով): Պեսերսվալդաում եմ գտել, Դրէյսիգերի տան առաջ:

Ծ Հիլդէ. Ահա թէ ի՞նչ դէհ, շատպիր, թէ չէ ես քեզ կհասնեմ...

Գ. Հիլզէ. Այդ ի՞նչ է պատահել այդտեղ։

Հորնիգ. Լսիր ես քեզ ինչ կասեմ, Հիլզէ պապիկ, թող Գոտլիբը շորերը փոխի և գդալը տանի ատեանին ներկայացնի։

Ծ. Հելզէ. Հագնուիր, Գոտլիբ։

Գոտլիբ. (Շտապով հագնուելով)։ Կգնամ դիւանատուն և կասեմ, դուք ոչ մի վատ բան չմտածէք, երեխան ի՞նչ է հասկանում։ Իսկ գդալը ահա... դէհ, բաւական է, մի լաւ աղջիկ! (Մայրը լացող աղջկանը տանում է եւեի սենեակը, դուռը ծածկում է, և վերադառնում կրկին)։

Հորնիգ. Երևի մի երեք տալեր կարժէնայ։

Գոտլիբ. Մի թաշկինակ տուր փաթաթեմ գդալը, Լուիզա, չլինի թէ մի կերպ փչացնեն, չէ՞ որ թանգագին բան է (գդալը փաթաթելիս աչքերը լցւում են)։

Լուիզա. Եթէ այդ գդալը մեզ տային, մի քանի շաբաթ կարող էինք ապրել դրանով!

Ծ. Հիլզէ. Դէհ, շուտ արա, շուտ արա, շտապիր! որքան ոյժ ունես վազիր... լաւ բան ես մտածել, այդ էր պակաս! Շուտ հեռացրու դու այդ սատանայական գդալը, շուտով աչքից հեռացրու։ (Գոտլիբը հեռանում է)։

Հորնիգ. Դէհ, ես էլ կերթամ։ (Դուրս է գալիս, խօսում է մի առ ժամանակ նախասենեակում և վերջապէս հեռանում է)։

Ֆելտշեր Ըմիդտը. (Շարժուն, փոքրիկ հասակով, ինչպէս մի դունդ կլորիկ և գինուց կարմիր ու խորամանկ դէմքով, մտնում է նախասենեակը)։ Բարև ձեզ, բարի մարդիկ. լաւ բանի վրայ էք! խօսք չկայ։ Սպասեցէք, ես ձեզ ցոյց կտամ։ (Մատով սպառնալով)։ Ախ, դուք խարդախներ! (դրան մէջ, ներս չմտնելով)։ Առողջ ես Հիլզէ պապիկ, (մի կնոջ, նախասենեակում)։ Էր, ի՞նչպէս է ոսկրացաւդ, մի քիչ լա՞ւ է։ Ա՛յ, տեսնում ես, իսկ դո՞ւ, Հիլզէ պապիկ, չէ՞ որ ձեզ էլ այցելել հարկաւոր է, պառաւին ինչ է պատահել։

Լուիզա. Նրա աչքի լոյսը մարել է, ինչպէս երևում է պ. բժիշկ, նա ոչինչ չի տեսնում։

Ֆելզէ. Ըմիդտ։ Դա փոշուց և ճրագով գործելուց է... Իսկ դուք ի՞նչ կասէք այս բանին։ Ամբողջ Պետերսվալդաուն ոտքի է կանգնել։ Այսօր առաւօտը նստում եմ մի՛ձիանի կառքում և ոչ մի վատ բան չեմ գուշակում։ Լսում եմ, վա, սա ինչ հրաշք է! ասա դու ինձ, Հելզէ, ի սէր բոլոր սատանաների, ի՞նչ է պատահել այս ժողովրդին։ Այնպէս են կատաղել, ինչպէս մի գայլերի ոհմակ։

Ապստամբութիւն են սարքում, դողութիւն աւազակութիւն... Միլխեն! իսկ ո՞րտեղ է Միլխենը։ (Մայրը դուրս է բերում արտասուքից կարմրած աչքերով Միլխենին)։ Ապա, Մելխենիկ ձեռքդ դրպանս տար։ (Մելխենը ձեռքը տանում է Ֆելզերի դրպանը)։ Դա քեզ համար է, մեղրահաց է, դէհ, դէհ, բոլորը մի անդամից չի կարելի! ախ, դու չարաճճի! դու առաջ երգիր! «Աղուէսը բաղիկին գողա...» «ապա՞... աղուէսը բաղիկին գողացաւ»... սպասիր դու այդ ինչ ես արել։ Ի՞նչ էիր ասում պաստորի ժաերի մասին։ Իսկ նրանք և գանգատեցին պարոն կանտորին... Չէ դուք միայն այս մտածեցէք! հաղար հինգ հարիւր մարդ ոտի է կանգնել։ (Հեռուից զանգի ձայն է լսւում)։ Բէյնբախում զանգահարում են։ Հաղար հինգ հարիւր մարդ, կարծես աշխարհիս վերջն է։ Ուղղակի մարդ սարսափում է։

Ծ. Հիլզէ. Մի՞թէ նրանք իսկապէս Բիլաու կգան։

Ֆելզշեր Ըմիդտ. Դէհ, իհարկէ, իհարկէ! ես հէնց ուղղակի ամբոխի միջից եմ անցել. ափսոս, որ ես չիջայ և ամէն մէկին մի մի պարաշոկ կտայի։ Այնպէս են գնում միմիանց ետևից, ինչպէս մի սարը միւսի ետևից, և այնպիսի երգ են երգում, որ մարդու ամբողջ սիրտը տակն ու վրայ էր լինում. զզուանք է գալիս։ Իմ կառապանս, Ֆրիդրիխը, կնոջ նման գոլում էր, նստած տեղը։ Հարկաւոր էր մի արագ գցել։ Խօստովանք լինի, չէի ցանկանալ գործարանատէր լինել, թէկուզ հէնց բեռինի անապատներով էլ ամբողջ օրը շրջէի։ (Հեռ-

ւում երգի ձայն է լսւում)։ Մէկ լսեցէք, կարծես նաքած պրդընձի վրայ թմբկահարելիս լինէին։ Դէհ, տղերք, ո՞վ գիտէ, հինգրոպէ չքաշի մինչև նրանց այստեղ գալը։ Սակայն մնաք բարև բարի մարդիկ, յիմարութիւններ չանէք. նրանց ետևից հէնց գինւորներն էլ կհասնեն։ Խելքներդ չկորցնէք, Պետերսվալդաւցիները, խօ գլխները կորցրել են։ (Մօտից զանգի ձայն է լսւում)։ Տէր ողորմեա, մեզանում էլ սկսեցին զանգահարել, երևի ժողովուրդը բոլորովին խելագարուել է։ (Բարձրանում է վերևի յարկը)։

Գոտլիբ. վերադառնում է, դեռ նախասենեակում հազիւ շընչելով)։Տեսայ, անձամբ տեսայ! (Նախասենեակում մի կնոջ)։ Նրանք այստեղ են, մօրաքոյր, այստեղ են։ (Դրան մէջ)։ Այստեղ են, նրանք,այ մարդ այստեղ են! զաղանակներով, կեռերով, ցցերով, արդէն վերի Դիտրիխին հասան, այնտեղ աղմուկ են անում։ Կարծեմ նրանց այնտեղ փող են բաժանում Տէր իմ Աստուած, ինչ կլինի արդեօք, մտածելն անգամ սարսափելի է։ Իսկ ամբոխը, որքան ժողովուրդ է, հէնց որ ցրուեցին ամէն կողմը դրողը տանի, այն ժամանակ մեր գործարանատէրերի հալը լաւ չի!

Ծ. Հիլդէ Ինչու, դու այդպէս վազում ես, այնքան կրվազես, որ վերջը քո ցաւի հետ նորից անկողին կնկնես և կսկսես տանջուել։

Գոտլիբ. (Գրէթէ ուրախ յուզմունքով)։ Ինչպէս չվազէի, ուրիշ կերպ նրանք ինձ չէին էլ բաց թողնիլ։ Նրանք առանց այդ էլ բղաւում էին, որ ես նրանց հետ գնայի։ Կնքահայր Բաումերան էլ նրանց հետ է. ինձ ասում էր, գնա հինգ դրրոշ ստացիր, չէ՞ որ դու էլ մեզ նման չքաւոր ես։ Մինչև անգամ ասում էր, հօրդ էլ ասա... որպէսզի ձեզ էլ ասեմ հայրիկ, իբր թէ եկէք դուք էլ մեզ հետ. գործարանատէրերից նրանց արիւնարբութեանը վրէժխնդիր լինենք։ (Տաքանալով)։ Ասում էր իբր թէ այժմ ուրիշ ժամանակներ կրսկրսուեն։ Այժմ ուրիշ տեսակ կերթայ ջուլհակների գործը։ Որ իբր թէ հարկաւոր է միասին հաւաքուել մեզ ամենքիս

և խորհրդակցելով գործը տանել։ Թէ մենք կամենում ենք, որ կիւրակի օրերը մեզ ամեն մէկիս կէս ֆունտ միս հասնի, իսկ մնացած օրերը կաղամբով կալբասայ։ Այն ժամանակ ասում էր նա, դու գէմքով էլ կփոխուես։

Ծ. Հիլդէ. (Զսպուած զայրոյթով)։ Եւ այդ բոլորը քո կնքահայրն է ասում, և նա քեզ դէպի այդպիսի ոճրագործութիւն է հրապուրում։ Ո՛չ, Գոտլիբ, դու հեռու կաց դրրանից։ Այս գործը առանց սատանայի չէ։ Այստեղ ինքը սատանան է նրանց խաղացնում։

Լուիզա. (Սարսափահար եղած, տաքանալով)։ Այո, այո Գոտլիբ, վառարանը բարձրացիր, շերեփը ձեռքդ առ և թանի ամանն էլ ծնկներիդ դիր, դեռ կնոջ շոր էլ հագիր և աղօթք արա, որ դրանով հօրդ ուրախացնես։—Այս տղամարդին նայեցէք։ (Նախասենեակի ժողովրդի մէջ ծիծաղ)։

Ծ. Հիլդէ. (Դողալով զսպած բարկութիւնից)։ Իսկ դու բարի ամուսին ես կամենում կոչուել։ Ահա քեզ ես ինչ կասեմ։ Դու կամենում ես մայր լինել, այդպիսի անամօթ լեզուով, դու քո աղջկան կարդացնել ես ուզում, իսկ ամուսնուդ այդպիսի եղեռնագործութիւններ ու անասելի բաներ անել ես սովորեցնում։

Լուիզա. (Բարկացած)։ Դէ՛հ, սկսեցէք ձեր քարոզները, ու կեղծ բարեպաշտութիւնը... Երևի այդ բոլորից դեռ ոչ մի երեխայ չի կշտացել։ Այդ չորս երեխաներն էլ երևի ձեզ մօտ ցեխի ու ցնցոտների մէջ էին թափուած։ Ոչ մի մաքուր փոխնորդի շոր չի եղել։ Իսկ ես կամենում եմ իսկական մայր կոչուել, եթէ բանը դրան հասաւ, և թող քեզ էլ յայտնի լինի, որ հէնց ես էլ դրանց համար եմ կամենում, որ բոլոր այդ գործարանատէրերը դժոխքի արժանանան, թող ժանտախտը նրանց տանի։ Ես մայր եմ... Իսկապէս ինչպէս պահպանես երեխադ! հէնց որքան տանջանքների ես հանդիպում, երբ մի ալդպիսի թշուառականը աշխարհ է գալիս, մինչև որ մահը նրան կխղճայ։ Ձեզ համար երևի այդ բոլորը ոչ մի նշանակութիւն չունի, դուք ձեզ համար աղօթում էիք ու

երգում, պատահել է որ ես սաղ ոտներս տրնաթաթախ եմ արել, մինչև որ մի աման թան եմ ճարել! Իսկ քանի քանի գիշերներ դլուխս կոտրել եմ, մտածելով թէ ինչպէս անեմ, որ երեխայիս մահից ազատեմ: Ի՞նչ մեղք է գործել նա խեղը, ինչի՞ համար են այդ մահու չափ տանջանքները: Իսկ այնտեղ Դիտրիխի մօտ, ընդհակառակը երեխայոցը գինու մէջ լողացնում են և կաթի մէջ լանում: Ոչ, ոչ, թէ այստեղ սկսուի—թէկուզ տասը ձի լծիր, ինձ չես կանդնեցնիլ: Դուք այդպէս էլ իմացէք, եթէ նրանք Դիտրիխի դէմ դուրս գան, ես առաջինը կլինեմ նրանց մէջ—և Աստուած չանէ, թէ մէկը մտածի ինձ կանգնեցնել: Բաւական է ինչ որ համբերել եմ:

Պ. Հիլդէ. Ես տեսնում եմ, դու արդէն կորած մարդ ես, քեզ ազատելու հնար չկայ:

Լուիզա. (Կատաղութեամբ): Այդ ձեզ չկայ հնար ազատելու, դուք փալասներ էք, փալասներ, և ոչ թէ տղամարդիկ: Ես թքել անգամ չէի կամենում ձեզ վրայ, դուք դրան արժանի չէք: Դուք վախկոտներ էք, երեխայական խաղալիքներից էլ կվախենաք, յիմարներ, ձեզ որ ծեծեն, դրա համար էլ շնորհակալութիւն կանէք: Նրանք ձեր արիւնը այնպէս ծծել են, որ կարմրել էլ չէք կարողանում, պէտք է վերցնել և մարակով ձեզ խելքի բերել: (Արագ դուրս է գնում):

(Ընդհանուր յուզուած լռութիւն):

Պ. Հիլդէ. Այդ ի՞նչ է պատահել մեր Լուիզին, ծերուկ:

Ծ. Հիլդէ. Ոչինչ, պառաւ, ի՞նչ կարող է պատահել:

Պ. Հիլդէ. Բայց, ծերուկ, ինձ այդպէս թուաց, թէ իսկապէս զանգահարում են:

Ծ. Հիլդէ. Երևի մէկին թաղում են պառաւ:

Պ. Հիլդէ. Իսկ ես, ահա, քարշ եմ գալիս: Ապա ինչու համար մահը ինձ էլ չի մօտենում, ծերուկ!

(Պաուզա):

Ծ. Հիլդէ. (Գործը թողնում է, ուղղում և հանդիսաւոր կերպով արտասանում է): Գոտլիբ, քո կինը այնպիսի բաներ ասաց... տես, Գոտլիբ! (կուրծքը բացում է): Այստեղ մի

մատնոցի չափ գնդակ էր նստած: Իսկ թէ թևս որտեղ եմ թողել այդ մասին թագաւորին յայտնի է: Մկները չեն կերել նրան: (Շրջում է յետ ու առաջ): Քո կնոջ դեռ անունն էլ չկար, երբ ես հայրենիքի համար արիւն էի թափում: Թող նա իր համար բղաւի որքան կամենայ: Ես դրա վրայ թքել եմ: Վախենա՞լ... որ ե՞ս վախենամ. ո՞ւմնից վախենամ, ասա ի սէր Աստուծոյ: Մի բանի զինուորներից, որոնք ապստամբների եռևից կգան, Տէր ողորմեա, շատ հարկաւոր է! կարծես մեծ բան է, որ մի քիչ մէջքս թուլացել է—թէ մի այդպէս բան լինի, ոսկորներս երկաթ կդառնան: Մի որևէ զինուորի հետ, գիւ կարող կլինեմ կռուել: Իսկ եթէ մինչև անգամ դժուար էլ լինի, ես ուրախութեամբ ահա թէ ինչպէս ուրախութեամբ միւս աշխարհ կերթամ: Երբ մահուան ժամը կգայ, ես նրան երկար չեմ սպասել տալ: Աւելի լաւ է այսօր, քան վաղը: Կարծես շատ բան կայ ափսոսալու! Մի՞թէ մեզ նմանները այստեղ մի որևէ բան են թողնում: Այս տանջուած ոսկորների համար պիտի ափսոսանք: Մեր տանջանքն ու տաժանակիր աշխատանքն է, մեր կեանքը, մի՞թէ դրանից դժուար է բաժանուելը: Բայց այդ ամենից յետոյ, Գոտլիբ, դրանից յետոյ, մեզ մի բան է սպասում: Եթէ այդ կորցրինք, այն ժամանակ մեր ամէն բանին վերջ կլինի:

Գոտլիբ. Այդ դեռ Աստուած գիտէ, ինչ կլինի այնտեղ... երբ մարդ մեռնում է... Ով է տեսել, ինչ կայ այնտեղ:

Ծ. Հիլդէ. Իսկ ես քեզ կասեմ Գոտլիբ, մի կասկածիր, այդ մրակ բանի մասին, որ մնում է մեզ խեղճերիս, համար: Ապա էլ ինչո՞ւ համար եմ ես մէջքս կռացրել, և քառասուն տարի, եթէ աւելի չասենք, այս տաժանակիր աշխատանքի միջին և հանդարտ նայել, թէ ինչպէս ընդհակառակը միւսը ճոխութեան և փառքի մէջ լողում է, և իմ քաղցից ու տանջանքից ոսկի է պատրաստում իւր համար: Ինչո՞ւ համար. նրա համար, որ ես յոյս ունեմ: Զնայած իմ բոլոր կարիքներիս, ես էլի մի բան ունեմ: (Լուսամուտի վրայ ցոյց տալով): Քո բաժինը այստեղ է, իսկ իմը միւս աշխարհում, ահա թէ ես

ինչպէս եմ մտածել։ Եւ թէկուզ ինձ չորս մաս էլ անեն, ես իմ ասածիս հաստատ կմնամ։ Մեզ այդպէս է խոստացած, դատաստան կըլինի, բայց մենք չենք լինի դատաւորները։

Ձայն. (Լուսամուտից)։ Ջուլհակներ դուրս եկէք!

Ծ. Հիլդէ. Իմ կարծիքով ինչ ուզում էք արէք։ (Նստում է ջուլհակների առաջ)։ Ես ստիպուած կլինեմ թողնել ձեզ։

Գոտլիբ. (Կարճատև տատանումից յետոյ)։ Ես կերթամ բանելու։ Թող ինչ ուզում է լինի։ (Հեռանում է. բոլորովին մօտից լսւում է ջուլհակների երգը. հարիւրաւոր ձայներ են երգում. երգը հնչում է, ինչպէս խուլ միաձայն գանգատ)։

Տնկեցների ձայները. (Նախասենեակում)։ «Տէր ողորմեա, կարծես մրջիւններ են, գալիս են ու գալիս»—և որտեղից են ժողովուել այդքան ջուլհակները» «մի, հրիր, թող որ ես էլ նայեմ!» —«Տես առաջինին, ինչ ահագին է, կարծես մի աշտարակ է»—«ինչպէս վխտում են»։

Հորնիգ. (Մօտենում է նախասենեակում գտնուող մարդկերանց)։ Ահա թէ որտեղ է ներկայացումը! ամէն օր այս բանը չես տեսնիլ։ Այ, ինչ լաւ կլինէր, եթէ գնայիք վերի Դիտրիխի մօտ էլ, նրանք այնտեղ էլ գործեր են կատարել։ Ոչ տուն, ոչ գործարան, ոչ դինու մառան, ոչ մի բան չեն թողել իւր տեղը։ Ինչ գինիներ եղել են, բոլորը խմել են, և բաց անելու ժամանակ էլ չունէին նրանք. մէկ, երկու, երեք, և ահա շշի գլուխը չկայ։ Ջարդուած շշերի կտորտանքով արնոտ են երեսները, այդ նրանց համար ոչ մի նշանակութիւն չունի։ Միւսները խոզերի նման արնաթաթախ են վազում, այժմ, երևի այստեղի Դիտրիխին ծեռք կառնեն։

(Ամբոխի երգը դադարում է)։

Տնկեցների ձայներ. Նրանք արտաքուստ, այնքան էլ վատ տեսք չունեն։

Հորնիգ. Լաւ է լաւ, այ, սպասեցէք! Այժմ նրանք մի-այն գնում են թէ ինչպէս սկսեն գործը։ Տես, տես թէ ինչպէս են նայում տան վրայ։ Տեսնում ես այ, էն փոքրիկ հաստլիկ մարդը, դոյը ծեռքին, նա Պետրսվալդաուի դարբինն է,

այնպիսի մի ճարպիկն է, որ... ամենապինդ դռները կընդունի է անում! Եթէ գործարանատէրը ձեռքն ընկնի, այն ժամանակ ամէն բան վերջացաւ։

Տնկեցների ձայներ. «Այ քեզ բան»! «Քարով ուղղակի լուսամուտին խփեցին»—«այժմ երևի ծեր Դիտրիխի հալը վատ է» «Ինչ որ ցանկ են կախել դուրսը» «ցանկը կախեցին» —Ի՞նչ է գրուած, նրա վերայ»—«Դու կարդալ կարո՞ղ ես»— «էլ ինչացու կլինէի եթէ կարդալ էլ չիմանայի». «Ապա կարդա»—«Դուք, բո՞ղ—ըդ, բաւա—բարու—թիւն կստանաք, դուք բոլորդ բաւարարութիւն կստանաք»։

Հորնիգ. Այդ նա իզուր է կախ արել, դա ոչ մի նշանակութիւն չունի! Մերոնց խելքը գլխին է։ Նրանք գործարանի վրայ են աչք դրել, ուզում են մեքենաները կոտրատել։ Չէ՞ որ այդ մեքենաներն են պատճառը, որ ձեռագործ մանուածքը ընկնում է։ Դա մինչև անգամ կոյրն էլ է տեսնում։ Ոչ, ոչ այսօր նրանք իրանց կապը կարել են, նրանց ոչ նախագահը, ոչ ոստիկանապետը, խելքի չեն բերիլ, ուր մնաց ցանկը։ Ով է տեսել թէ ինչպէս են նրանք դատաստան կատարում, նա կհասկանայ թէ բանը ինչումն է։

Տնկեցների ձայներ. «Ինչ ահագին բազմութիւն, ինչ ահագին բազմութիւն»... «Սրանք ի՞նչ են ուզում»—(շտապով)։ «Կամուրջից անցնում են»—(վախեցած) «մեր կողմն են անցնում»—(շատ զարմացած և վախեցած) «Մեզ մօտ են գալիս, մեզ մօտ են գալիս»—«ջուլհակներին աներից դուրս են կանչում»—(Բոլորը ցրւում են, նախասենեակը դատարկւում է, ապստամբողների խումբը ցեխոտ, փոշոտ, օղիից և լարուած զրուցիւնից կարմրած երեսներով կատաղած, գրգռուած, ներս են թափւում նախասենեակը ազմուկով «Ջուլհակներ դուրս եկէք»! և ցրւում են միւս սենեակները. ծեր ջուլհակի սենեակը մտնում են Բեկկերը և Հելգէն և մի քանի երիտասարդ ջուլհակներ, զինաւորուած դագանակներով, և ցցերով։ Ծեր Հելգէի ճանաչելով մի փոքր շփոթւում են և կանգնում են)։

Բեկկեր. Բաւական է, ինչքան տանը նստեցիք, Հիլդէ պապիկ։

Առաջ. երիտ. ջուլհակ. Սրանից յետոյ էլ քաղցած փորով չէք պարկիլ քնելու։

Երկր. երիտ. ջուլհակ. Այժմ ջուլհակը սենեակ էլ կունենայ ապրելու, շապիկ էլ կունենայ հագնելու։

Ծ. Հիլդէ. Այդ ո՞ր սատանան ձեզ այս կողմը քշեց դաղանակներով ու կացիններով։

Բեկկեր. Ա՜յ, մենք սրանց Դիտրիխի մէջքին կկոտրատենք։

Երկ. երիտ. ջուլհակ. Կվառենք ու կցցենք գործարանատէրերի բոզաղը որ տեսնեն, թէ քաղցից ինչպէս են այրւում մարդիկ։

Երրորդ երիտ. ջուլհակ. Գնանք մեզ հետ, Հիլդէ ծերուկ, մենք նրանց չենք խնայի։

Երկր. երիտ. ջուլհակ. Մեզ կարծեմ ոչ ոք չի խղճացել։ Այժմ մենք ինքներս դրանց դատաստանը կանենք։

Ծ. Բաումերտ. (Մտնում է օրօրւելով և մորթած աքաղաղը ձեռքին։ Գրկաբաց)։ Եղբայրներ!... չէ՞ որ մենք ամենքս եղբայրներ ենք, թողէք, ես ձեզ գրկեմ, եղբայրներ!

(Ծիծաղ)։

Ծ. Հիլդէ. Ինչպէս տեսնում եմ, լաւ ես Վիլհելմ, էլ պակաս տեղ չունես!

Ծ. Բաումերտ. Այդ դո՞ւ ես Գուստաւ, (զգացուած), Գուստաւ, սիրելիս, քաղցածս թող քեզ գրկեմ։

Ծ. Հիլդէ. (Մրթմրթալով)։ Ինձ հանգիստ թող։

Ծ. Բաումերտ. Ճշմարիտ եմ ասում, Գուստաւ, մարդուս բախտաւորութիւն է հարկաւոր։ Ինձ նայիր, Գուստաւ։ Ես ի՞նչպէս եմ, մարդուս բախտաւորութիւն է հարկաւոր։ Մի՞թէ ես կոմսի նման չեմ։ (Փորին ձեռքով խփելով)։ Ապա զուշակիր, ի՞նչ կայ փորումս, ինչ որ ամենալաւ աղնուական կերակուր կայ, նա է փորումս։ Մարդուս բախտաւորութիւն

է հարկաւոր, իսկ յետոյ նա Շամպանեայ էլ ձեռք կբերի, և տապակած նապաստակ էլ։

Այ, թէ ինչ կասեմ. մենք հարուածը տուել ենք, այժմ լաւ հիւրասիրութիւն է հարկաւոր։

Բոլորը. (Մէկը միւսի խօսքը կարելով)։ Հիւրասիրել է հարկաւոր, ճիշտ է,—կէցցէ!

Ծ. Բաումերտ. Իսկ երբ առաջին լաւ կտորը կծում ես, կտեսնես, որ ճաշակդ զարդանում է։ Ֆու տէր Աստուած—եռանդը այնպէս մարդու մէջ խաղում է, կարծես եզան մէջ լինի։ Ամէն երակներից այնպէս անցնում է արիւնդ, որ չը-գիտես, թէ որ կողմը կը խփես։ Գրողը տանի, այ ուրախութիւն!

Եզեր. (Դռան մէջ, հին թրով զինուորուած)։ Հրաշալի յարձակում գործեցինք։

Բեկկեր. Մենք այդ բանը այժմ լաւ ենք հասկանում, մէկ, երկու, երեք և մենք արդէն տանն ենք։ Իսկ այնտեղ գործը կրակի նման եռում է։ Ամէն բան տրաքում է և գոռում։ Միայն կայծերն են ցայտում, կարծես հնոցի մէջ։

Առաջ. երիտ. ջուլհակ. Բայց լաւ կլինէր, որ մի կրակ անէինք։

Երկ. երիտ. ջուլհակ. Իսկ մենք Բեյենբախ կերթանք, և կայրենք այնտեղի հարուստների տները։

Եզեր. Այդ վատ միտք չէ! Նրանք էլ ոսկէ ածուխներ կժողովեն։

(Ծիծաղ)։

Բեկկեր. Այնտեղից Ֆրէյնրերդ կերթանք, Տրումդրայի մօտ։

Եզեր. Այ լաւ կլինէր, եթէ մենք մինչև գլխաւորները հասնէինք, ես կարդացել եմ, որ բոլոր չարիքը այնտեղից է։

Երկր. երիտ. ջուլհակ. Յետոյ կդառնանք դէպի Բրեսլաւը, բազմութիւնը աւելանում է մեզանում։

Ծ. Բաումերտ. (Հելդէին)։ Գուստաւ, ապա խմիր!

Ծ. Հիլդէ. Ես օղի չեմ խմում։

Ծ. Բաումերտ. Այդ առաջ էր այդպէս, Գուստաւ, այժմ ամէն բան նոր տեսակ կլինի։

Առաջ. երիտ. ջուլհակ. Ո՞վ գիտէ, մէկ էլ երբ կտեսնենք այսպիսի տօն։ (Ծիծաղ)։

Ծ. Հիլդէ. (Անհամբեր)։ Ախ դուք անասուածներ, ինձնից ի՞նչ էք կամենում։

Ծ. Բաումերտ. (Մի փոքր շփոթուած, առանձին քընքշութեամբ)։ Իսկ դու տես, ես քեզ համար աքլար եմ բերել։ Դու նրանից ապուր պատրաստիր պառաւիս համար։

Ծ. Հիլդէ. (Զարմացած, ոչ շատ տխուր)։ Լաւ, դնա պառաւին ասա։

Պ. Հիլդէ. (Որը ուշադրութեամբ ականջ էր դնում, ձեռքը ականջին դնելով, թափահարում է)։ Թողէք ինձ, չեմ կամենում ձեր հաւի ապուրը։

Ծ. Հիլդէ. Դու ճշմարիտ ես պառաւ, ես էլ չեմ կամենում։ Իսկ այսպիսին ամենևին չեմ կամենում... իսկ քեզ Բաումերտ, ահա թէ ինչ կասեմ։ Երբ պառաւները փոքրների նման յիմար բաներ են դուրս տալիս, սատանան ուրախութիւնից ղլխի վերայ է մտնում։ Եւ որպէս զի ձեզ յայտնի լինի ձեր ամենքիդ յայտնի լինի—իմացէք որ ես ձեզ ընկեր չեմ։ Ես ձեզ այստեղ չեմ կանչել, և ճշմարիտն ու խղճով խոստովանած, դուք այստեղ որոնելու բան էլ չունէք։

Զայն. Ով մեզ հետ չէ, նա մեր դէմ է։

Եղեր. (Կոպիտ, սպառնալի կերպով)։ Դու էլ շատ ես այնպէս... լսիր, ծերուկ, մենք հօ զողեր չենք։

Զայն. Մենք քաղցած ենք, ուրիշ ոչինչ։

Առաջ. երիտ. ջուլհակ. Մենք ապրել ենք կամենում և ուրիշ ոչինչ։ Դրա համար էլ մենք կարեցինք այն թոկը, որով կախուած էինք։

Եղեր. Եւ այդ այդպէս էլ պիտի լինէր։ (Բռունցքը ծերուկին ծռեցնելով)։ Մի խօսք էլ ասա, տես թէ ինչպէս կհասցնեմ։

Բեկկեր. Դէհ, բաւական է, բաւական է, ծերուկին թող,

ծերունի Հիլդէ, մենք այսպէս ենք մտածում, աւելի լաւ է մեռնել, քան թէ առաջուայ նման ապրել։

Ծ. Հիլդէ. Իսկ ես 60 տարի է, այդպէս չե՞մ ապրում։

Բեկկեր. Միենոյն է, այժմ ամէն բան, պիտի նոր ձևով լինի։

Ծ. Հիլդէ. Երբէք, յաւիտեան։ (Ոչ մի դէպքում)։

Բեկկեր. Ինչ որ յօժար կամքով մեզ չեն տալ, ուժով կվերցնենք։

Ծ. Հիլդէ. Ուժով։ (Ծիծաղելով)։ Աւելի շուտով դուք ամենքդ այստեղ կպարկէք։ Նրանք ձեզ ցոյց կտան, թէ որտեղ է ոյժը։ Այ, միայն սպասիր փոքրիկս!

Եղեր. Դու այդ զինուորների մասի՞ն ես խօսում։ Մենք ինքներս էլ զինուոր ենք եղել... մի քանի գնդերի հետ, լաւ ղլուխ կդնենք։

Ծ. Հիլդէ. Լեզուով—այդ ես հաւատում եմ, և եթէ մինչև անդամ երկու գնդի հետ էլ ղլուխ դնէք, նրանց տեղը տասը կուղարկեն։

Զայն. (Լուսամուտից)։ Զինուորները դալիս են, զգուշացէք! (Ցանկարծ ամենքը լռում են։ Մի առ ժամանակ լսւում է միայն ֆլէյտի և թմբկահարութեան ձայն։ Այդ ընդհանուր լռութեան ժամանակ, լսւում է կարճ բռնադրոսիկ ձայն «Գրողը տանի! քանի որ ոչ ոք չկայ լաւ է փախչեմ»—«ընդհանուր ծիծաղ)։

Բեկկեր. Այդ ո՞վ է պատրաստում փախչելու։ Այդ ո՞վ ասաց։

Եղեր. Ով փախեցաւ ինչ որ քոսոտ սաղուարտներից, ես ձեզ կդեկավարեմ։ Ես ինքս ծառայել եմ, գիտեմ, ես այդ բաները։

Ծ. Հիլդէ. Իսկ ինչ պիտի արձակէք դագանակները։

Առաջ. երիտ. ջուլհակ. Թողէք դուք այդ ալեորին։ Նրա վերնատունը դատարկ է։

Երկ. երիտ. ջուլհակ. Ծերուկը մի փոքր այնպէս!...

Դոտլիբ. (Անենկատելի երևալով ապստամբողների մէջ,

բռնում է խոսողի օձիքից)։ Դու Եղերի հետ այդպէս ես խոսում։

Առաջ. երիտ. ջուլհակ. Հեռացիր, ես ոչ մի վատ բան չասացի։

Ծ. Հիլդէ. (Մէջ մտնելով)։ Թող դուրս տայ, ձեռք մի տար նորան Գոտլիբ, շուտով նա ինքն էլ կհասկանայ, թէ այսօր ում գլուխն է դատարկ, իրանը թէ իմը։

Բեկկեր. Մեզ հետ գալիս ե՞ս, թէ ոչ, Գոտլիբ։

Ծ. Հիլդէ. Այդպիսի բան չի անիլ։

Լուիզա. (Նախասենեակը մտնելով բղաւում է)։ Դուք ի՞նչ էք, այդտեղ կանգնել, միայն ժամանակ էք կորցնում խոնարհի հետ։ Գնացէք հրապարակ! Գնացէք հրապարակ։ Կնքահայր Բաումերտ, շուտ արէք, Մայորը ձի հեծած ժողովրդի հետ խոսում է... որպէս զի տները քաշուեն։ Եթէ դուք իսկոյն և եթ չգնաք մեր բանը բուրթ է։

Եղեր. (Հեռանալով)։ Խօսք չկայ, ամուսին շատ քաջն է!

Լուիզա. Ինչ ամուսին! ես ոչ մի ամուսին չունեմ!

(Նախասենեակում երգում են)։

Եղել է չի եղել մի փոքրիկ մարդ,
Էխ—մա! Էխ—մա!
Նա ցանկացել է մեծ կին։
Էխ—մա! Էխ—մա!

Ծ. Վիտտիս. (Վերի յարկից իջնելով, դոյլը ձեռքին կամենում է գնալ, բայց կանգնում է մի րոպէ նախասենեակում)։ Ցառաջ! Ով չի կամենում դարշելի լինել! կէցցէ! (Դուրս են վազում մի քանի մարդիկ, որոնց թւում Եղեր և Լուիզան, նրան հետևում են! «կէցցէ» բղաւելով)։

Բեկկեր. Դէհ, մնաս բարև, Հիլդէ պապիկ։ Մենք քեզ հետ դեռ կխօսենք։ (Կամենում է գնալ)։

Ծ. Հիլդէ. Հազիւ թէ! իմ կեանքս հինգ տարի չի քաշիլ, իսկ դրանից առաջ դու չես դուրս գալ։

Բեկկեր. (Զարմացած, կանգնում է)։ Ո՞րտեղից չեմ դուրս գալ, Հիլդէ պապիկ։

Ծ. Հիլդէ. Բացի բանտից էլ ուրիշ որտեղից։

Բեկկեր. (Վայրենի ծիծաղով)։ Այդ ինձ համար շատ լաւ կլինէր! Այնտեղ գոնէ, հաց շատ կտան, Հիլդէ պապիկ։ (Հեռանում է)։

Ծ. Բաումերտ. (Նստարանի վրայ նստած, երկար մտածողութեան, մէջ ընկած, այժմ բարձրանում է)։ Ճիշտ է Գուստաւ, ես մի՞ փոքր խմել եմ, բայց խելքս գլխիս է։ Այդ բանի համար դու քո կարծիքն ունես, ես իմը. իմ կարծիքով Բեկկերը իրաւացի է. թող գործը հէնց շղթաներով էլ վերջանայ, բանտումը աւելի լաւ է, քան տանը։ Այնտեղ քեզ համար բոլորը պատրաստ է, և ուսերիդ վրայ բեռը չկայ։ Ես ուրախ էլ կլինէի չհետևել նրանց, Գուստաւ, բայց տեսնում ե՞ս, հարկաւոր է, որ մարդ գոնէ մի րոպէ հանգիստ շունչ քաշի։ (Հանգիստ դէպի դուռը ուղղուելով)։ Մնաս բարով, Գուստաւ, իսկ եթէ մի բան պատահի, աղօթիր ինձ համար, լսում ե՞ս։ (Հեռանում է)։ Ապստամբողներից բեմի վրայ ոչ ոք չի մնում։ Նախասենեակը նորից լցւում է հետաքրքիր տնկեցներով. Ծ. Հիլդէն զբաղուած է իւր դաղդեահի թելեր բացելով։ Գոտլիբը վերցնում է վառարանի եռևից կացինը, և անգիտակցաբար փորձում ծայրը։ Երկուսն էլ, թէ ծերուկը, թէ Գոտլիբը յուզուած են, և լուռ։ Փողոցից լսւում են մեծ բազմութեան ժվժվոց ժխոր և ձայներ)։

Պ. Հիլդէ. Ասա, խնդրեմ, ծերուկ, ինչո՞ւ յատակը այսպէս շարժւում է։ Այս ի՞նչ է կատարւում այստեղ։ (Ընդմիջում)։

Ծ. Հիլդէ. Գոտլիբ!

Գոտլիբ. Ի՞նչ ես կամենում։

Ծ. Հիլդէ. Կացինը վեր տիր։

Գոտլիբ. Իսկ փայտը ո՞վ կկարի այն ժամանակ։ (Կացինը դնում է վառարանի մօտ)։

(Ընդմիջում)։

Ծ. Հիլդէ. Գոտլիբ! Դու լսիր, երբ հայրդ քեզ ասում է։
Ձայն. (Լուսամուտի տակից երգում է)։

Դու, փոքրիկ տանը նստիր,
Էխ—մա, էխ—մա.
Ամսեներն ու թեփշիները լուանալու
Էխ—մա, էխ—մա—(Լռում է)։

Գոտլիբ. (Վեր է թռչում և բռունցքով սպառնալով բղաւում է պատուհանից)։ Գարշելի։ Դու մի դայրացնիլ!... (Շատ հրացանածգութեան ձայներ է լսւում)։

Պ. Հիլդէ. (Վախեցած)։ Տէր մեր Յիսուս Քրիստոս կայծակ էր թէ ի՞նչ։

Ծ. Հիլդէ. (Ակամայ կռները խաչելով)։ Տէր երկնային Աստուած, պահպանիր խեղճ ջուլհակներին, պահպանիր իմ խեղճ եղբօրդը։

(Մի փոքր ժամանակ լռութիւն է տիրում)։

Ծ. Հիլդէ. (Ինքն իրեն ցնցուելով)։ Թափւում է, արիւն է թափւում։

Գոտլիբ. (Այն միջոցին, երբ հրացանածգութեան ձայն է լսւում, տեղից վեր է թռչում և սարսափով վերցրնում է կացինը, դոյնը նետելով, հապիւ իրան զսպելով ներքին յուզմունքից)։ Ա՞յժմ էլ նստիմ ձեռքերս ծալած։

Երկր. երիտ. ջուլհակ. (Բղաւում է նախասենեակից դէպի սենեակը)։ Հիլդէ պապիկ, ա՛ Հիլդէ պապիկ, լուսամուտից հեռացիր, մեզ մօտ վերև գնդակներ ներս ընկաւ պատուհանից (անյայտանում է)։

Միլիսեն. (Գլուխը պատուհանից հանելով ծիծաղում է)։ Պապիկ, պապիկ, նրանք հրացաններ են արձակում։ Մի քանիսներն արդէն ընկան, մէկը բզզանի նման պտոյտ է գալիս, միւսը վիզը ծռած ծտի նման ցնցւում է, ա՛խ!... ա՛խ!... ինչքան արիւն է հոսում... (Անյայտանում է)։

Կին ջուլհակ. Մի քանիսներին արդէն սպանել են։

Ծ. ջուլհակ. (Նախասենեակում)։ Ա՛յ, սպասեցէք, հիմայ նրանք ցոյց կտան զինուորներին!

Երկր. ջուլհակ. (Անհամբեր)։ Նայեցէք, կանանցը, կանանցը, նրանք կրթքոտեն զինուորների երեսին, պինդ կաց!

(Աւիններ)։

Կին ջուլհակ. (Դռան մէջ բղաւում է)։ Ձեր կնոջը նայեցէք, Գոտլիբ, նա քեզանից քաջ է! Նայիր հրացանների սինների առաջ այնպէս է վազում, կարծես պարում է երաժշտութեամբ։ (Զորս մարդ նախասենեակից անց են կացնում վիրաւորուածին։ Խաղաղութիւն է տիրում։ Լսւում է պարզ ձայն. «Սա Ուլբրիխից եկած ջուլհակ է»)!

Ձայն. (Նորից, մի քանի վայրկեանից յետոյ)։ Նրա բանը վերջացաւ... Գնդակը ուղղակի ականջին է դիպել։ (Լսւում են փայտի սանդուխքներից վերև բարձրացող ոտների ձայներ։ Փողոցում յանկարծակի լսւում են. «կէցցէ! կէցցէ!)։

Ձայն նախասեն. «Այդ քարերը ոռտեղից են նրանց մօտ»— Դէհ, այժմ ով կարող է թող փախչի»!— «Նոր խրճուղիով են անցնում»... «Այժմ մնաք բարև զինուորներ»... Քարերը կարկտի պէս են թափւում». (Փողոցում լսւում է սարսափելի աղմուկ և սարսափելի մռնչոց, որը մօտենում է տանը. սարսափելի աղմուկով դուռը փակում են)։

Ձայներ նախասեն. Նորից լսւում են հրացաններ։ «Այս բոպէիս դարձեալ կարձակեն»! Հիլդէ պապիկ, դէհ, հեռացիր է դու այդ լուսամուտից»։

Գոտլիբ. (Դուրս է վազում, կացինը ձեռքին)։ Ի՞նչ, ի՞նչ, ի՞նչ, մենք կատաղած շնե՞ր ենք, ի՞նչ է. հացի տեղ բարութ և արճի՞ճ պիտի ուտենք, ի՞նչ է։ (Կացինը ձեռքին մի բոպէ դանդաղելով դառնում է ծերուկին)։ Ի՞նչ, մի՞թէ կանգնեմ նայեմ թէ ինչպէս կնոջս կսպանե՞ն։ Ոչ, այդպիսի բան չի լինիլ։ (Դուրս վազելով)։ Զգուշացիր, այժմ բաց չեմ թողիլ!

Ծ. Հիլդէ. Գոտլիբ, Գոտլիբ!

Պ. Հիլդէ. Ո՞ւր է Գոտլի՞բը։

Ծ. Հիլդէ. Սատանի մօտ է։

Ձայներ նախասենեակից. Հեռացէք պատուհանից, է, Հիլդէ, պապիկ!

Ծ. Հիլդէ. Ե՞ս... երբէք, թէկուզ հէնց բոլորդ էլ այդտեղ խելագարուէք! (Դառնալով պ. Հիլդէին, աճող ոգևորութեամբ)։ Իմ երկնաւոր հայրը, ինձ այս տեղը ցոյց տուեց։ Այնպէս չէ՞, պառաւ! Մենք այստեղ էլ կմնանք, և այնպէս կվարուենք, ինչպէս մեր պարտքն է պահանջում, թէկուզ ամբողջ աշխարհը տակն ու վրայ լինի։

(Սկսում է իւր գործը)։

(Նորից հրացանաձգութեան ձայներ։ Ծ. Հիլդէն, մահուան վէրքը սառնալով ուղղւում է, յետոյ ընկնում է երեսով դազգեահի վրայ։ Նոյն րոպէին բարձր «կէցցէ»-ի ձայն է լսւում։ Այդ աղմուկով նախասենեակում գտնւող խուժանը փողոց է վազում։ Պ. Հիլդէն, մի քանի անգամ հարցաքննական աղաղակում է)։ Ծերուկ, ա՛ ծերուկ, քեզ ի՞նչ է պատահել. (Անվերջ «կէցցէ»-ների ձայնը աւելի ու աւելի հեռանում է, յանկարծ շտապով ներս է մտնում սենեակը Միլխենը)։

Միլխեն. Պապիկ, պապիկ, նրանք գինւորներին գիւղից դուրս են անում! Նրանք Դիարբեխի տունն էլ են առել, և այնտեղ էլ այնպէս են անում ինչպէս Դրէյսիզերի մօտ, պապիկ։ (Երեխան վախենում է, ուշադրութեամբ զննում է և մատը բերանը դնելով զգոյշ մօտենում է սպանուածին)։ Պապիկ!

Պ. Հիլդէ. Դէ՞հ, ծերուկ, վերջապէս մի խօսք ասա՛, թէ չէ իսկապէս ես սարսափում եմ։

ՎԱՐԱԳՈՅՐ
ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ՀԱԽՍՀ
Գ.Գ.Ռ.Ա. Պետական Գրադարան
7/XI 1922
Ա. ՄԱՍԻՍՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ՎԵՐՋ

ԳԻՆՆ Է 40 ԿՈՊ.

«Ազգային գրադարան»
NL0171131